ԵԱՀԿ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

# Վերջնական Զեկույց
# Հայաստանում »Դատավարությունների դիտարկում« ծրագիր
# (Ապրիլ 2008-Հուլիս 2009)

Վարշավա
8 մարտի 2010

# Բովանդակություն

**Հապավումների ցանկ**
**Ամփոփում**
**Ծրագրի նկարագրությունը**
Ծրագրի շրջանակներն ու մեթոդաբանությունը
Ընդհանուր տեղեկություններ

**Գլուխ 1. Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
i. Կալանավորված անձին մինչև դատաքննությունը արգելանքի տակ պահելու մասին որոշումը
ii. Կալանավորման ժամկետի երկարացումը և շարունակվող կալանքի բողոքարկումը
Դ. Եզրահանգումներ

**Գլուխ 2. Հրապարակային դատաքննության իրավունքը**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
i. Դատարանի շենքի մուտք գործելու հնարավորությունը
ii. Տեղեկությունների մատչելիությունը
iii.Նիստերի դահլիճների սարքավորումներն ու հարմարությունները
Դ. Եզրահանգումներ

**Գլուխ 3. Անմեղության կանխավարկածը**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
i.Դատավորների կողմից հնչեցված բացասական մեկնաբանությունները
ii. Անվտանգության միջոցները
Դ. Եզրահանգումներ

**Գլուխ 4. Կողմերի հավասարությունը և ոստիկանության ապացույցների վրա հիմնվելու աստիճանը**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
i. Գործը ներկայացնելու հնարավորությունները
ii. Կողմերի հանդեպ անհավասար վերաբերմունքը
iii. Ոստիկանների ցուցմունքների վրա հիմնվելու աստիճանը
iv. Գրավոր ցուցմունքները և վկաներին հարցաքննելու իրավունքը
Դ. Եզրահանգումներ

**Գլուխ 5. Ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը և ապօրինի ձևով բերված ապացույցի օգտագործման անթույլատրելիությունը**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
i. Խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի և ոստիկանության բռնությունների վերաբերյալ հայտարարությունների հիման վրա քննություն չիրականացնելը
ii. Անթույլատրելի ապացույցները չբացառելը
iii. Վկաներին ճնշելը, ահաբեկելը և այլ միջամտությունները
Դ. Եզրահանգումներ

**Գլուխ 6. Անձամբ կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
i. Իրավաբանական օգնության մատչելիությունը
ii.Պաշտպանություն իրականացնելու բավարար հնարավորություն
iii. Իրավական ներկայացուցչության արդյունավետությունը
Դ. Եզրահանգումներ

**Գլուխ 7. Արագացված դատաքննությունները**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
Դ. Եզրահանգումներ

**Գլուխ 8. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
i. Համաչափությունը, պատշաճ ընթացակարգը և հետևողականությունը
ii.Սանկցիաների կիրառումն ամբաստանյալների և նրանց փաստաբանների նկատմամբ
iii.Սանկցիաների կիրառումը հանրության ներկայացուցիչների նկատմամբ
Դ. Եզրահանգումներ

**Գլուխ 9. Դատավորների անկողմնակալությունը և մասնագիտական վարքագիծը**
Ա. Ներպետական օրենսդրություն
Բ.Միջազգային չափանիշներ
Գ. Հետևություններ և վերլուծություն
Դ. Եզրահանգումներ

**Կոնսոլիդացված առաջարկություններ**
Օրենսդիրներին և քաղաքականություն մշակողներին
Դատական իշխանություններին
Դատական դասընթացներ և վերապատրաստումներ իրականացնողներին
Արդարադատության նախարարությանը
Իրավապահ մարմիններին

Փաստաբանների պալատին/Փաստաբանների միությանը

**Հավելված 1. Տեղեկատվություն մոնիթորինգի ենթարկված քրեական գործերի վերաբերյալ**

**Հավելված 2. ԵԱՀԿ Մասնակից պետությունների ընտրված պարտավորությունները**

# Հապավումների Ցանկ

| | |
|---|---|
| ՔՕ | Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրք |
| ՔԴՕ | Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգիրք |
| ՄԻԵԿ | Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական Կոնվենցիա |
| ՄԻԵԴ | Մարդու իրավունքների եվրոպական դատարան |
| ՔՔԻՄԴ | Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր |
| ԺՀՄԻԳ | Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ |
| ԵԱՀԿ | Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն |
| ԵԽԽՎ | Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով |
| ՄԻՀՀ | Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |

# Ամփոփում

ԺՀՄԻԳ-ի՝ »Դատավարությունների դիտարկում« ծրագրի (Ծրագիր) արդյունքները արձանագրեցին բացթողումներ 2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հետընտրական բռնություններին առնչվող դատավարություններում: Ընդունելով, որ դատավարություններն ընթացել են սուր հասարակական լարվածության պայմաններում և ստացել են հանրային հատուկ ուշադրություն, Հայաստանի իշխանությունները կարող էին ներդնել առավել ջանքեր գործերի արդարացի և անաչառ քննությունն ապահովելու համար: Սույն զեկույցը պարունակում է մի շարք առաջարկություններ, որոնք կաջակցեն Հայաստանի իշխանություններին իրականացնել քրեական արդարադատություն միջազգային չափանիշներին և ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին համապատասխան:

Ծրագրի իրականացումը նպատակ ուներ համակարգված եղանակով տեղեկություններ հավաքել դիտարկվող դատավարությունների՝ արդար դատաքննության ներպետական և միջազգային չափանիշներին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև հայտնաբերել քրեական արդարադատության համակարգում հնարավոր բացթողումները: Այս նպատակի իրականացման համար 2008 թվականի ապրիլ ամսից մինչև 2009 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում Ծրագրի անձնակազմը դիտարկել է 93 քրեական գործ՝ ընդհանուր թվով 109 ամբաստանյալների մասնակցությամբ: Դիտարկված գործերը չեն կազմում Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից քննված գործերի ընդհանուր թվի մեծ մասը: [1] Այնուամենայնիվ, դրանք բացահայտում են կառուցվածքային թերություններ, իսկ դրանցից բխող առաջարկությունները միտված են արդարադատության ողջ համակարգի բարելավմանը:

Դիտարկված գործերից շատերն ընթացել են սուր լարվածության մթնոլորտում: Ամբաստանյալներից շատերը իրենց անհամաձայնությունն են հայտնել քրեական դատավարությունների առնչությամբ, որն արտահայտվել է ելույթների կամ բողոքի այլ դրսևորումների ձևով: Դատական նիստերի դահլիճում նրանք և նրանց համախոհները հաճախ չեն ցուցաբերել հարգանք դատավորների կամ դատավարության այլ մասնակիցների հանդեպ: Այս խոչընդոտող հանգամանքները դատարանների աշխատանքը դարձրել են չափազանց դժվարին և միաժամանակ բարձրացրել դատավորների պրոֆեսիոնալ վարքագծի սանդղակը ամենաբարձր մակարդակին: Ձեռք բերված տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ դատավորներից մի քանիսը, պատշաճ պրոֆեսիոնալիզմ դրսևորելով, հաղթահարել են այդ դժվարությունները:

[1] Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված իր մեկնաբանություններում Դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2008 թվականին Հայաստանի դատարանները քննել են 2575 քրեական գործեր 3259 անձանց վերաբերյալ: Այսինքն, ուսումնասիրված գործերը կազմում են տարեկան քննվող գործերի ընդամենը 3.6 տոկոսը և դրանք վերաբերվում են դատապարտվածների միայն 3.5 տոկոսին:

Միաժամանակ, իրականացված դիտարկումների արդյունքում բացահայտվել են մտահոգություն առաջացնող բազմաթիվ հարցեր՝ կապված մեղադրյալների և ամբաստանյալների արդար դատաքննության և անձնական ազատության իրավունքների հետ: Այս հարցերի վերաբերյալ վերլուծությունները զետեղված են զեկույցի հետևյալ գլուխներում. ազատության իրավունքը (գլուխ 1), հրապարակային դատաքննության իրավունքը (գլուխ 2), անմեղության կանխավարկածը (գլուխ 3), կողմերի իրավահավասարությունը, մրցակցային դատավարությունը, և ոստիկանության ապացույցների վրա հիմնվելու աստիճանը (գլուխ 4), ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը և ապօրինի ձեռքբերված ապացույցի օգտագործումը անթույլատրելիությունը (գլուխ 5), անձամբ կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը (գլուխ 6), արագացված դատաքննությունները (գլուխ 7), դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը (գլուխ 8), և դատավորների անկողմնակալությունն ու մասնագիտական վարքագիծը (գլուխ 9): Թեև յուրաքանչյուր գլուխ եզրափակվում է հստակ եզրահանգումներով, այնուամենայնիվ, առաջարկությունները զետեղված չեն գլուխներում. դրանք միավորված են զեկույցի վերջին մասում և դասակարգված են՝ ըստ հասցեատերերի:

Մասնավորապես, Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները մտահոգություն են առաջացնում ***ազատության իրավունքին*** առնչվող օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի առնչությամբ: Ձերբակալման և կալանավորման նկատմամբ դատական վերահսկողությունը միշտ չէ, որ բավարարել է համապատասխան միջազգային չափանիշներին և ներպետական օրենսդրության պահանջներին: Կալանավորման վերաբերյալ որոշումները պատշաճ կերպով պատճառաբանված չէին, ինչպես նաև չէին պարունակում հղում անհատական գործի փաստական հանգամանքներին. ավելի շուտ դրանք պարունակում էին ընդհանուր բնույթի տիպային արտահայտություններ: Չնայած սկզբունք է, որ մինչդատական վարույթում ազատության սահմանափակումը պետք է լինի բացառություն, այլ ոչ թե կանոն, կալանավորումը սովորաբար երկարացվում էր հնարավոր առավելագույն ժամկետով, իսկ խափանման այլընտրանքային միջոցների կիրառման հարցը հազվադեպ է քննարկվել, իսկպաշտպանության կողմի համապատասխան միջնորդությունները հաճախ թողնվել են առանց քննության: Ոստիկանության կողմից իրականացված ձերբակալությունները հաճախ պատշաճ կերպով չեն ձևակերպվել և պարունակել են ոչ ճշգրիտ տվյալներ՝ կասկածներ հարուցելով ոստիկանության կողմից իրականացված ձերբակալությունների և ոստիկանության բաժանմունքում անձին արգելանքի տակ պահելու օրինականության վերաբերյալ:

ԺՀՄԻԳ-ը Հայաստանի իշխանություններին առաջարկում է միջոցներ ձեռնարկել, ապահովելու կալանքի կիրառման և դրա ժամկետի երկարացման պրակտիկայի համապատասխանությունը ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներին և համապատասխան եվրոպական չափանիշներին: Կալանքի կիրառման և դրա ժամկետի շարունակական երկարացման պրակտիկան պետք է փոփոխվի, իսկ նախնական կալանքի կիրառումը պետք է դառնա բացառություն, այլ ոչ թե կանոն, քանի որ դա են պահանջում են միջազգային ստանդարտները: Այս հարցի վերաբերյալ առավել մանրամասն առաջարկները ներկայացված են

»Կոնսոլիդացված առաջարկություններ« բաժնում, որոնց նպատակն է, *inter alia*, երաշխավորել, որ մեղադրանքի ծանրությունն ինքնին կալանավորման բավարար հիմք չէ ինչպես նաև ապահովել, որ դատավորներն անհապաղ և կալանավորված անձի ներկայությամբ քննեն կալանավորման վերաբերյալ ցանկացած միջնորդություն և բողոք:

Դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ իշխանությունները հրապարակային դատաքննության իրավունքի ապահովման ուղղությամբ միջոցներ են ձեռնարկել: Հանրության և զանգվածային լրատվամիջոցների միջոցների՝ դատական նիստերին ներկա գտնվելու հնարավորությունն ապահովվել է դիտարկված բոլոր գործերով: Մի շարք թերություններ են բացահայտվել հանրության՝ դատարանի շենք մուտք գործելու հնարավորության հետ կապված: Դատական լսումների ժամանակացույցերում առկա անճշտությունները և սահմանված ժամանակացույցին հաճախակի չհետևելու պրակտիկան փաստացիորեն խոչընդոտել են դատական լսումներին հանրության ներկա գտնվելը, ինչպես նաև դիտարկումներ անցկացնելու գործընթացը: Դատական նիստերի դահլիճների ցածր լսելիությունը և տեխնիկական միջոցների անբավարար հագեցվածությունը ևս խոչընդոտել են հանրությանը հետևելու դատական նիստերի ընթացքին: Անհրաժեշտ է լուրջ ջանքեր գործադրել ապահովելու համար, որ դատական կարգադրիչները ճիշտ են հասկանում իրենց գործառույթները և պատշաճորեն կատարում դրանք: Հանրության՝ հրապարակային դատաքննություններին ներկա գտնվելու իրավունքի իրականացմանն օժանդակելը պետք է դառնա դատական կարգադրիչների ծառայության առանցքային գործառույթը:

Զեկույցը նաև բացահայտում է դատարաններն առավել հարմարավետ և ծառայություններ մատուցող հաստատություններ դարձնելու անհրաժեշտությունը: Այն ներառում է՝ նշանակված դատական նիստերի վերաբերյալ հիմնական տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև հանրության համար այնպիսի հնարավորության ապահովում, որ այն կարողանա դիտարկել և հետևել այն ամենը, ինչը տեղի է ունենում դատական նիստերի դահլիճում: Հրապարակային քննության իրավունքին առնչվող առաջարկները ներառում են, ի թիվս այլոց, հետևյալը. դատարանները պետք է հաշվի առնեն պլանավորված դատավարությունների նկատմամբ հանրության հնարավոր հետաքրքրությունը և քայլեր ձեռնարկեն այն բավարարելու ուղղությամբ, ներառյալ՝ համապատասխան դատական նիստերի դահլիճների նախատեսումը և անհրաժեշտ տեխնիկական միջոցների օգտագործումը:

Մի շարք դատավարությունների ընթացքում դիտորդները հանդիպել են այնպիսի իրավիճակների, որոնք կասկածներ են հարուցում առ այն, թե արդյո՞ք ամբաստանյալն իրականում ***համարվել է անմեղ մինչև մեղքի ապացուցումը***. Մի շարք դատավորներ կատարել են անբարենպաստ մեկնաբանություններ՝ ակնարկելով ամբաստանյալների մեղավորությունը: Որոշ ամբաստանյալների նկատմամբ դատական նիստերի ժամանակ կիրառված անվտանգության միջոցներն ստեղծել են այնպիսի տպավորություն, որ այդ ամբաստանյալները վտանգավոր հանցագործներ են: Այդ միջոցները եղել են անհամաչափ և հիմնված

չեն եղել վտանգի անհատական գնահատման վրա: Դիտորդները տեսել են նաև այնպիսի միջանկյալ դատական ակտեր, որոնք ամբաստանյալին ներկայացնում են որպես հանցագործությունը կատարած անձ, ինչպես նաև մասնակցել են նիստերի, որի ընթացքում դատավորներն ամբողջությամբ չեն կատարել ամբաստանյալներին իրենց իրավունքները, ներառյալ՝ լռելու իրավունքը, բացատրելու պարտականությունը:

Զեկույցը եզրահանգում է, որ առավել լուրջ ջանքեր պետք է գործադրվեն նրաշխավորելու համար դատավորների կողմից մեղադրյալի նկատմամբ վերաբերմունքին առնչվող այս հիմնարար սկզբունքի գործնական դրսևորումների ընկալումը: Անմեղության կանխավարկածի խախտումը պետք է կարգապահական վարույթի հարուցման հիմք հանդիսանա: Դատավորները պետք է պատրաստ լինեն իրենց դիրքորոշումն արտահայտելու նիստերի ժամանակ այս իրավունքը սահմանափակող միջոցների կիրառման վերաբերյալ, քանի որ նման միջոցներն ազդեցություն են ունենում անմեղության կանխավարկածի, ինչպես նաև մեղադրյալի այլ իրավունքների վրա:

Ի լրումն վերոնշյալի, դիտարկված բազմաթիվ գործերի ի հայտ են եկել բացթողումներ՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև իրական ***դատավարական հավասարության*** առնչությամբ, ինչը հակասում է արդար դատաքննության վերաբերյալ ներպետական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին: Երբեմն դատավորները հակված են եղել դրսևորել անհավասար վերաբերմունք կողմերի նկատմամբ՝ ցուցաբերելով ակնհայտ բարյացակամ վերաբերմունք մեղադրող կողմի և ակնհայտ թշնամական վերաբերմունք պաշտպանության կողմի նկատմամբ: Մի շարք դատավարությունների ընթացքում նոր ապացույց ներկայացնելու և/կամ այն հետազոտելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունները պարբերաբար մերժելու հանգամանքը լրջորեն նվազեցրել է իր գործառույթներն իրականացնելու պաշտպանության կողմի հնարավորությունը: Վերլուծությունը նաև ընդգծում է մտահոգությունն առ այն, որ դատարանը հիմնվում է մեղադրանքի կողմից ներկայացվող վկաների գրավոր ցուցմունքների վրա՝ այն դեպքում, երբ այդ ցուցմունքների հավաստիությունը իրապես հնարավոր չէր ստուգել նիստի ընթացքում: Զգալի թվով գործերում հանդիպել է նմանատիպ խնդիր՝ կապված ոստիկանության կողմից ներկայացված մեղադրական ցուցմունքների վրա հիմնվելու հանգամանքի հետ՝ առանց պաշտպանության կողմին արդյունավետ հնարավորություն տալու մրցակցային պայմաններում ստուգելու ապացույցի ապացուցողական ուժը, ինչը կասկած է հարուցում դիտարկված գործերում կողմերի հավասարության սկզբունքի պահպանման առնչությամբ: Մի շարք գործերում, ոստիկան վկաների հայտարարությունները հանդիսացել են մեղադրական դատավճիռներ կայացնելու գլխավոր հիմքը՝ չնայած հաճախակի տեղ գտած դատավարական խախտումներին, հակասություններին և փաստերը հաստատող ապացույցների բացակայությանը:

Այս առումով ուսումնասիրությունը հանգում է այն եզրակացությանը, որ բացթողումները պետք է շտկվեն համապարփակ լուծումների միջոցով: Գործող օրենսդրությանը համապատասխան կողմերի հավասարության սկզբունքի

ապահովման վերաբերյալ լրացուցիչ վերապատրաստման անցկացումը օգտակար կլինեն դատավորների համար: Սակայն քաղաքականություն մշակողները նույնպես պետք է լրջորեն քննարկեն քրեական գործով մինչդատական վարույթի բարեփոխումների հարցը՝ առավել մրցակցային դատաքննություն ապահովելու նպատակով: Առաջարկները պարունակում են հստակ ուղեցույցեր: Օրինակ՝ այն գրավոր ցուցմունքները և փորձագետի եզրակացությունները, որոնք չեն անցել նոր առաջարկված դեպոզիտային ընթացակարգով, չեն կարող հրապարակվել և հիմք ընդունվել դատարանի կողմից, եթե այդ վկաները ցուցմունք չեն տվել դատարանում: Բացի այդ, այն դեպքերում, երբ ցուցմունք տվող վկաները միայն ոստիկաններ են, և նրանց ցուցմունքներն ունեն որոշիչ նշանակություն, պաշտպանության կողմին պետք է բավարար չափով հնարավորություն տրվի դատարանում դրանք հետազոտելու համար:

***Ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը*** և ***ապօրինի ձեռք բերված ապացույցը չօգտագործելու*** պարտականությունը միշտ չէ, որ հարգվել են: Դիտարկումների ողջ ընթացքում ԺՀՄԻԳ-ի Ծրագրի անձնակազմի ուշադրությանն են արժանացել ոստիկանական խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունները: Բացառությամբ շատ քիչ թվով գործերի, թե դատախազները, թե դատավորները անգործություն են դրսևորել այնպիսի հանգամանքներում, երբ ներպետական օրենսդրությունը և միջազգային իրավունքը պահանջում են որոշակի գործողությունների կատարում: Զեկույցում նաև հետազոտվել է այն պրակտիկան, համաձայն որի՝ դատավորները ոչ միշտ են գնահատում ապացույցների թույլատրելիության հարցը, ինչը ներպետական և միջազգային չափանիշների պահանջն է: Այս չափանիշների համաձայն, անթույլատրելի է համարվում այն ապացույցը, որը ձեռք է բերվել խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի արդյունքում: Նման ապացույցները բացառելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունները հիմնականում չեն քննարկվել կամ մերժվել են: Որոշ դեպքերում, դատավորները հիմնվել են ամբաստանյալների կողմից մինչդատական վարույթի ընթացքում արված այն հայտարարությունների վրա, որոնք հակասել են դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներին՝ չնայած ճնշումների և սպառնալիքների վերաբերյալ արված հայտարարությունների առկայությանը: Նմանապես, դատավորները հիմնվել են վկաների այն ցուցմունքների վրա, որոնք ենթադրաբար ձեռք էին բերվել ճնշման ներքո:

Զեկույցի եզրահանգումներից բխում է լուրջ և արդյունավետ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը: Դրանք, նախ և առաջ, պետք է ուղղված լինեն ոստիկանների և քննիչների կողմից լիազորությունների չարաշահումների վերացմանը, ովքեր պետք է պատասխանատվության ենթարկվեն կասկածյալների և վկաների նկատմամբ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու յուրաքանչյուր դեպքի համար: Լրջորեն պետք է քննարկվի նմանատիպ միջադեպերի առնչությամբ անկախ քննություն իրականացնող հատուկ քննչական անկախ մարմին ստեղծելու հարցը: Այդպիսի միջադեպերի հանդիպելիս դատավորները պետք է այդ մասին նշված մարմնին հայտնելու հստակ պարտականություն ունենան: Քրեական դատավարության օրենսդրությունը նույնպես պետք է փոփոխությունների ենթարկվի՝ անօրինական

միջոցներով ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Փոփոխություններն իրականություն կդառնան այն ժամանակ, երբ դատարաններն սկսեն հետևողականորեն մերժել դատախազությանը հիմք ընդունելու »***թունավոր ծառի պտուղները***«: Մասնավորապես, եթե դատական նիստի ժամանակ ամբաստանյալը հրաժարվել է իր գրավոր ցուցմունքներից, ապա այն պետք է հանվի ապացույցների շարքից և մեղադրանքի կողմը չպետք է հիմնվի դրանց վրա:

Դիտարկումների ընթացքում նաև բացթողումներ են հայտնաբերվել ***պաշտպանության իրավունքի***, մասնավորապես, պատշաճ պաշտպանություն իրականացնելու հնարավորության և իրավական ներկայացուցչության արդյունավետության առնչությամբ: Որոշ դեպքերում, պաշտպանության կողմի փաստաբանները զրկվել են իրենց պարտականությունները կատարելու հնարավորությունից: Ի նշան բողոքի՝ մի քանի պաշտպաններ դիմել են դատական նիստերի դահլիճը լքելու միջոցին: Մտահոգություններ արձանագրվել են հանրային պաշտպանների գործունեության որակի և արդյունավետության առնչությամբ:

Զեկույցը հանգել է այն եզրակացությանը, որ առկա է Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով տրամադրվող իրավական օգնության որակի բարելավման կարիք: Զեկույցի առաջարկներից մեկն այն է, որ քննարկման ենթարկվի Իրավական օգնության խորհուրդ ստեղծելու հարցը: Ի հավելումն դրա, դատավորները պետք է վերապատրաստում անցնեն՝ կողմերի հավասարության, պաշտպանության իրավունքի, և անկողմնակալության, ներառյալ՝ անկողմնակալության արտաքին դրսևորման, սկզբունքների վերաբերյալ:

Բացի այդ, զեկույցում ***արագացված դատաքննության*** ինստիտուտը դիտարկվում է որպես արդարադատության համակարգի արդյունավետության բարձրացման միջոց: Զեկույցում ուշադրություն է հրավիրվում է նաև այն հանգամանքին, որ արագացված դատաքննության արդյունքում ամբաստանյալը հրաժարվում է մի շարք կարևոր դատավարական իրավունքներից, հետևաբար, այս ընթացակարգը պետք է զուգակցվի այնպիսի երաշխիքներով, որոնք ընդհանուր առմամբ կապահովեն քրեական դատավարության արդարացիությունը: Հայաստանի քրեական դատավարության ամենաէական երաշխիքներից մեկն այն է, որ ամբաստանյալն իր գործն արագացված կարգով քննելու վերաբերյալ համաձայնությունն արտահայտի գիտակցված և կամավոր: Դիտարկումների արդյունքում պարզվել է, որ այս երաշխիքը միշտ չէ որ պատշաճ կերպով պահպանվել է. ինչպես պարզվել է որոշ ամբաստանյալներ լիովին տեղեկացված չեն եղել և չեն գիտակցել իրենց գործն արագացված կարգով քննելու վերաբերյալ համաձայնություն տալու հետևանքները:

Այն ամբաստանյալները, ովքեր դատարանում համաձայնվել են իրենց դեմ ներկայացված մեղադրանքների հետ և որոնց գործը քննվել է դատական քննության արագացված կարգով, մինչև գործի նախաքննության ավարտը զգալի ժամանակ գտնվել են կալանավորվածներին պահելու վայրում: Սա նշանակում է, որ զգալի ռեսուրսներ խնայելու և կալանավորման ժամկետները կրճատելու հնարավորություն կստեղծվեր, եթե այս ամբաստանյալները վարույթի ավելի վաղ

փուլում հնարավորություն ունենային ընդունելու իրենց դեմ ներկայացված մեղադրանքները: Անհրաժեշտ է առավել հետևողական լինել ամբաստանյալների կողմից իրենց դեմ առաջադրված մեղադրանքը գիտակցված և կամավոր ընդունելու առկա երաշխիքները կիրառելու հարցում:

Ի լրումն վերոնշյալի՝ դիտարկված որոշ գործերով դատարանները հաճախակի պատժամիջոցներ են կիրառել ***դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք*** ցուցաբերելու համար: Չնայած դատական նիստերի դահլիճում կարգի պահպանման և դատարանի հեղինակության պաշտպանության անհրաժեշտությունն ինքնին հասկանալի է, նման դրույթների ծայրահեղ կիրառումը մտահոգությունների տեղիք է տալիս: Երբ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նշանակված պատժամիջոցը համաչափ և հետևողական չէ, ինչպես նաև անտեսվում է արդար քննության սկզբունքը, ապա դատավարության մասնակիցների և հանրության ներկայացուցիչների նկատմամբ դրանց կիրառումը կարող է հանգեցնել դատարանի նկատմամբ հանրության վստահության նվազեցմանը: Այդ պատժամիջոցների կիրառումն ամբաստանյալների և նրանց պաշտպանների նկատմամբ կարող է խոչընդոտել ամբաստանյալի՝ դատական նիստին ներկա գտնվելու և պաշտպանի միջոցով իր իրավունքները պաշտպանելու իրավունքների իրականացմանը: Այս սանկցիաների կիրառման հետևանքով որոշ դատական լսումներ անցկացվել են ամբաստանյալի բացակայությամբ, ինչն արդար դատաքննության տեսանկյունից հազիվ թե կարելի է ցանկալի արդյունք համարել:

Զեկույցն արձանագրում է, որ Հայաստանի իրավական համակարգի շահերից է բխում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար դատական սանկցիայի և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար քրեական պատասխանատվության հստակ տարանջատումը: Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար քրեական պատասխանատվության հարց պետք է առաջանա միայն այն դեպքերում, երբ այդ արարքն անձնապես հասցեագրված է դատավարության կոնկրետ մասնակիցներին և նպատակ ունի խաթարելու արդարադատության բնականոն ընթացքը: Դատական սանկցիան պետք է կիրառվի դատական կարգն ու ընթացակարգերը խախտելու դեպքերում: Անհրաժեշտ է նշել, որ պաշտպանների համառությունը պաշտպանյալների առջև ստանձնած մասնագիտական պարտականությունների մասն է կազմում: Պաշտպանների՝ էթիկայի կանոններին հակասող ցանկացած վարքագծի վերաբերյալ պետք է զեկուցել և հարցը լուծել կարգապահական վարույթների միջոցով: Դատական նիստերի դահլիճից ժամանակավորապես հեռացնելու ժամանակահատվածը պետք է շատ կարճ և համաչափ լինի կատարված խախտման բնույթին, ինչպես նաև պետք է ընձեռնվի որոշումը պարբերաբար վերանայելու հնարավորություն: Միաժամանակ առաջարկվում է դատական բոլոր սանկցիաների կիրառման դեպքում թույլատրել դատական վերահսկողության իրականացում: Այս առումով զեկույցում առաջարկվում է, որ Հայաստանի քաղաքականություն մշակողները և օրենսդիրները քննարկեն քրեական օրենսդրության մեջ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքին վերաբերվող դրույթներում փոփոխություններ կատարելու հարցը:

Վերջում հարկ է նշել, որ մի շարք դեպքերում արձանագրվել են ***դատավորների անկողմնակալության և մասնագիտական վարքագծին*** առնչվող մտահոգություններ: Մեղադրանքի կողմի նկատմամբ հակվածության դրսևորումներն ու անվայելուչ արտահայտությունները կարող են վնասել դատարանի՝ որպես անկողմնակալ և արժանավայել հաստատության վերաբերյալ հանրային ընկալումը: Դիտարկման արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում դատավորների կողմից դատավարության անցկացման կարգը կասկածի տակ է դրել վերջիններիս անկողմնակալությունը: Պատահել են նաև այնպիսի դեպքեր, երբ դատավորները պատշաճ հարգանք չեն ցուցաբերել դատավարության մասնակիցների և հանրության ներկայացուցիչների նկատմամբ: Նման միջադեպերը վերահաստատում են դատավորների համար լրացուցիչ դասընթացներ կազմակերպելու, ինչպես նաև նրանց պատասխանատվությունն ապահովելու նպատակով կարգապահական մեխանիզմների հետևողական կիրառման անհրաժեշտությունը: Դատավորների դեմ ներկայացված բողոքները պետք է պատշաճ քննության ենթարկվեն, իսկ այն դատավորները, որոնց վարքագիծն անհամատեղելի է իրենց մասնագիտական էթիկայի կանոնների հետ, պետք է ենթարկվեն կարգապահական պատասխանատվության:

# Ծրագրի նկարագրությունը

»Դատավարությունների դիտարկում« Ծրագիրը նախաձեռնել է ԺՀՄԻԳ-ը՝ 2008թ. մարտի 1-ին և 2-ին ոստիկանության և ցուցարարների միջև Երևանում տեղի ունեցած բռնի բախումների արդյունքում, որի հետևանքով առկա էին զոհեր և բազմաթիվ վիրավորներ: Մարտի 4-ին Արտաքին գործերի նախարարության կողմից հրապարակած մամլո հաղորդագրության պաշտոնական տվյալների համաձայն՝ ութ մարդ սպանվել է (յոթ քաղաքացիական անձ և մեկ ոստիկան), և 133 մարդ վիրավորվել (61 քաղաքացիական անձ և 72 ոստիկան): Տասնութ քաղաքացիական անձ և 16 ոստիկան ըստ երևույթի բուժում են ստացել հրազենային վնասվածքներից:[2]

Հետընտրական բախումների ընթացքում մարտի 1-ին Նախագահի հրամանագրով հայտարարվել է արտակարգ դրություն՝ 20 օր տևողությամբ[3] ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին համապատասխան, ԺՀՄԻԳ-ը Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության կողմից բանավոր ծանուցում է ստացել հրամանագրով հայտարարված ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ: Արտակարգ դրությունը դադարեցվել է մարտի 21-ին:

Ոստիկանապետի տեղակալի՝ մարտի 4-ի հայտարարության համաձայն՝ 127 անձ է ձերբակալվել մարտի 1-ի՝ բռնություններով զուգակցված ցույցերին մասնակցելու կապակցությամբ:[4] Գլխավոր դատախազության մամլո խոսնակի՝ մարտի 18-ի հայտարարության համաձայն՝ մարտի 1-ից ի վեր ձերբակալվել են ընդդիմության՝ ընդհանուր թվով 109 կողմնակիցներ, որոնցից 106-ի դեմ պաշտոնապես ներկայացվել են մեղադրանքներ: Այդ անձինք մեղադրվել են ներքոնշյալ հանցանքներից մեկի կամ մի քանիսի կատարման մեջ. հասարակական կարգի խախտմամբ զուգորդված զանգվածային միջոցառումներ կազմակերպելը, իշխանության ներկայացուցչի օրինական պահանջներին չենթարկվելուն ուղղված կոչերը, իշխանություններին դիմադրելը՝ բռնություն գործադրելով, սահմանադրական կարգի խախտմամբ զուգորդված պետական իշխանությունը յուրացնելուն ուղղված գործողություններ կատարելը, բռնություն, ապօրինի կերպով զենք և ռազմամթերք իրացնելը կամ կրելը, հանցագործությունը պարտակելը:

Մարտի 8-ից մինչև ապրիլի 12-ը ԺՀՄԻԳ-ի մարդու իրավունքների փորձագիտական խումբը տեղեկությունների ձեռքբերման նպատակով այցելել է Հայաստան: Որպես դրան հաջորդող գործողություն, ԺՀՄԻԳ-ը ստացել է Հայաստանի իշխանությունների համաձայնությունը՝ մարտի 1-2-ի իրադարձությունների կապակցությամբ մեղադրվող անձանց դատավարությունների դիտարկում իրականացնելու վերաբերյալ:

---

[2] ԵԱՀԿ երևանյան գրասենյակի Զեկույցը, 5 մարտի, 2008թ.:
[3] Տե՛ս ԺՀՄԻԳ-ի Հետընտրական զարգացումների վերաբերյալ միջանկյալ զեկույցը, փետրվարի 20 – մարտի 3, 2008 թ., էջ 4, հասանելի է http://www.osce.org/documents/odihr/2008/03/30090_en.pdf կայքէջում:
[4] ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ծեկույցը, 5 մարտի, 2008թ.:

## *Ծրագրի շրջանակներն ու մեթոդաբանությունը*

Ծրագրի իրականացումը հետապնդել է հետևյալ նպատակները. ա/ դիտարկման ենթարկված դատավարությունների՝ արդար դատաքննության ներպետական և միջազգային չափանիշներին համապատասխանության վերաբերյալ համակարգված կերպով տեղեկություններ հավաքելը, բ/ դիտարկման արդյունքների հիման վրա քրեական արդարադատության համակարգում առկա հնարավոր բացթողումների հայտնաբերումը, և գ/ Հայաստանի իշխանություններին քրեական արդարադատության իրականացման բարելավմանն ուղղված առաջարկություններ ներկայացումը՝ ԵԱՀԿ առջև Հայաստանի ստանձնած պարտավորություններին համապատասխան:[5]

Ծրագիրն ուղղված է եղել քրեական դատավարության հրապարակային փուլի՝ դատական քննության դիտարկմանը: Դիտորդները ներկա են գտնվել դատական նիստերին՝ արդար դատաքննության վերաբերյալ ներպետական և միջազգային չափանիշներին դրանց համապատասխանությունն որոշելու համար: Նրանք համակարգված եղանակով տեղեկություններ չեն հավաքել քրեական դատավարության մինչդատական փուլի վերաբերյալ, ինչպես նաև չեն դիտարկել ձերբակալված անձանց և մեղադրյալների մինչդատական իրավունքների իրականացման գործընթացը:

Ծրագիրն իրականացրել է *ընթացակարգային* դատական դիտարկում՝ համապատասխան ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների հիման վրա: Հետևաբար, Ծրագրի անձնակազմը գնահատական չի տվել դիտարկված դատավարությունների *նյութական* ասպեկտների վերաբերյալ, ինչպիսիք են մեղադրանքների հիմնավորվածությունը և մեղադրանքի կողմի ներկայացրած ապացույցների բավարարությունը:

ԺՀՄԻԳ-ի Ծրագրի ղեկավարը ստեղծել է անհրաժեշտ ենթակառուցվածքները և ներգրավել Ծրագրի հիմնական անձնակազմի անդամներին: Դիտարկումներն իրականացվել են Ծրագրի դիտորդների կողմից՝ Ծրագրի համակարգողի վերահսկողությամբ, որի հիմնական պարտականությունները ներառել են դիտորդների ամենօրյա աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացումը և տեղեկությունների հավաքագրումը:[6] Բոլոր դիտորդները վերապատրաստում են անցել Ծրագրի շրջանակների և մեթոդաբանության,

---

[5] Իրավունքի գերակայության և քրեական արդարադատության վերաբերյալ ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների մասին տե՛ս, ի թիվս այլոց, 1989թ. Վիեննայում, 1990թ. Կոպենհագենում, 1991թ. Մոսկվայում և Մարդու իրավունքների և քրեական արդարադատության համակարգերում իրավունքի գերակայությունն ամրապնդելու մասին Լյուբլյանայում ընդունված Նախարարների խորհրդի թիվ 7/08 որոշումը և Հելսինկիում ընդունված Նախարարների խորհրդի որոշում թիվ 7/08 ԵԱՀԿ տարածքում իրավունքի գերակայության հետագա ամրապնդման մասին: Տե՛ս նաև Հավելված 2.:

[6] Ծրագրի մեթոդաբանությունը ձևավորվել է ԺՀՄԻԳ-ի՝ »Դատավարությունների դիտարկում: Ձեռնարկ պրակտիկ աշխատողների համար« (2008) գրքի հիման վրա, որը հասանելի է http://www.osce.org/odihr/item_11_30849.html կայքէջում:

ինչպես նաև Հայաստանի քրեական դատավարության հիմնական տարրերի վերաբերյալ: Դիտարկումների իրականացման ողջ ժամանակահատվածում Ծրագրում աշխատել են ութ ազգություններ ներկայացնող 37 դիտորդներ:[7]

Դիտորդները դատական նիստերին այցելել են երկու դիտորդներից բաղկացած խմբերով: Դիտարկված յուրաքանչյուր գործի համար նրանք պատրաստել են մեկ զեկույց` օգտագործելով միասնական Հարցաշար, որը հիմնված էր միջազգային և ներպետական արդար դատաքննության չափանիշների վրա: Այդ զեկույցները հանդիսացել են սույն վերջնական զեկույցի նախապատրաստման հիմնական աղբյուրները:

Ծրագրի դիտորդների կողմից դիտարկված դատաքննությունների վերլուծությունն իրականացվել է գլխավորապես այդ վարույթների` »Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին« եվրոպական կոնվենցիայում (ՄԻԵԿ) և »Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին« միջազգային դաշնագրում (ՔՔԻՄԴ) ամրագրված չափանիշներին համապատասխանության հարցը որոշելու միջոցով: Նշված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրավաբանական ուժ ունեն` համապատասխանաբար 2002 և 1993 թվականներից ի վեր: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ իրավունքի գերակայության և քրեական արդարադատության բնագավառում ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունները հաճախ պարունակում են նույնական կամ համանման չափանիշներ:[8]

ԺՀՄԻԳ-ը վերջնական զեկույցի աշխատանքային տարբերակը տրամադրել է Հայաստանի Հանրապետության իշխանություններին 2009 թվականի նոյեմբերի 18-ին: 2010 թվականի փետրվարի 4-ին Արդարադատության նախարարությունը, Գլխավոր դատախազությունը և Դատական դեպարտամենտը[9] ներկայացրել են իրենց մեկնաբանությունները: ԺՀՄԻԳ շնորհակալություն է հայտնում այս մեկնաբանությունների համար և դրանք այս վերջնական զեկույցում արտացոլելու ուղղությամբ կոնկրետ միջոցներ է ձեռնարկել: Այնուամենայնիվ, սույն զեկույցի համար միայն ԺՀՄԻԳ է պատասխանատվություն կրում:

## *Ընդհանուր տեղեկություններ*

---

[7] Հայաստան, Դանիա, Մակեդոնիա, Իրան, Ղազախստան, Ղրղզստան, Նորվեգիա և Միացյալ Նահանգներ:

[8] Օրինակ` ազատության իրավունքը և քրեական մեղադրանքի համար կալանավորման կիրառման սահմանափակումները սահմանված են ԵԱՀԿ-ի` 1989թ. Վիեննայում, 1990թ. Կոպենհագենում և 1991թ. Մոսկվայում ընդունված փաստաթղթերում, խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքը` Վիեննայում 1989թ., անմեղության կանխավարկածի սկզբունքը` Կոպենհագենում 1990թ., և պաշտպանության իրավունքը` Մոսկվայում 1991թ. ընդունված փաստաթղթերում:

[9] [illegible]ը անկախ [illegible], [illegible], [illegible], [illegible] (www.court.am)[illegible]

Դատավարությունների դիտարկումներն սկսվել են 2008թ. ապրիլի 15-ից և ավարտվել են 2009թ. հուլիսի 31-ին: ԺՀՄԻԳ-ի Ծրագրի անձնակազմը դիտարկել է 93 քրեական գործ, որոնցից 35-ը՝ միայն առաջին ատյանում, 47-ը՝ և առաջին, և վերաքննիչ ատյաններում, իսկ տասնմեկ գործ՝ միայն վերաքննիչ ատյանում: Զեկույցում *քրեական գործ* հասկացությունն օգտագործվում է այն իմաստով, որն այն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ. այն է՝ մեկ կամ մի քանի ամբաստանյալների նկատմամբ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ:

Դիտարկված քրեական գործերը ներառել են ընդհանուր թվով 109 ամբաստանյալներ: Միայն առաջին ատյանում դիտարկված գործերը ներառել են 43 ամբաստանյալներ, առաջին և վերաքննիչ ատյաններում դիտարկված գործերը՝ 53 ամբաստանյալներ, իսկ միայն վերաքննիչ ատյանում դիտարկված գործերը՝ 13 ամբաստանյալներ:

Առաջին ատյանում դիտարկված գործերում ներգրավված 96 ամբաստանյալներից միայն հինգն են արդարացվել ամբողջությամբ (արդարացվել են բոլոր մեղադրանքներով), իսկ 91-ը մեղավոր են ճանաչվել առաջադրված բոլոր կամ որոշ մեղադրանքներով:[10] 91 դատապարտված անձանցից ութի նկատմամբ նշանակվել են ազատազրկման հետ չկապված պատիժներ (տուգանքներ), իսկ 83-ի նկատմամբ նշանակվել են մասնակիորեն կամ ամբողջությամբ ազատազրկման հետ կապված պատիժներ, որոնք տատանվում են մեկից մինչև ինը տարի: Ազատազրկման հետ կապված պատիժ ստացած 83 ամբաստանյալներից 25-ը ազատ են արձակվել՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով:[11] Այսպիսով, 58 դատապարտված անձինք իրենց դատական քննությունների ավարտից հետո մնացել են ազատությունից զրկված:

Վերաքննիչ ատյանում դիտարկված գործերով 66 ամբաստանյալներից 58-ի նկատմամբ նշանակված պատիժները մնացել են անփոփոխ, ներառյալ՝ այն չորս բողոքներ, որոնք թողնվել են առանց քննության, մեկ դատապարտյալի նկատմամբ պատիժն ավելի է խստացվել (պատիժը պայմանական չկիրառելու մասին որոշումը վերացվել է), իսկ յոթ դատապարտյալների նկատմամբ նշանակվել են ավելի մեղմ պատիժներ: Նախագահի առաջարկությամբ 2009թ. հունիսի 19-ին Հայաստանի խորհրդարանը հայտարարել է ընդհանուր համաներում, որի արդյունքում մարտի 1-ի և 2-ի դեպքերի կապակցությամբ ազատազրկման դատապարտված անձանց մեծամասնությունը ազատ են արձակվել:

---

[10] Դատական դեպարտամենտը զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ իր մեկնաբանություններում նշել է, որ ամբողջովին կամ մասնակի արդարացվածները կազմում են այդ գործերով դատարանի առջև կանգնածների 13.8 տոկոսը, այն դեպքում, երբ 2008 թվականին այդ ցուցանիշը հանրապետությունում քննված բոլոր գործերով կազմել է ընդամենը 0.67 տոկոս: Դիտարկված գործերի 34.5 տոկոսի դեպքում նշանակվել է պայմանական դատապարտում, մինչդեռ 2008 թ. քննված ընդհանուր թվում այդ ցուցանիշը կազմել է 25.4 տոկոս:

[11] Քրեական օրենսգիրք, հոդված 70:

Ծրագիրն իրականացնող խումբը մտադիր է եղել դիտարկել մարտի 1-ի և 2-ի դեպքերին առնչվող յուրաքանչյուր գործ: Սակայն, չնայած այս ուղղությամբ գործադրված բոլոր ջանքերին, չի հաջողվել դիտարկել մարտյան իրադարձությունների կապակցությամբ մեղադրվող 24 ամբաստանյալների մասնակցությամբ 18 քրեական գործ, քանի որ նրանց գործերի դատական լսումների օրերի և ժամերի վերաբերյալ տվյալները մատչելի չեն եղել, կամ պարունակել են ոչ ճշգրիտ տվյալներ: Դիտարկված գործերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել Հավելված 1-ում:

# Գլուխ 1. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը

Դիտարկումների ընթացքում ձեռք բերված տեղեկությունները մտահոգությունների տեղիք են տալիս՝ բացառությամբ օրենքով նախատեսված հիմքերով և սահմանված կարգով ազատությունից չզրկվելու իրավունքի առնչությամբ:

Ձերբակալության և կալանավորման նկատմամբ դատական վերահսկողությունն ամբողջությամբ չի բավարարում համապատասխան միջազգային չափանիշներին և ազգային օրենսդրության պահանջներին: Կալանավորման վերաբերյալ որոշումները միշտ չէ, որ պատշաճ կերպով պատճառաբանված էին, չէին պարունակում հղում անհատական գործի փաստական հանգամանքներին՝ պարունակելով ընդհանուր բնույթի տիպային արտահայտություններ: Չնայած սկզբունք է, որ մինչդատական վարույթում ազատության սահմանափակումը պետք է լինի բացառություն, այլ ոչ թե կանոն, կալանավորումը սովորաբար երկարացվում էր հնարավոր առավելագույն ժամկետով, իսկ խափանման այլընտրանքային միջոցների կիրառման հարց հազվադեպ է քննարկվել, իսկ պաշտպանության կողմի համապատասխան միջնորդությունները հաճախ թողնվել են առանց քննության: Ոստիկանության կողմից իրականացված ձերբակալություններին առնչվող փաստաթղթերը հաճախ պատշաճ կերպով չեն ձևակերպվել են և պարունակել են ոչ ճշգրիտ տվյալներ՝ կասկածներ հարուցելով ոստիկանության կողմից իրականացված ձերբակալությունների և ոստիկանության բաժանմունքում անձին արգելանքի տակ պահելու օրինականության վերաբերյալ:

## Ա. Ներպետական օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, և սահմանում է, որ այն կարող է սահմանափակվել միայն հետևյալ դեպքերում. անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից, անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը, օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով, առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով, անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով, վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով, Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:[12]

[12] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 16:

Հայաստանի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգիրքը (ՔԴՕ) մանրամասնեցնում է կալանավորման հիմքերն ու կարգը, ինչպես նաև նախատեսում է խափանման այլ միջոցներ, որոնք ապահովում են ամբաստանյալի՝ դատական նիստին ներկա գտնվելը: ՔԴՕ-ն սահմանում է խափանման հետևյալ միջոցները՝ կալանավորումը, գրավը, ստորագրություն՝ չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը, հրամանատարության հսկողության հանձնելը (զինվորականների դեպքում):[13]

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կալանավորումը կարող է կիրառվել դատարանի որոշմամբ, եթե վերագրվող հանցագործության համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ երբ բավարար հիմքեր կան ենթադրելու համար, որ մեղադրյալը մտադիր է թաքնվել կամ խոչընդոտել գործի քննությանը, մասնավորապես՝ դատավարությանը մասնակցող այլ անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով, կեղծել ապացույցները, կատարել քրեական օրենքով արգելված այլ արարք, կամ խուսափել դատավճռի կատարումից: [14] Խափանման միջոցն ընտրելիս հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, նրա զբաղմունքի տեսակը և խնամարկյալների առկայությունը, և բնակության մշտական վայրի առկայությունը:[15]

Դատարանը, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս՝ պաշտպանության կողմի միջնորդության հիման վրա պարտավոր է քննարկել գրավի դիմաց մեղադրյալին ազատ արձակելու հնարավորության հարցը: [16] Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կալանավորման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել վեց ամիսը (կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը յուրաքանչյուր անգամ չի կարող գերազանցել երկու ամիսը), սակայն առանձնապես բարդ գործերով կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել մինչև մեկ տարի:[17] ՔԴՕ-ը չի սահմանափակում կալանավորման ժամկետը՝ գործի դատական քննության ընթացքում:[18]

Ձերբակալված անձը ձերբակալման վերաբերյալ որոշումն ընդունելու պահից ունի պաշտպան ունենալու իրավունք: Պաշտպանի հետ տեսակցությունների քանակը և տևողությունը սահմանափակված չեն: Տեսակցությունները տրամադրվում են գործին որպես պաշտպան մասնակցող փաստաբանի հետ՝ անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև ՀՀ ՀՀ փաստաբանների պալատի կողմից տրված իր՝ փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում: Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը պաշտպանի

---

[13] ՔԴՕ, հոդված 134(2):
[14] *Նույն տեղում*, հոդված 135:
[15] *Նույն տեղում*, հոդված 135(3):
[16] *Նույն տեղում*, հոդված 136(2):
[17] *Նույն տեղում*, հոդված 138:
[18] *Նույն տեղում*, հոդված 138(6):

հետ տրամադրվում է այնպիսի այնպիսի վայրում, որտեղ ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերի աշխատակիցները նրանց կարողանան տեսնել, սակայն չկարողանան լսել: [19]

Հայաստանի քրեական օրենսդրությունն ուղղակիորեն արգելում է խոշտանգումը:[20]

## Բ. Միջազգային չափանիշներ

Անձի ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունք է, որով պայմանավորված է արդար դատաքննության իրավունքը, որպես այդ իրավունքի նկատմամբ անօրինական և կամայական ոտնձգությունների կանխման երաշխիք: Մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթերը՝ ՄԻՀՀ-ը,[21] ՔՔԻՄԴ-ը[22] և ՄԻԵԿ-ը[23] ամրագրում են ազատության իրավունքը: Նույն իրավունքը սահմանված է նաև ԵԱՀԿ Մոսկվայի փաստաթղթում:[24]

Ազատության իրավունքը պահանջում է, որպեսզի ոչ ոք չենթարկվի կամայական ձերբակալության կամ կալանավորման: Ազատությունից զրկելը թույլատրվում է միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով,[25] այսինքն՝ օրինականության և իրավական որոշակիության սկզբունքներին համապատասխան: »*Օրենքով սահմանված կարգով*« արտահայտությունը վերաբերում է ներպետական իրավունքին, սակայն ներպետական իրավունքն ինքնին »*պետք է համապատասխանի մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերում սահմանված կամ դրանցից բխող սկզբունքներին*«:[26]

Օրինականության սկզբունքը պահանջում է, որ օրենքն ինքնին կամայական չլինի, օրենքին համապատասխան ազատությունից զրկելը չլինի »*ակնհայտորեն անհամաչափ, անարդար կամ անկանխատեսելի*«,[27] այն մեթոդները, որոնցով իրականացվում են ձերբակալությունները չլինեն խտրական, այլ՝ գործի հանգամանքների տեսանկյունից ելնելով, լինեն պատշաճ և համաչափ:

Մարդու իրավունքներին առնչվող միջազգային չափանիշները սահմանում են մի շարք պաշտպանական միջոցներ՝ երաշխավորելու համար, որ անհատներն իրենց ազատությունից չեն զրկվում ապօրինաբար կամ կամայականորեն, ինչպես նաև

---

[19] »Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին« ՀՀ օրենք, հոդված 15:
[20] ՔՕ, հոդված 119: *Տե՛ս նաև, նույն տեղում,* հոդված 11:
[21] ՄԻՀՀ, հոդված 3:
[22] ՔՔԻՄԴ, հոդված 9:
[23] ՄԻԵԿ, հոդված 5:
[24] 1991թ. Մոսկովյան փաստաթուղթ, պարագրաֆ 23.1(թ):
[25] ՔՔԻՄԴ, հոդված, 9(1) և ՄԻԵԿ, հոդված 5(1):
[26] Տե՛ս *Kemmache v. France* (No. 3), ՄԻԵԴ վճիռ, 24 նոյեմբերի 1994թ., պարագրաֆ 37:
[27] Տե՛ս *Albert Womah Mukong v. Cameroon* գործը, UN Doc. CCPR/C/51/D/458/1991, 21 հուլիսի 1994թ., պարագրաֆ 9.8, Մարդու իրավունքների կոմիտեն պարզաբանել է, որ ՔՔԻՄԴ-ի 9(1)-րդ հոդվածում նշված »կամայական« տերմինը վերաբերվում է ոչ միայն »օրենքի խախտմամբ« կիրառված կալանավորմանը, այլև պետք է մեկնաբանվի ավելի լայն, որպեսզի ներառի այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ անհամապատասխանությունը, անարդարությունը և կանխատեսելիության բացակայությունը:

սահմանում են երաշխիքներ՝ ապահովելու համար ազատությունից զրկված անձանց նկատմամբ այլ տեսակի չարաշահումների բացառումը: Մասնավորապես ձերբակալությունից անմիջապես հետո ձերբակալված անձինք պետք է հնարավորություն ունենան օգտվել պաշտպանի ծառայություններից: [28] Ձերբակալված անձինք իրենց համար հասկանալի, ոչ տեխնիկական լեզվով պետք է անմիջապես տեղեկացվեն իրենց ձերբակալության համար հիմք ծառայած էական իրավական և փաստական հիմքերի մասին, ինչի արդյունքում, եթե նրանք անհրաժեշտ համարեն, կկարողանան դիմել դատարան՝ ձերբակալման օրինականությունը վիճարկելու նպատակով: [29] Գլխավորապես, ՄԻԵԿ-ը պահանջում է, որ մինչդատական վարույթում կալանավորման տևողությունը խիստ սահմանափակ լինի, ինչպես նաև պարբերաբար և կարճ ընդմիջումներով դատական վերահսկողություն իրականացվի կալանավորման օրինականության նկատմամբ:[30]

Ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք ունի դատավորի կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու լիազորություն ունեցող այլ պաշտոնատար անձի առջև անհապաղ ներկայացվելու ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք:[31] Բացի այդ, կալանավորված անձինք երբեք չպետք է ենթարկվեն խոշտանգումների: [32]

Չափազանց կարևոր է, որպեսզի ձերբակալության օրինականության վերաբերյալ որոշումներում դատարանը հաշվի առնի քննությունից թաքնվելու կամ կրկին հանցանք կատարելու հավանականությանն առնչվող փաստական ապացույցները: Կալանավորումը երբեք չպետք է դիտարկվի որպես հարցի լուծման հիմնական տարբերակ այն դեպքերում, երբ անձը ենթադրաբար հանցանք է կատարել, և պետք է կիրառվի միայն այն դեպքերում, երբ առկա է իրական վտանգ, որ անձը կարող է թաքնվել կամ կրկին անգամ հանցանք գործել:[33] Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելու ընթացքում դատական վերահսկողության շրջանակը պետք է բավականաչափ լայն լինի, որպեսզի ապահովվի որոշումների ընդունման նման հնարավորությունը:

[28] Տե՛ս օրինակ՝ Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները, Վրաստան, UN Doc. CCPR/C/79 Add.75, ապրիլի 1, 1997թ., պարագրաֆ 27, »Կալանքի կամ ազատազրկման ցանկացած ձևի ենթարկված բոլոր անձանց իրավունքների պաշտպանության մասին« ՄԱԿ-ի Սկզբունքների հավաքածու, սկզբունք 17(1), Իրավաբանների դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքներ, Սկզբունք 1, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կենտրոն »Մարդու իրավունքները և կալանավորումը մինչդատական վարույթում« հունիս 1994թ., էջեր 21-23:
[29] *Fox, Campbell and Hartley v. the United Kingdom*, ՄԻԵԴ վճիռ, 30 օգոստոսի 1990թ., պարագրաֆ 40:
[30] *Bezicheri v. Italy*, 1989թ. հոկտեմբերի 25, ՄԻԵԴ վճիռ, պարագրաֆ 21: Տե՛ս նաև *Assenov and Others v. Bulgaria*, 1998թ. հոկտեմբերի 28, ՄԻԵԴ վճիռ, պարագրաֆ 162:
[31] Տե՛ս ՔՔԻՄԴ, հոդված 9(3) և ՄԻԵԿ, 5(3)-րդ հոդված:
[32] »Կալանքի կամ ազատազրկման ցանկացած ձևի ենթարկված բոլոր անձանց իրավունքների պաշտպանության մասին« ՄԱԿ-ի Սկզբունքների հավաքածու, ընդունվել է Գլխավոր ասամբլեայի թիվ 43/173 բանաձևով, 9 դեկտեմբերի 1988թ., Սկզբունք 6:
[33] Տե՛ս *Ilijkov v. Bulgaria*, ՄԻԵԴ վճիռ, 26 հուլիսի 2001թ., պարագրաֆներ 83-84:

Կալանավորումը համարվում է ամենախիստ խափանման միջոցը, որը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց, և այն դեպքերում, երբ առավել մեղմ խափանման միջոցներով հնարավոր չէ ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը և արդարադատության իրականացումը: Մարդու իրավունքների կոմիտեն այն կարծիքին է, որ մինչդատական վարույթում կալանքը պետք է ոչ միայն օրինական լինի, այլև՝ անհրաժեշտ և ողջամիտ տվյալ հանգամանքներում: Կոմիտեն նշել է, որ որպես բացառիկ միջոց՝ ՔՔԻՄԴ-ը թույլատրում է իշխանություններին անձանց արգելանքի տակ պահել, եթե դա անհրաժեշտ է դատական նիստին անձի ներկայությունը ապահովելու համար՝ »անհրաժեշտության« պահանջին տալով նեղ մեկնաբանություն:[34] Կոմիտեն նշել է, որ հանցանք կատարելու վերաբերյալ կասկածի առկայությունը՝ ինքնին բավարար չէ նախնական քննության ընթացքում և մինչև դատարանում մեղադրանքի ներկայացումը անձի կալանավորումն արդարացնելու համար: Այնուամենայնիվ, այն նշել է, որ անձին կալանավորելը կարող է անհրաժեշտ լինել նրա փախուստը կանխելու, վկաների վրա ճնշումներ գործադրելու և այլ ապացույցների նկատմամբ միջամտություն ցուցաբերելու փորձերը կանխելու, կամ այլ հանցանքների կատարումը կանխելու նպատակով: Կոմիտեն նաև գտնում է, որ անձը կարող է կալանավորվել այն դեպքում, երբ նա ակնհայտ և լուրջ վտանգ է ներկայացնում հասարակության համար, ինչն այլ կերպ հնարավոր չէ չեզոքացնել: [35] Հայաստանյան իրավիճակի ուսումնասիրության արդյունքում, Կոմիտեն իր մտահոգությունն է արտահայտել այն հանգամանքի առնչությամբ, որ »*շատ քիչ թվով կալանավորված անձինք են օգտվում գրավից, և կոչ է անում Բարձր պայմանավորվող կողմին խստորեն հետևել Դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին*«:[36]

Չափանիշը, որի հիման վրա անձը կարող է ձերբակալվել, կարևոր հանգամանք է, որը պետք է հաշվի առնել՝ ազատության իրավունքի ենթատեքստում: ՄԻԵԿ-ի համաձայն՝ »*Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով....գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար*«:[37] Այդուհանդերձ, մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ներքո ձերբակալումը հիմնավորելու համար անհրաժեշտ ողջամիտ կասկածի նվազագույն չափանիշը: ՄԻԵԴ-ի մեկնաբանության համաձայն՝ ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է

---

[34] »Կոմիտեն վերահաստատում է իր նախկին իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ կալանավորումը նախաքննության ընթացքում պետք է բացառություն լինի, և գրավը պետք է բավարարվի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է հավանականություն, որ մեղադրյալը կարող է փախչել կամ ոչնչացնել ապացույցները, ճնշել վկաներին կամ փախչել անդամ պետության տարածքից«, *Hill v. Spain*, U.N. Doc. CCPR/C/59/D/526/1993, 2 ապրիլի 1997թ., պարագրաֆ 12.3:

[35] Տե՛ս *Cnmpora Schweizer v. Uruguay*, UN Doc. CCPR/C/OP/2 at 90, 12 հոկտեմբերի 1982թ., պարագրաֆ 18.1:

[36] Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներ, Հայաստան, CCPR/C/79/Add.100., 19 նոյեմբերի 1998թ., պարագրաֆ 11:

[37] ՄԻԵԿ, հոդված 5(1):

»*փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինեն հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելն հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում*«:[38]

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առաջարկության համաձայն՝ »*հանցագործության մեջ կասկածվող անձանց արգելանքի տակ պահելը պետք է լինի բացառություն, այլ ոչ թե կանոն*« և պետք է միայն »*օգտագործվի այն ժամանակ, երբ առկա է սուր անհրաժեշտություն և որպես ծայրահեղ միջոց*«: Բացի այդ, առաջարկության համաձայն՝ անհատները պետք է արգելանքի տակ պահվեն այն դեպքերում, երբ առկա է հետևյալ պայմանների ամբողջությունը. »*ա/ ողջամիտ կասկած առ այն, որ անձը կատարել է հանցանքը, և բ/ հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ եթե անձն ազատ արձակվի, ապա (I) կթաքնվի, կամ (II) կկատարի լուրջ հանցանք, կամ (III) կմիջամտի արդարադատության իրականացման գործընթացին, կամ (IV) լուրջ սպառնալիք կհանդիսանա հասարակական կարգի համար, գ/ անհնար է »բ« կետում նշված խնդիրները լուծել այլընտրանքային միջոցների կիրառմամբ, դ/ այս քայլը հանդիսանում է քրեական արդարադատության համակարգում իրականացվող վարույթի մասը*«: [39] Այս Առաջարկության պարզաբանումը մասնավորեցնում է, որ արգելանքի տակ պահելու միջոցն օգտագործելու համար անհրաժեշտ վերոնշյալ պայմաններն »արտացոլում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, և անբաժան են, այսինքն՝ արգելանքը չի կարող կիրառվել կամ շարունակվել, եթե պայմաններից որևէ մեկը բացակայում է կամ դադարում է գոյություն ունենալուց«: [40] Հետևաբար, մեղադրանքի ծանրությունը միայն բավարար հիմք չէ անձին արգելանքի տակ պահելու համար:

## Գ. Հետևություններ և վերլուծություն

Չնայած մինչդատական վարույթին առնչվող իրավունքների իրականացման նկատմամբ դիտարկումը Ծրագրի հիմնական նպատակը չէր և մինչդատական

---

[38] *K.-F. v. Germany*, ՄԻԵԴ վճիռ, 27 նոյեմբերի 1997թ,, պարագրաֆ 57: Համեմատության համար ԱՄՆ-ում ձերբակալություն իրականացնելու կամ անձի կամ սեփականության՝ միջամտող բնույթի խուզարկություն կատարելու համար սահմանադրորեն երաշխավորված չափանիշը փաստերի վրա հիմնված կասկածն է, որն ավելի խիստ չափանիշ է, քան ողջամիտ կասկածը, և պահանջում է »*բավարար ուժ ունեցող հանգամանքներով հիմնավորված ողջամիտ քանակի կասկած, որը խելամիտ և զգուշավոր անձին կհամոզեր, որ որոշ փաստեր ճշմարիտ են*«: (Տե՛ս Handler, J.G., *Ballentine's Law Dictionary: Legal Assistant Edition* (1994թ., Albany: Delmar Publishers), էջ 431):

[39] Նախարարների կոմիտեի թիվ Rec(2006)13 առաջարկն ուղղված անդամ պետություններին՝ »Արգելանք կիրառելու, դրա կիրառման պայմանների և չարաշահումների դեմ երաշխիքներ տրամադրելու մասին« (ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից, 2006թ.սեպտեմբերի 27-ին՝ փոխնախարարների 974-րդ հանդիպման ընթացքում, կետեր 3(1) 3(3) և 7):

[40] Թիվ Rec(2006)13 Առաջարկի պարզաբանում, Հավելված CM(2006)122, 30 օգոստոսի 2006թ., պարագրաֆ 7:

վարույթը դուրս էր դիտարկումների շրջանակից, այնուամենայնիվ, մինչդատական վարույթում անձնական ազատության իրավունքին առնչվող տեղեկությունները ձեռք են բերվել որպես դատավարությունների դիտարկման գործընթացի բնական հետևանք, որի արդյունքները ներկայացված են այս գլխում:[41] Պաշտպանների կողմից բազմիցս լուրջ հարցեր են բարձրացվել ձերբակալությունների և կալանքի՝ որպես խափանման միջոց ընտրության օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ, որոնք, հետևաբար, դիտարկվել և զեկուցվել են դիտորդների կողմից: Սույն գլխում տեղ գտած հետևությունները հիմնված են առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում դատաքննությունների դիտարկումների վրա, ինչպես նաև Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված դատական ակտերի վրա, ներառյալ՝ Վճռաբեկ դատարանի որոշումների վրա:

### *i. Կալանավորված անձին մինչև դատաքննությունը արգելանքի տակ պահելու մասին որոշումը*

Հայաստանի Հանրապետության ՔԴՕ-ի համաձայն՝ մինչդատական վարույթում անձին կալանքի տակ վերցնելը կարող է իրականացվել դատարանի որոշմամբ:[42] Ուստի, անձը կարող է պահվել կալանքի տակ դատարանի որոշման հիման վրա, ինչը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Միևնույն ժամանակ, դիտարկումների արդյունքում ի հայտ են բերվել մի շարք խնդիրներ՝ կապված դատական վերահսկողության շրջանակի և այն եղանակի հետ, որով դատավորներն իրականացնում են այս գործառույթը: ՔԴՕ-ն չի պահանջում, որպեսզի դատավորներն ուսումնասիրեն ողջամիտ կասկածի առկայությունն առ այն, որ ձերբակալված անձը կատարել է հանցանք, և ստուգեն ոստիկանության կողմից նրա ձերբակալության օրինականությունը:[43] Այնուամենայնիվ, դատավորների այդ պարտականությունը բխում է ՀՀ Սահմանադրությունից[44] և այն ուղղակիորեն հաստատվել է Վճռաբեկ դատարանի կողմից[45]:

---

[41] Մինչդատական վարույթին, ներառյալ՝ նախնական կալանքին առնչվող որոշ խնդիրների իրավական վերլուծության համար տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքը՝ *»Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի քրեական գործերի մինչդատական վարույթի վերաբերյալ բաժինը փոփոխությունների ենթարկելու մասին օրենքի նախագծի«* վերաբերյալ, Վարշավա 15 հուլիսի 2009թ., Կարծիք N CRIM ARM/136/2009(MA), որը հասանելի է http://www.legislationline.org/download/action/download/id/2737/file/FINAL%20Opinion%20Armenia%20CC%20Pre-Trial%20Rights%2015%20July.pdf

[42] Տե՛ս բաժին Ա. վերևում:

[43] ՔԴՕ, գլուխ 17:

[44] Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված մեկնաբանություններում Դատական դեպարտամենտը նշել է, որ այս պարտականությունը հստակորեն սահմանված է Սահմանադրության 16-րդ հոդվածով, մինչդեռ ՔԴՕ-ի 1-ին հոդվածը սահմանում է, որ ՀՀ տարածքում քրեական գործերով վարույթի կարգն առաջնահերթ սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ: Ավելին, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով ՄԻԵԿ-ը հանդիսանում է ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը և կիրառելիության առումով ունի գերակայություն ՀՀ օրենքների նկատմամբ:

[45] Մասնավորապես, *Ալբերտ Մկրտչյանի* վերաբերյալ գործով դեռևս 2005 թ. Սեպտեմբերի 9-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ *»անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, միայն այդ դեպքում է ազատությունից զրկումը համարվում օրինական և հիմնավորված: Սակայն, կասկածը*

Պրակտիկայում դատավորները քննարկում են այն հարցը, թե արդյո՞ք ձերբակալված անձը պետք է մնա արգելանքի տակ՝ առանց առաջին հերթին ստուգելու, թե արդյո՞ք առկա էին անձին ձերբակալելու հիմքեր՝ հիմնականում հիմնվելով ոստիկանության կողմից իրականացված ձերբակալության օրինականության կանխավարկածի վրա: Եթե դատավորը չի պարզում ձերբակալության համար անհրաժեշտ ողջամիտ կասկածի առկայությունը, ապա նման դատական վերահսկողությունը չի համապատասխանում արդար դատաքննության միջազգային չափանիշներին: Դատական վերահսկողության շրջանակները մինչդատական վարույթում ազատությունից զրկելու հետ կապված կամ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցների մեխանիկական կիրառումով սահմանափակելը հակասում է վարույթի այս փուլում դատական միջամտության բուն էությանը, այն է՝ անձնական ազատության իրավունքի իրականացմանը արդյունավետ երաշխիքի ապահովումը: Արդյունքում քրեական հետապնդման ելքի վրա ազդեցություն ունեցող որոշ հիմնարար հարցեր մնում են անպատասխան: Վերոնշյալը հաստատվել է նրանով, թե ինչպես են դատարանները նիստի ընթացքում քննում պաշտպանության կողմի միջնորդությունները՝ ենթադրաբար անօրինական կամ կամայական ձերբակալության հետ կապված ապացույցները բացառելու, կամ անմարդկային վերաբերմունքի և ոստիկանական բռնությունների առնչությամբ բարձրացվող խնդիրների վերաբերյալ:[46]

ՔԴՕ-ի՝ սահմանափակ դատական վերահսկողության խնդիրը մասամբ հնարավոր կլիներ լուծել դատավորների կողմից խափանման միջոցի, այդ թվում՝ կալանավորման ընտրությանն առնչվող գործող օրենսդրության բարեխիղճ կիրառման միջոցով: Սակայն ձեռք բերված տեղեկությունները բացահայտում են, որ դատարաններն այս կարևոր խնդրի հանդեպ ցուցաբերել են մակերեսային մոտեցում՝ չնայած ՔԴՕ-ն պահանջում է հետազոտել յուրաքանչյուր անհատական գործի փաստական հանգամանքները,[47] խափանման միջոցի կիրառման վերաբերյալ իրենց որոշումները հիմնավորելիս դատարանները շարունակաբար չեն անդրադարձել գործի փաստական հանգամանքներին: Այս խնդիրներին վերաբերող դատական ակտերը սովորաբար պարունակում էին թաքնվելու սպառնալիքի և/կամ քննության համար խոչընդոտներ ստեղծելու վտանգի վերաբերյալ վերացական ենթադրություններ, սակայն դատավորները թերացել են

---

*հիմնավորված կհամարվի միայն ենթադրվող հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող հիմնավոր փաստերի և տեղեկությունների առկայության դեպքում: Այսինքն, պետք է լինեն ապացույցներ, որ կասկածվող անձի կատարած գործողությունները ուղղակիորեն մատնանշում են նրա առնչությունը կատարված հանցագործությանը...«*: Հետագայում նշված մոտեցումը վերահաստատվել է *Արամ Ճուղուրյանի* վերաբերյալ 2007 թ. օգոստոսի 30-ի և *Ասլան Ավետիսյանի* վերաբերյալ 2008 թ. հոկտեմբերի 31-ի որոշումներում (մեջբերումները՝ Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ Դատական դեպարտամենտի ներկայացրած մեկնաբանություններից):

[46] Տե՛ս գլուխ 5՝ ներքևում:

[47] Հոդված 285(1), »*Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութեր«.*

նշել որևէ կոնկրետ փաստ կամ բացատրություն առ այն, թե ինչպես է օրենքը կիրառվում տվյալ անհատական հանգամանքների նկատմամբ:

| |
|---|
| Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի՝ 2008թ. փետրվարի 29-ի կալանավորման վերաբերյալ որոշման համաձայն՝ »կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ մեղադրյալը կարող է թաքնվել քննությունից, խոչընդոտել նախաքննության իրականացմանը՝ վարույթում ներգրավված անձանց նկատմամբ անօրինական ճնշում գործադրելու միջոցով«:[48] |

Իրենց որոշումներում դատավորներն օգտագործել են ստանդարտ արտահայտություններ և հղումներ օրենսդրական դրույթներին, և տարբեր դատարանների որոշումները զարմանալիորեն նման էին միմյանց: Ստանդարտ, տիպային որոշումների ընդունումը և կալանավորման կիրառումն արդարացնող համոզիչ հիմքեր ապահովելու պարտականությունը չկատարելը հանդիսանում են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերով ամրագրված անձնական ազատության իրավունքի լուրջ սահմանափակում:[49]

Մինչդատական վարույթում մեղադրյալի նկատմամբ կալանավորում կիրառելու, հետագայում՝ կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ գրեթե բոլոր որոշումներում դատավորներն առանց վարանելու սահմանել են երկամսյա ժամկետը՝ կալանավորման հնարավոր առավելագույն ժամկետը, որը կարելի է կիրառել յուրաքանչյուր դեպքում: Գործի անհատական հանգամանքների և բարդության անտեսմամբ՝ բոլոր կասկածյալների նկատմամբ ստանդարտ (առավելագույն) ժամկետով կալանք կիրառելու այս պրակտիկան վերահաստատում է որոշումների կայացման մակերեսային բնույթի առնչությամբ ստացված տպավորությունը:[50]

| |
|---|
| Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի՝ 2008թ. փետրվարի 25-ի, 2008թ. փետրվարի 27-ի, 2008թ. մարտի 4-ի, 2008թ. մարտի 8-ի և 2008թ. ապրիլի 25-ի որոշումներում դատավորներն ըստ էության օգտագործել են նույնական արտահայտություններ՝ մեղադրանքների լրջության, թաքնվելու վտանգի, նախաքննությանը խոչընդոտելու, և կրկին հանցանք կատարելու վերաբերյալ, որպեսզի հիմնավորեն կալանավորման կիրառումը՝ հիմնականում վերարտադրելով օրենքի դրույթը: Կոնկրետ փաստական հանգամանքներ կամ ապացույցներ չեն հիշատակվել:[51] |

48 Փաստաթուղթ No.1, գտնվում է Ծրագրի շրջանակներում արխիվացված գործերի նյութերում:
49 Տե՛ս Mansur v. Turkey, ՄԻԵԴ վճիռ, 8 հունիսի 1995թ., պարագրաֆ 55:
50 R.N.05-12.05.2008, R.N.08-15.05.2008, R.N.13-04.06.2008, R.N.26-19.06.2008, R.N.17-11.06.2008, R.N.25-18.06.2008, R.N.27-19.06.2008, R.N.35-24.06.2008, R.N.78-03.09.2008, R.N.86-25.09.2008, R.N.137-22.06.2009, R.N.138-25.06.2009, R.N.139-10.07.2009.
51 R.N.130-29.04.2009, R.N.31-23.06.2008, R.N.25-18.06.2008, R.N.61-04.08.2008, R.N.25- 18.06.2008, R.N.129-16.03.2009.

Որոշումներ կայացնելիս դատարանները պատրաստակամորեն հանդես էին գալիս քննիչների և դատախազների կողմում: Կալանավորումը կիրառելու (իսկ հետագայում դրա ժամկետը երկարացնելու) վերաբերյալ նրանց միջնորդությունները սովորաբար բավարարվում էին դատարանների կողմից: Պարզվում է, որ որոշ դեպքերում դատարանի որոշումը հիմնականում վերարտադրում է մեղադրանքի կողմի ներկայացրած՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդության մեջ տրված ձևակերպումները:[52]

Ներպետական և միջազգային իրավունքի նորմերը Հայաստանի Հանրապետության դատարաններին պարտավորեցնում են քննարկել նախնական կալանքի փոխարեն այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորության հարցը:[53] Սակայն, պարզվում է, որ շատ դատավորներ չեն քննարկել գրավի դիմաց ազատ արձակելու հնարավորության հարցը և դատարանի որոշումներում չկա անդրադարձ այս խնդրին: Ամենահաճախակի կիրառված խափանման միջոցը կալանավորումն է. այն կիրառվել է դիտարկված գործերի 83%-ում: (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակ 1):

---

[52] R.N.11-24.05.2008, R.N.108-25.11.2008, R.N.78-03.09.2008, Ծրագրի նյութերում առկա Փաստաթուղթ No.2:

[53] ՔԴՕ, հոդված 132(2): Միջազգային չափանիշները նախատեսում են, որ անձին ազատ արձակելու կամ կալանավորելու հարցը որոշելիս՝ դատական իշխանությունները պարտավոր են քննարկելու անձի՝ դատարան ներկայանալն ապահովելու այլընտրանքային միջոցների կիրառման հարցը: Հռչակվում է ոչ միայն »*ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու*« *իրավունքը, այլև այն, որ* »*ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով*« [Տե՛ս *Kaszczyniec v. Poland*, no. 59526/00, » 57, 22 մայիսի 2007թ.]: Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված մեկնաբանություններում Դատական դեպարտամենտը նշել է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007 թ. հուլիսի 13-ի՝ *Սարոն Հակոբյանի* վերաբերյալ գործով կայացված նախադեպային որոշմամբ ընդլայնվեց գրավի կիրառման շրջանակը: Վճռաբեկ դատարանը սահմանեց, որ գրավի կիրառման հարցի քննարկումը չի կարող կախվածության մեջ դրվել անձին մեղսագրվող հանցագործության ծանրության աստիճանից:




Հինգ գործերով, նախապես որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացվել է և փոխարինվել գրավով կամ չհեռանալու մասին ստորագրությամբ:[54]

Որոշ դեպքերում, մեղադրանքի ծանրությունն ինքնին համարվել է նախնական կալանքի կիրառման համար բավարար հիմք, ինչը հակասում է միջազգային չափանիշներին:[55]

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանն իր՝ 2008թ. մարտի 10-ի որոշման հիմնավորման մեջ նշել է. »հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հանցանքի կատարման համար, որի մեջ կասկածվում է մեղադրյալը, Քրեական օրենսգրքով սահմանված ազատազրկման առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է՝ դատարանը գտնում է, որ [մեղադրանքի կողմի] միջնորդությունը հիմնավորված է և ենթակա է բավարարման«:[56]

Դիտարկումը նաև բացահայտել է երկու լրացուցիչ խնդիրներ՝ կապված խափանման միջոցի ընտրության ընթացակարգի հետ: Առաջինն առնչվում է թափանցիկության բացակայությանը, քանի որ այս կապակցությամբ որոշումները դատավորի կողմից ընդունվում են դռնփակ նիստում: [57] Երկրորդ խնդիրը

---

[54] R.N.04-09.05.2008, R.N.06-13.05.2008, R.N.29-20.06.2008, R.N.42-04.07.2008, R.N.61-04.08.2008.

[55] *Nikolov v. Bulgaria*, ՄԻԵԴ վճիռ, 30 հունվար 2003թ., պարագրաֆ 70:

[56] R.N.58-16.06.2008.

[57] ԵԱՀԿ-ի մասնակից բազմաթիվ պետություններում (օրինակ՝ Ղազախստան, ԱՄՆ, ՄԲ և Գերմանիա) ընթացակարգը հրապարակային է: Ռուսաստանի Դաշնությունում, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումն իր՝ 2004թ. մայիսի 5-ի թիվ 1 որոշման մեջ նշել է, որ *»Օրենքի համաձայն՝ կալանավորում կիրառելու կամ երկարացնելու վերաբերյալ միջնորդության*

վերաբերում է այն դեպքերին, երբ ամբաստանյալի նկատմամբ կալանավորման վերաբերյալ որոշումը կայացրել են այն դատավորները, որոնք հետագայում ըստ էության քննել են նույն գործը: Կախված այն հանգամանքից, թե դատավորն ինչը կհամարի հաստատված, երբ կալանավորման հարցի առնչությամբ և/կամ նիստի ընթացքում իր դերի վերաբերյալ որոշում կայացնի՝ կարելի է պնդել, որ կասկածյալին կալանքի տակ պահելու նախնական որոշումը կարող է բացասաբար ազդել դատավորի՝ գործը պատշաճ մակարդակի անկողմնակալությամբ քննելու ունակության վրա:[58]

### *ii. Կալանավորման ժամկետի երկարացումը և շարունակվող կալանքի բողոքարկումը*

Ոչ միայն ազատությունից զրկելու սկզբնական ժամանակահատվածում, այլև հետագայում ներառյալ՝ գործի դատական քննության ընթացքում, կալանավորման օրինականություն նկատմամբ դատարանի կողմից արագ և պարբերաբար վերանայման անձի իրավունքն ամրագրված է միջազգային չափանիշներով:[59] Հայաստանում, պաշտպանության կողմը կարող է վիճարկել շարունակական կալանավորման օրինականությունը՝ վերադաս դատարանին բողոք և դատական նիստի ընթացքում միջնորդություններ ներկայացնելով:[60] Դիտարկումների ծրագրի արդյունքները կասկածի տակ են դնում այս իրավական միջոցների արդյունավետությունը:

Միջազգային չափանիշները պահանջում են, որպեսզի ոչ միայն ազատությունից զրկելը լինի օրինական ներպետական իրավունքի իմաստով, այլև՝ պարտավորեցնում է պետական իշխանություններին՝ շարունակական կալանավորումը արդարացնելու համար պատշաճ հիմնավորումներ

---

*քննարկումն իրականացվում է հրապարակային ընթացակարգով, բացառությամբ 24.1-րդ հոդվածի 2-րդ մասի*«:

[58] Տե՛ս *Քրեական դատավարության ուղեցույց* (Բրյուսելի աշխատանքային խմբի կողմից պատրաստված Զեկույցի Հավելված: ԵԱՀԿ Բելգիական նախագահություն, 24 նոյեմբեր 2006), հասանելի է http://www.osce.org/documents/cio/2007/11/28253_en.pdf, »2.3.2. »Գործն ըստ էության քննող դատավորը քրեական դատավարության մինչդատական փուլերի ընթացքում չպետք է գործին որևէ առնչություն ունենա«: Տե՛ս ՄԻԵԴ-ի համապատասխան նախադեպային իրավունքը. *Hauschildt v. Denmark* գործով ՄԻԵԴ վճիռ, 24 մայիսի 1984թ., որտեղ դատավորի կողմից մինչդատական կալանքի ստուգման ընթացքում նիստը նախագահող դատավորը գտել էր, որ առկա է »հատկապես հիմնավորված կասկած«, որ դիմողը կատարել էր վերագրվող հանցագործությունը: Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված մեկնաբանություններում Դատական դեպարտամենտը նշել է, որ Ilijkov v. Bulgaria գործով ՄԻԵԴ վճռից, որ »*միայն այն փաստը, որ տվյալ գործն ըստ էության քննող դատավորը նույն գործով կալանավորման որոշումներ է կայացրել ինքնին չի հիմնավորում այն մտահոգությունը, որ այդ դատավորն անկողմնակալ չի լինի*«: Դատական դեպարտամենտը նաև նշել է, որ այդպիսի իրավիճակները եզակի բնույթ են կրում:

[59] Տե՛ս *Navarra v. France*, 23 նոյեմբերի 1993թ., ՄԻԵԴ վճիռ, պարագրաֆ 26: Տե՛ս նաև՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec(2006)13 Առաջարկն անդամ պետություններին՝ »Արգելանք կիրառելու, դրա կիրառման պայմանների և չարաշահումների դեմ երաշխիքներ տրամադրելու մասին« (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից՝ 2006թ. Septemberի 27-ին):

[60] ՔԴՕ, հոդվածներ 102, 287 և 288:

ներկայացնել:[61] Կալանավորումը երկարացնելու վերաբերյալ հարցը քննարկելիս՝ ՄԻԵԴ-ը կիրառում է առավել խիստ չափանիշներ, քան սկզբնական կալանավորման արդարացման դեպքում՝ պահանջելով ներկայացնել շարունակական կալանավորումն արդարացնող պատշաճ և բավարար հիմքեր:[62] Այնուամենայնիվ, այս որոշումների հանդեպ դատավորները չեն ցուցաբերել պատշաճ լրջության, ինչը սահմանված է այս չափանիշներով: Մեղադրյալների նկատմամբ կալանք կիրառելու վերաբերյալ սկզբնական որոշումների առնչությամբ արտահայտված վերոնշյալ մտահոգությունների գերակշիռ մասը հավասարապես կիրառելի են շարունակական կալանավորման վերաբերյալ որոշումներին:

Ուսումնասիրված գրեթե բոլոր գործերում, կալանավորման սկզբնական ժամկետը ավարտվելուց հետո դատավորները շարունակաբար երկարացնում էին կալանքի ժամկետը երկու ամիս ժամկետով՝ որն այն առավելագույն ժամկետն է, որը թույլատրված է նշանակել յուրաքանչյուր դեպքում: Միայն երկու դեպքում են կալանավորման ժամկետները երկարացվել 15 և 20 օրով:[63] Բացառությամբ մեկ դեպքի՝ ամբաստանյալները մինչև դատաքննության ավարտը գտնվել են կալանքի տակ:[64] Մեկ դեպքում, ամբաստանյալն ազատ է արձակվել վերաքննիչ բողոքի քննության ընթացքում, քանի որ առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված ազատազրկման ժամկետը նա կրել էր նախնական կալանքի ընթացքում: [65]

Նման պրակտիկան վկայում է, որ դատավորները յուրաքանչյուր անհատական դեպքում չեն գնահատում իրական և հնարավոր վտանգները՝ սահմանափակվելով նախկին որոշումների ձևական հաստատմամբ: Որոշ դեպքերում, դատավորները պարզապես կրկնում էին այն ձևակերպումները, որոնք տրվել էին՝ քննության նախնական փուլում կալանավորումն արդարացնելու նպատակով: [66] Տպավորությունն այն է, որ դատավորները քննադատաբար չեն հետազոտում մեղադրանքի կողմի միջնորդությունները՝ առավելագույն ժամկետով կալանավորման շարունակական կիրառման վերաբերյալ:[67]

| |
|---|
| 2008թ. հունիսի 30-ի դատական նիստին պաշտպանության կողմը միջնորդություն ներկայացրեց դատարանին՝ խնդրելով վերացնել կամ փոփոխել խափանման միջոցը (կալանավորումը), քանի որ գործի վարույթն արդեն հասել էր դատական քննության փուլին, նախաքննությունն ավարտված էր, բոլոր քննչական գործողություններն ավարտված էին, և հետևաբար, արդարադատության իրականացմանը միջամտելու վտանգ այլևս չկար: Դատավորը մերժում է միջնորդությունն այն պատճառաբանությամբ, որ վերագրվող արարքը, ըստ |

[61] *Letellier v. France*, ՄԻԵԿ վճիռ, 26 հունիսի 1991թ., պարագրաֆ (35: *Mansur v. Turkey*, ՄԻԵԴ վճիռ, 8 հունիսի 1995թ., պարագրաֆ 52: *Shishkov v. Bulgaria*, ՄԻԵԴ վճիռ, 9 ապրիլի 2003թ., պարագրաֆ 58:

[62] Տե՛ս *Wemhoff v. Germany*, ՄԻԵԴ վճիռ, 27 հունիսի 1968թ., պարագրաֆներ 12-17:

[63] R.N.61-04.08.2008, R.N.112-02.12.2008.

[64] R.N.129-16.03.2009.

[65] R.N.128-26.03.2008.

[66] R.N.112-01.12.2008.

[67] R.N.83-18.09.2008, R.N.139-10.07.2009, R.N.138-25.06.2009, R.N.108-25.11.2008, R.N.130-29.04.2009, R.N.131-29.04.2009, R.N.112-01.12.2008.

Քրեական օրենսգրքի, դասվում է »ծանր« հանցանգործությունների շարքին, հետևաբար՝ շարունակական կալանավորումն արդարացված է:[68]

Առնվազն մեկ դեպքում, մեղադրանքի կողմն ազատվել է ապացուցման պարտականությունից, և կալանավորման հիմքերի բացակայությունն ապացուցելու պարտականությունը դրվել է պաշտպանության կողմի վրա:

2008թ. ապրիլի 9-ի որոշման մեջ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի դատավորը նշել է. »պաշտպանը չի ներկայացրել որևէ ապացույց՝ հիմնավորելու համար, որ ազատության մեջ գտնվելով ամբաստանյալը չի թաքնվի քննությունից, չի կատարի նոր հանցանք կամ չի գա զաղտնի համաձայնության, մինչդեռ ամբաստանյալը մեղադրվում է ծանր հանցանք կատարելու մեջ, որի համար սահմանված է 5-10 տարի ազատազրկում, ինչը հետևաբար մեծացնում է թաքնվելու վտանգը«:[69]

ՄԻԵԴ-ը սահմանել է, որ ազատությունից զրկելու հետ կապված հարցերի առնչությամբ ապացուցման բեռը կալանավորված անձի վրա դնելը հավասարազոր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածում ամրագրված կանոնի վերացմանը: Միջազգային չափանիշները շարունակական կալանքն արդարացնելու պարտականությունը հստակորեն դնում են մեղադրանքի կողմի վրա:[70]Վերոնշյալ գործով դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ բացակայում են դիմումատուին ազատ արձակելու համար անհրաժեշտ բացառիկ հանգամանքները, ապացուցման բեռը դնում է կալանքի տակ գտնվող անձի վրա, և ընդունելի չէ:

Դատական քննության ընթացքում պաշտպանության կողմի՝ խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունները հաճախ թողնվել են առանց քննության: Դատավորները հետաձգել են այդ միջնորդությունների վերաբերյալ որոշման կայացումը՝ »մինչև հարցի լուծման համար նշանակություն ունեցող համապատասխան փաստերի հետազոտումը«, ինչը հաճախ նշանակում էր գործով դատավճռի կայացումը (երբ խնդիրը դառնում էր վիճելի): [71] Այդ պրակտիկան հնարավոր չէ արգելել ներպետական օրենսդրության օգնությամբ,[72] սակայն խիստ վիճահարույց է միջազգային չափանիշների լույսի ներքո, մասնավորապես այն պահանջի, որ կալանավորման օրինականության վիճարկմանն առնչվող հարցերը պետք է անհապաղ լուծում ստանան:[73]

---

[68] R.N.48-17.07.2008.
[69] R.N.61-04.08.2008.
[70] *Ilijkov v. Bulgaria,* ՄԻԵԴ վճիռ, 26 հուլիսի 2001թ., պարագրաֆ 85: *Nikolov v. Bulgaria*, ՄԻԵԴ վճիռ, 30 հունվարի 2003թ., պարագրաֆ 70:
[71] R.N.108-25.11.2008.
[72] ՔԴՕ, հոդված 102(2):
[73]Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային չափանիշները, երաշխավորելով ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ իրենց ազատությունից զրկելու օրինականությունը վիճարկելու իրավունքը, նաև ճանաչում են նրանց՝ նշված վարույթը հարուցելուց հետո կալանավորման օրինականության վերաբերյալ և, եթե կալանավորումն անօրինական է, ապա դրա դադարեցման վերաբերյալ դատարանի կողմից արագ որոշում կայացնելու իրավունքը: Արագ որոշում կայացնելու պահանջը հավասարապես վերաբերում է սկզբնական որոշման այն մասին, թե արդյոք

Աժ նախկին պատգամավոր, ամբաստանյալ Ս.-ի գործի դատական նիստի ընթացքում պաշտպանը բազմիցս միջնորդությամբ դիմել է դատարանին՝ կալանքի ձևով նշանակված խափանման միջոցը այլընտրանքային խափանման որևէ միջոցով փոփոխելու խնդրանքով: 2008թ. ապրիլի 30-ին պաշտպանը միջնորդություն է ներկայացրել՝ պնդելով է, որ Ս.-ն նախկինում դատված չի եղել և ունի լավ համբավ, ուստի ամբաստանյալի՝ քննությունից թաքնվելու վտանգի վերաբերյալ հիմքը չի արդարացնում կալանավորումը: Իր միջնորդությունը հիմնավորելու նպատակով՝ պաշտպանը Ս.-ի օգտին Խորհրդարանի Ժառանգություն կուսակցության անդամների կողմից ստորագրված գրավոր երաշխավորություն է ներկայացրել: Դատավորը մերժել է այս միջնորդությունը՝ առանց պատճառաբանության: 2008թ. մայիսի 14-ի և 2008թ. հունիսի 17-ի նիստերի ընթացքում պաշտպանը կրկին ամբաստանյալին կալանքից ազատելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել, սակայն այս միջնորդությունները նորից մերժվել են առանց հստակ պատճառաբանության: Պաշտպանը 2008թ. հուլիսի 17-ին նորից խնդրել է դատարանին ազատ արձակել Ս.-ին կամ գրավ կիրառել: Ի հավելումն վերոնշյալի, պաշտպանը խնդրել է դատավորին անհապաղ քննարկել միջնորդությունը և հարցի շուրջ կայացնել պատճառաբանված որոշում: Այս անգամ դատավորը հետաձգել է միջնորդության քննարկումը և դատաքննության ընթացքում այլևս չի անդրադարձել դրա քննությանը: Հետագայում պաշտպանը ներկայացրել է համանման միջնորդություններ՝ 2008թ. օգոստոսի 5-ին և 2008թ. հոկտեմբերի 22-ին, սակայն դատավորը կրկին հետաձգել է դրանց քննությունը: Միջնորդություններն առանց քննության են թողնվել մինչև 2008թ. նոյեմբերի 10-ին դատավճռի հրապարակումը:[74]

Ամբաստանյալ Դ.-ի գործով նշանակված առաջին նիստի օրը՝ 2008թ. ապրիլի 28-ին, պաշտպանը միջնորդել է փոփոխել Դ.-ի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ վիճարկելով, որ նրա կալանավորումն անօրինական է և այլևս արդարացված չէ: Այս միջնորդությունը մերժվել է առանց պատճառաբանության: Միջնորդությունը կրկին ներկայացվել է երկրորդ նիստին՝ 2008թ. մայիսի 15-ին: Դատավորը պաշտպանին հայտնել է, որ նա ամբաստանյալի կալանքի ժամկետի երկարացման կամ ազատ արձակման հարցի վերաբերյալ որոշում կկայացնի՝ ապացույցների հետազոտման ավարտից հետո: Սակայն դատավորը միջնորդության վերաբերյալ որոշում չի ընդունել մինչև դատաքննության ավարտը և 2008թ. հունիսի 16-ի՝ և դատավճռի հրապարակումը:[75]

Եղել են նաև մի շարք գործեր, երբ դատարանները ժամանակին որոշումներ չեն կայացրել կալանքի ժամկետի երկարացման վերաբերյալ և ամբաստանյալներն առանց որևէ իրավական հիմքի մնացել է ազատությունից զրկված:

2008թ. հուլիսի 22-ին պաշտպանության կողմը դատարանին միջնորդել է ազատ արձակել ամբաստանյալ Բ.-ին: Պաշտպանի պնդմամբ, դատարանն իր հուլիսի 14-

կալանավորումն օրինական է և այդ որոշման՝ ներպետական օրենքով կամ կարգով սահմանված բողոքարկմանը: [Տե՛ս *Navarra v. France*, ՄԻԵԴ վճիռ, 23 նոյեմբերի 1993թ., պարագրաֆ 28]:
[74] R.N.108-25.11.2008.
[75] R.N.35-24.06.2008.

ի որոշման մեջ չի անդրադարձել կալանավորման հարցի լուծմանը, իսկ նախկին դատական ակտով սահմանված կալանավորման ժամկետը լրացել է դեռևս հուլիսի 15-ին: Դատավորը մերժել է միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ տեղի է ունեցել »*տեխնիկական սխալ*«, որը ուղղվել է 2008թ. հուլիսի 22-ի իր որոշմամբ:[76]

Կալանավորման վերաբերյալ որոշումներում առկա թերությունները չեն շտկվել վերաքննության ընթացքում: Վերաքննիչ դատարանի որոշումներում հաճախ չեն քննարկվել կամ նույնիսկ չեն նշվել բողոք բերող անձի կողմից ներկայացված փաստարկները: Դրանցում ուսումնասիրության չի ենթարկվել ողջամիտ կասկածի առկայությունը՝ որպես մինչդատական վարույթում կալանավորման հիմք: Նմանապես ամենախիստ խափանման միջոցը կիրառող որոշումները որևէ կերպ չեն ենթարկվել քննադատական գնահատականի: Վերաքննիչ ատյանի դատավորները դժկամություն էին ցուցաբերում նախկին որոշումների հիմնավորվածությունը ստուգելիս: Մարտի 1-ի և 2-ի գործերի առնչությամբ ներկայացված բազմաթիվ բողոքներից միայն մեկն է բավարարվել և կալանավորումը՝ որպես խափանման միջոց փոխարինվել է գրավով:[77]

Վճռաբեկ դատարան ներկայացված մի գործով Վճռաբեկ դատարանը մատնանշել է կալանավորման նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության բացակայությունը:

*Վճռաբեկ դատարան: Ասլան Ավետիսյանի գործը*

Ասլան Ավետիսյանի գործով (մարտի 1-ի և 2-ի դեպքերին առնչվող գործերով ամբաստանյալներից մեկը) Վճռաբեկ դատարանը՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական մարմինը, Հայաստանում կալանավորման կիրառման առնչությամբ ընդգծել է մի շարք կարևոր խնդիրներ:[78]

Դատարանը մատնանշել է այն հանգամանքը, որ կալանավորում կիրառելու վերաբերյալ թե առաջին ատյանի, և թե վերաքննիչ ատյանի դատարանների որոշումները պատճառաբանված չեն եղել փաստական հանգամանքների վրա հիմնված ողջամիտ եզրահանգումներով: Դատավորները պարզապես հղումներ են կատարել կալանավորման հիմքերին առնչվող օրենսդրական դրույթներին և դրանցից մեջբերումներ են կատարել: Դատարանը գտել է, որ նման պատճառաբանությունը բավարար չէ և նշել, որ ստորադաս դատարանները պետք է պատշաճ մոտեցում ցուցաբերեն փաստական հանգամանքներին, իսկ իրենց որոշումների համար հիմք պետք է հանդիսանան գործի անհատական հանգամանքները: Հակառակ դեպքում, դատարանը նշել է, որ »անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրավաչափ սահմանափակման իրավական երաշխիքները կլինեն վերացական և

[76] R.N.122-02.12.2008: Տե՛ս նաև՝ R.N.108-25.11.2008, R.N.78-03.09.2008.
[77] R.N.61-04.08.2008.
[78] Որոշում ԱՎԴ/0022/06/08, 31 հոկտեմբերի 2008թ. :

բովանդակազուրկ«: Կալանավորման կոնկրետ հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի բոլոր եզրահանգումները պետք է բխեն գործի նյութերից:[79]

Դատարանը նաև գտել է, որ հանցանքի ծանրությունն ու քննչական գործողություններ իրականացնելու անհրաժեշտությունը չեն կարող համարվել կալանավորման կիրառումն արդարացնող թույլատրելի հիմքեր:

### *iii. Այլ խնդիրներ: ձերբակալության ճշգրիտ գրանցման բացակայությունը*

Ծրագրի դիտորդները բազմակողմանի տեղեկություններ ձեռք չեն բերել գործերի մինչդատական վարույթների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, մի շարք դատական նիստերի ընթացքում պարզվել է, որ պաշտպանության կողմը բարձրացրել է կարևոր հարցեր, որոնք մատնանշում էին Հայաստանում ձերբակալման վերաբերյալ հարցերի դատավարական կարգավորման անկատարությունը:

Ամբաստանյալների և նրանց պաշտպանների վկայությամբ, անձի ձերբակալումը հաստատող փաստաթղթերում (ձերբակալելու մասին արձանագրություն) հաճախ սխալ տեղեկություններ են պարունակվել անձին փաստացի ձերբակալելու պահի վերաբերյալ: Մի շարք դեպքերում, պաշտպանները համոզիչ կերպով ցուցադրեցին, որ ձերբակալման արձանագրությունները կազմվել են փաստացի ձերբակալումից ժամեր և նույնիսկ օրեր անց՝ ի խախտումն այդ ընթացակարգերի համար սահմանված[80] իրավական ժամկետների:[81]

## Դ. Եզրահանգումներ

Դիտարկված նիստերը թույլ են տալիս ազատության իրավունքին առնչվող գործող օրենսդրության և պրակտիկայի կապակցությամբ հայտնել մտահոգություններ: Հայաստանում ձերբակալության ու կալանավորման պրակտիկան անհրաժեշտ է առավել մոտեցնել համապատասխան միջազգային չափանիշներին:

Ձերբակալման և կալանավորման հարցերի առնչությամբ արձանագրված խնդիրները մատնանշում են, որ առկա է օրենսդրության վերանայման, առկա

---

[79] Իր նախկին որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանը նշել է, որ կալանավորումն ամենախիստ խափանման միջոցն է: Այն կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ խափանման այլ հնարավոր միջոցներով հնարավոր չէ ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը: Այս առումով, կալանավորման հիմքերը համարվում են օրենսդրորեն սահմանված հանգամանքներ, որոնք պետք է ապացուցվեն քրեական գործով ձեռք բերված նյութերով: Վերջիններս որոշում են, թե արդյոք կալանավորման կիրառումը հիմնավորված է, թե՝ անհիմն: Հետևաբար, մեղադրյալի՝ 135-րդ հոդվածում թվարկված հնարավոր վարքագծի կապակցությամբ արված ցանկացած եզրահանգում պետք է հիմնված լինի գործի փաստական հանգամանքների վրա: Որոշում թիվ ՎԴ-132/07 (2007թ. օգոստոսի 30):

[80] R.N.78-03.09.2008, R.N.139-10.07.2009, R.N.83-18.09.2008, R.N.27-19.06.2008, R.N.22-16.06.2008, R.N.113-10.12.2008.

[81] ՔԴՕ $131^1$–րդ հոդված սահմանում է, որ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն:

դատավարական երաշխիքների ամրապնդման և դրանց կիրառման բարելավման անհրաժեշտություն: Հայաստանի իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի ապահովեն կալանքի՝ որպես խափանման միջոցը ընտրության և դրա ժամկետի երկարացման վերաբերյալ որոշումների ընդունման պրակտիկայում Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի և եվրոպական չափանիշների կիրառումը: Վերագրվող արարքի ծանրությունն ինքնին չի կարող արդարացնել կալանավորման կիրառումը:

Ոստիկանության կողմից իրականացված բոլոր ձերբակալությունները, ինչպես նաև ձերբակալված և կալանավորված անձանց ցանկացած տեղափոխում պետք է ժամանակին և ճշգրիտ կերպով ձևակերպվի:

Ձերբակալության և կալանավորման նկատմամբ անկախ դատական վերահսկողությունն առանձնակի կարևորություն ունի ազատությունից զրկելու յուրաքանչյուր դեպքում օրինականությունն ապահովելու գործում: Այս առումով, Ծրագրի արդյունքում արված հետևությունները մատնանշում են, որ Հայաստանի դատական իշխանությունը չի կատարում նման արդյունավետ դատական վերահսկողություն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր գործառույթները. մասնավորապես, սա վերաբերվում է ձերբակալման հիմքերի և կալանավորման կիրառման նկատմամբ դատական վերահսկողությանը: Բացի այդ, դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ մինչդատական վարույթի ընթացքում ամբաստանյալներին արգելանքի տակ պահելու վերաբերյալ որոշումներն ընդունելիս, դատավորները լիարժեք կիրառություն չեն տալիս գործող օրենքներին:

Կալանքի կիրառման և դրա ժամկետի երկարացման վերաբերյալ որոշումների մեխանիկական ընդունման պրակտիկան պետք է փոփոխվի այնպես, որ մինչդատական վարույթում կալանավորումը լինի բացառություն, այլ ոչ թե կանոն, ինչպես պահանջում են միջազգային չափանիշները: Այս առումով Առաջարկությունները պարունակում են հստակ ուղեցույցներ: Առաջարկվում է ընդարձակել դատական վերահսկողության սահմանները, երբ ձերբակալված անձն առաջին անգամ կանգնում է դատարանի առջև, և վարել այս նիստը մրցակցության և հրապարակայնության պայմաններում: Դատավորները պետք է լայնորեն օգտագործեն այլընտրանքային խափանման այլ միջոցները: Քաղաքականություն մշակողները պետք է վերանայեն դատական պրակտիկան և տան համապարփակ լուծումներ՝ ուղղված առկա այլընտրանքային խափանման միջոցների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև նոր խափանման միջոցների հնարավոր ներմուծմանը:

Կալանավորման կիրառման դեպքում կալանավորման ժամկետները պետք է որոշվեն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գործի անհատական հանգամանքները: Կալանավորման երկամսյա ժամկետը գրեթե ինքնաբերաբար կիրառման՝ ներկայումս ընդունված պրակտիկան պետք է դադարեցնել: Անհրաժեշտ է նաև քննարկել *habeas corpus* խնդրագրի ներդրման հնարավորությունը, որով պաշտպանության կողմը իրավունք կստանա ցանկացած պահի վիճարկելու կալանավորման կիրառումը, եթե կարողանա ցույց տալ կալանավորումն ակնհայտ անօրինական լինելու վերաբերյալ *prima facie* գործ:

# Գլուխ 2. Հրապարակային դատաքննության իրավունքը

Դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի իշխանությունները միջոցներ են ձեռնարկել հրապարակային դատական քննության ապահովման համար: Հանրության ներկայացուցիչների և զանգվածային լրատվամիջոցների՝ դատական նիստերին ներկա գտնվելու հնարավորությունն ապահովվել է դիտարկված բոլոր գործերում: Սույն գլխում կատարված վերլուծության մեջ շեշտադրվում են հանրության՝ դատարանի շենք մուտք գործելու հնարավորության սահմանափակումներին վերաբերող խնդիրները: Դատական լսումների ժամանակացույցերում առկա անճշտությունները և սահմանված ժամանակացույցին հաճախակի չհետևելու պրակտիկան ևս խոչընդոտել են դատական լսումներին հանրության ներկա գտնվելը և դիտարկումներ անցկացնելու գործընթացը: Դատական նիստերի դահլիճների ցածր լսելիությունը և մի շարք դահլիճներում տեխնիկական միջոցների անբավարար հագեցվածությունը խոչընդոտել են հանրությանը՝ հետևելու դատական նիստերի ընթացքին:

## Ա. Ներպետական օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի անձի՝ հրապարակային դատաքննության իրավունքը՝ թույլատրելով այս իրավունքի սահմանափակումներ միայն »*հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով*«: [82] ՔԴՕ-ն սահմանում է, որ դատական քննությունը դռնբաց է:[83] Օրենքով սահմանված դեպքերում և կարգով այս իրավունքը կարող է սահմանափակվել դատարանի որոշմամբ՝ »*հասարակական բարոյականության, հասարակական կարգի, պետական անվտանգության, և դատավարությանը մասնակցողների անձնական կյանքի պաշտպանության նկատառումներով, ինչպես նաև արդարադատության շահերից ելնելով*«,[84] սակայն դատավճիռը պետք է հրապարակվի միայն դռնբաց նիստում:[85]

ՔԴՕ-ն սահմանում է, որ դատավարության մասնակիցներից մեկի միջնորդությամբ դատարանը կարող է սահմանափակել հասարակության ներկայությունը դատական նիստին, երբ քննությունն առնչվում է պետական, ծառայողական կամ առևտրային գաղտնիքի:[86]

Դատական կարգադրիչների ծառայությունը նպատակ ունի ապահովել դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների, դատական

[82] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 19:
[83] ՔԴՕ հոդված 16(1): *Տե՛ս նաև՝* Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք, հոդված 20(1):
[84] *Նույն տեղում,* հոդված 16(2) *Տե՛ս նաև՝* Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք, հոդված 20(2):
[85] *Նույն տեղում: Տե՛ս նաև՝* Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք, հոդված 20(3):
[86] ՔԴՕ, հոդված 172(5):

ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից: [87] Իրենց գործառույթներն իրականացնելիս կարգադրիչներն իրավունք ունեն պարզելու անձանց ինքնությունը, դատարանի որոշման հիման վրա դատական նիստերի դահլիճից հեռացնելու անձանց կամ սահմանափակելու այդ անձանց մուտքը, զննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտ գործող անձանց, ինչպես նաև նրանց իրերը և Դատական օրենսգրքով սահմանված կարգով կիրառելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ[88]:

Դատարանների նախագահների խորհրդի կողմից ընդունված որոշման համաձայն, որի նպատակն է դատական համակարգում առկա կոռուպցիայի վերացումը և թափանցիկության ապահովումը, շեշտադրվում է դատական նիստերի դահլիճները ձայնագրման նորագույն սարքավորումներով համալրելու անհրաժեշտությունը՝ որպես առաջնահերթ խնդիր:[89]

## Բ. Միջազգային չափանիշներ

Հրապարակային դատական քննության իրավունքը համընդհանուր ճանաչում ստացած մարդու հիմնարար իրավունք է, և որպես այդպիսին սահմանված է ՄԻՀՀ-ում,[90] ՔՔԻՄԴ-ում,[91] և ՄԻԵԿ-ում:[92] Այն հստակորեն ամրագրված է ԵԱՀԿ-ի Կոպենհագենի փաստաթղթում: [93] Հրապարակային դատական քննության իրավունքը առանցքային է այն իմաստով, որ այն կարևոր երաշխիք է հանդիսանում թե անհատի իրավունքների, և թե, լայն առումով, հասարակության շահերի պաշտպանության համար:

Միջազգային չափանիշները պահանջում են, որ *»դատական նիստը հանրության, ներառյալ՝ ԶԼՄ-ի ներկայացուցիչների համար լինի դռնբաց, և այն չպետք է, օրինակ, սահմանափակված լինի միայն որոշակի խմբի անդամների համար«*:[94] ՄԻԵԴ-ը վճռել է, որ *»քննության հրապարակային բնույթը դատավարության մասնակիցներին պաշտպանում է գաղտնի և առանց հասարակական վերահսկողության արդարադատության իրականացումից: Այն նաև դատական համակարգի նկատմամբ վստահության ամրապնդման միջոցներից մեկն է: Արդարադատության իրականացումը դարձնելով տեսանելի՝ հրապարակայնությունը նպաստում է արդարացի դատական քննությունների հաստատմանը«*:[95]

---

[87] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 198:
[88] *Նույն տեղում,* հոդված 214(1):
[89] Դատարանների նախագահների խորհուրդ, որոշում թիվ 92 (2006):
[90] ՄԻՀՀ, հոդված 10:
[91] ՔՔԻՄԴ, հոդված 14(1):
[92] ՄԻԵԿ, հոդված 6(1):
[93] 1990թ. Կոպենհագենյան փաստաթուղթ, պարագրաֆ 13.9:
[94] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 32՝ 14-րդ հոդվածի՝ դատարանի առջև հավասարության և արդար քննության իրավունքի վերաբերյալ, CCPR/C/GC/32, 23 օգոստոսի 2007թ., պարագրաֆ 29:
[95] *Pretto and Others v. Italy,* ՄԻԵԴ վճիռ, 8 դեկտեմբերի 1983թ., պարագրաֆ 21:

Հրապարակային դատաքննության իրավունքը ենթակա է որոշակի սահմանափակումների: ՄԻԵԿ-ի 6(1) հոդվածը հստակորեն սահմանում է, որ *»մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը«*: Ուստի, երբեմն կարող է անհրաժեշտություն առաջանալ դատաքննության դռնբաց և հրապարակային բնույթը սահմանափակելու համար՝ վկաների անվտանգությունն ու անձնական կյանքը պաշտպանելու նպատակով, կամ *»արդարադատություն իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունների և կարծիքների ազատ փոխանակումը խրախուսելու նպատակով«*:[96] Սակայն, յուրաքանչյուր դեպքում ներպետական դատարանները պարտավոր են պատշաճ կերպով հիմնավորել իրավաչափ նպատակների առկայությունը, ինչպես նաև ապացուցել, որ նման նպատակները գերակա են հրապարակային դատաքննության ապահովման կարևորության նկատմամբ:[97]

Հրապարակայնության սկզբունքը վերաբերում է նաև դատավճռի հրապարակմանը: Դատարանների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունը պահանջում է, որպեսզի *»քրեական գործով կայացված ցանկացած դատավճիռ, ներառյալ՝ հիմնական հետևությունները, ապացույցները և իրավական հիմնավորումները, մատչելի լինեն հասարակության համար«*, [98] թույլատրելով դատավճռի հրապարակայնության սահմանափակումներ միայն անչափահաս անձի շահերի պաշտպանության անհրաժեշտության դեպքում: Հասարակական վերահսկողությունը նաև նշանակում է, որ դատավճիռը պետք է ամբողջապես մատչելի լինի հասարակության անդամների համար: Հետևաբար, դատական ակտերի մասին հասարակության կողմից տեղեկացված լինելը չի կարող ապահովվել, եթե տեղեկությունների տրամադրումը սահմանափակվում է մի խումբ անձանց շրջանակով, ինչպիսիք են՝ դատավարության մասնակիցները:

## Գ. Հետևություններ և վերլուծություն

Այս գլխում ներառված վերլուծությունները վերաբերում են դիտորդների կողմից արձանագրված բացթողումներին՝ դատարանի շենք մուտք գործելու հնարավորությանը, դատական տեղեկությունների մատչելիությանն ու հարակից

---

[96] *B. and P. v. the United Kingdom*, ՄԻԵԴ վճիռ, 24 ապրիլի 2001թ., պարագրաֆ 37, *տե՛ս նաև՝ Z v. Finland*, ՄԻԵԴ վճիռ, 25 փետրվարի 1997թ., պարագրաֆ 99:

[97] *Volkov v. Russia*, ՄԻԵԴ վճիռ, 4 դեկտեմբերի 2007թ., պարագրաֆ 31:

[98] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 32՝ 14-րդ հոդվածի՝ դատարանի առջև հավասարության և արդար քննության իրավունքի վերաբերյալ, CCPR/C/GC/32, 23 օգոստոսի 2007թ., պարագրաֆ 29:

այլ խնդիրների, որոնք ազդեցություն ունեն հրապարակային դատաքննության իրավունքի վրա: Դիտարկված գործերի որոշակի մասը հանրության կողմից զգալի ուշադրության են արժանացել: Չնայած այդ գործերով դատավարությունների անցկացումը կապված է լուրջ բարդությունների հետ, այնուամենայնիվ, այդ խոչընդոտները չհաղթահարելու թանկ գինը հասարակական վստահության կորուստն է:

Դիտարկված գործերից շատերն ընթացել են սուր լարվածության մթնոլորտում: Որոշ ամբաստանյալներն իրենց անհամաձայնությունն են հայտնել քրեական դատավարությունների առնչությամբ, որն արտահայտվել է ելույթների կամ բողոքի այլ դրսևորումների ձևով: Դատական նիստերի դահլիճում նրանք և նրանց համախոհները հաճախ չեն ցուցաբերել պատշաճ հարգանք դատավորների կամ դատավարության այլ մասնակիցների հանդեպ: Այս խոչընդոտող հանգամանքները դատարանների աշխատանքը դարձրել են չափազանց դժվարին և միաժամանակ բարձրացրել դատավորների պրոֆեսիոնալ վարքագծի սանդղակը ամենաբարձր մակարդակի: Ձեռք բերված տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ դատավորներից մի քանիսը, պատշաճ պրոֆեսիոնալիզմ դրսևորելով, հաղթահարել են այդ դժվարությունները:

Չնայած գործադրված լուրջ ջանքերին՝ դիտորդները չեն կարողացել դիտարկել 18 գործ: Այն հիմնականում պայմանավորված էր դատական նիստերի ժամանակացույցերում կատարված անսպասելի փոփոխություններով, որոնք դիտարկումներն իրականացնելու պրոցեսում ստեղծել են կազմակերպչական խոչընդոտներ: Որոշ դեպքերում, դատական նիստերի վերաբերյալ տեղեկություններն ստացվել են միայն այն ժամանակ, երբ դրանք արդեն ավարտված են եղել: Մի քանի դեպքերում, գործի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով հատուկ խնդրանքներ են ներկայացվել՝ նշելով գործին վերաբերող տվյալները: Սակայն, դիտորդները տեղեկացվել են, որ նախնական քննությունը շարունակվում է և գործը դեռ դատարան չի ուղարկվել: Այնուամենայնիվ, մի քանի օր անց պարզվել է, որ այդ գործերի դատական քննությունն ավարտվել է: Ի լրումն վերոնշյալի, Հայաստանի դատական համակարգի պաշտոնական կայքը (www.court.am) միշտ չէ, որ պարունակում է դատական նիստի վերաբերյալ թարմացված տեղեկատվություն: Կայքում տեղակայվող ժամանակացույցում առկա տվյալները հաճախ հակասում էին դատավորների կողմից հրապարակայնորեն հայտարարված տվյալներին, ինչպես նաև այն տեղեկություններին, որոնք դիտորդները ստանում էին Վճռաբեկ դատարանից: Դիտորդների համար նիստերին վերաբերող տեղեկությունների հասանելիությունը որոշ չափով բարելավվեց 2009թ. մայիսից՝ ԺՀՄԻԳ-ի և Հայաստանի պաշտոնատար անձանց միջև Երևանում տեղի ունեցած մի շարք հանդիպումներից հետո:

### *i. Դատարանի շենք մուտք գործելու հնարավորությունը*

Չնայած բոլոր գործերի քննությունն իրականացվել է դռնբաց դատական նիստերում՝ դատարանի շենք մուտք գործելու հնարավորությունը հաճախակի

ենթարկվել է սահմանափակումների: Դատարանի շենքի անվտանգության ապահովումն, անշուշտ, ծանրակշիռ փաստարկ է, սակայն այն պետք է հավասարակշռել դատական նիստերին հասարակության անդամների ներկայությունն ապահովելու անհրաժեշտության հետ: Ի վերջո, պետական իշխանության ներկայացուցիչներն են պատասխանատու դատարանի մատչելիության ապահովման համար և պարտավոր են հատուկ միջոցներ ձեռնարկել, որպեսզի ապահովեն հասարակության ներկայությունն այն դատական նիստերին, որոնց նկատմամբ հասարակության անդամներն ունեն հատուկ հետաքրքրասիրություն:

2008թ. մայիսի 8-ին Վճռաբեկ դատարանի կողմից հրապարակվել է դատական կարգադրիչների ծառայության՝ օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների վերաբերյալ պարզաբանում, այդ թվում՝
*1. պարզելու դատարանի շենք մուտք գործող, դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող, ինչպես նաև դատական սանկցիայի ենթարկված անձի ինքնությունը,*
*2. դատարանի որոշման հիման վրա հեռացնելու անձին դատական նիստերի դահլիճից և արգելելու այդպիսի որոշման մեջ նշված անձին մուտք գործել դատարանի շենք,*
3. *զննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց, ինչպես նաև նրանց իրերը,*
*4. Դատական օրենսգրքով սահմանված կարգով կիրառելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ:*[99]

Դատարանը նաև տեղեկացրել է, որ »*հաշվի առնելով առանձին դատական գործերի բարդությունն ու առանձնահատկությունները, դատավորի, դատավարության մասնակիցների և այլ անձանց անվտանգության ապահովման նպատակով կարող է սահմանվել խստացված ռեժիմ, որի պայմաններում դատարանների շենքերի տարածք քաղաքացիների մուտքը հնարավոր է միայն անձը հաստատող փաստաթղթով*«:

Այս պարզաբանումը չի նշում, թե ով կարող է որոշել կիրառել խստացված անվտանգության ռեժիմ և թե ինչպես այս որոշումների մասին պետք է հանրությունը տեղեկացվի: Դատելով պրակտիկայից՝ դիտարկված դատական գործերի որոշ մասը համարվել է որպես »անվտանգության խստացված ռեժիմ« պահանջող գործ, սակայն հանրության համար համապատասխան դատարանների կամ Վճռաբեկ դատարանի կողմից այդ առումով որևէ հատուկ պաշտոնական հայտարարություն չի արվել:

Միջազգային չափանիշները կարևորում են դատական նիստերի դահլիճների մատչելիությունը հասարակության համար: Ամբաստանյալի՝ հրապարակային դատական քննության իրավունքի խախտում է արձանագրվել այն դեպքում, երբ ողջ դատաքննության ընթացքում սահմանափակված է եղել դատարանի շենք մուտք գործելու հնարավորությունը, չնայած այն հանգամանքին, որ դատաքննությունը դռնփակ չի եղել: Օրինակ, ՄԻԵԴ-ն իր՝ »*Zagorodnikov v.*

---
[99] Դատական օրենսգիրք, հոդված 214:

*Russia«* [100] գործով վճռում, հրապարակային դատաքննության իրավունքի առնչությամբ ճանաչվել է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի խախտում, որտեղ դատարանի մուտքի մոտ կանգնած ոստիկանը բազմիցս արգելել է այն անձանց մուտքը դատական նիստերի դահլիճ, ովքեր նիստին ներկայանալու ծանուցում կամ անձը հաստատող փաստաթուղթ չեն ունեցել: Յուրաքանչյուր նիստին որոշակի թվով նստատեղեր մնացել են ազատ: Կառավարությունը հիմնավորել է, որ իրականում անհնար կլիներ տեղավորել բոլորին, սակայն ՄԻԵԴ-ը մերժել է այս հիմնավորումը՝ պատճառաբանելով, որ »*Կառավարությունը դատարանին որևէ համոզիչ փաստարկ չներկայացրեց առ այն, որ հանրությանը նիստին ներկա գտնվելու թույլտվության տրամադրումը կվտանգեր հասարակական կարգը կամ ազդեցություն կունենար դատաքննության տևողության վրա*«:[101]

Բազմաթիվ դեպքերում դիտորդներն ականատես են եղել, թե ինչպես են դատարանի շենքի մուտքի մոտ կանգնած ոստիկաններն ու դատական կարգադրիչներն արգելում անձանց մուտք գործել դատարանի շենք, սակայն այլ հիմնավորումներով, քան անվտանգությունը, օրինակ՝ այն որ, անձը չի ներկայացրել անձը հաստատող փաստաթուղթ, ենթադրաբար ազատ տեղերը բացակայում են,[102] կամ նիստը ենթադրաբար հետաձգվել է:

| |
|---|
| Կարգադրիչները դիտորդներին ու հասարակության ներկայացուցիչներին չեն թույլատրել ներկա գտնվելու 2008թ. մայիսի 21-ին Քրեական վերաքննիչ դատարանում նշանակված վերաքննիչ բողոքի քննությանը՝ պատճառաբանելով, որ նիստը հետաձգվել է: Այնուամենայնիվ, երբ դիտորդներին հաջողվել է մուտք գործել դատարանի շենք, նրանք պարզել են, որ դատական նիստն ընթացել է ըստ ժամանակացույցի:[103] |

Անձը հաստատող փաստաթղթերը հիմնականում պահանջվել են Քրեական վերաքննիչ դատարաններում և Երևանի քրեական դատարանում: Դիտորդներն արձանագրել են, որ անձը հաստատող փաստաթղթերը ստուգման չեն ենթարկվել նույն գործով նշանակված յուրաքանչյուր նիստին, իսկ որոշ նիստերի կապակցությամբ ընդհանրապես անձը հաստատող փաստաթղթերի ստուգում չի իրականացվել: Որոշ դեպքերում, անձը հաստատող փաստաթղթերի ստուգումներ են իրականացվել դատարանի շենքի երկայնքով կանգնած ոստիկանների կողմից, որին հետևել է անձը հաստատող փաստաթղթերի մեկ այլ ստուգում՝ դատարանի շենքի մուտքի մոտ կանգնած կարգադրիչների կողմից:[104]

Որոշ դեպքերում, նիստերի դահլիճ մուտք գործելիս քաղաքացիական համազգեստ կրող իրավապահ մարմինների աշխատակիցները ստանում էին արտոնյալ

[100] *Zagorodnikov v. Russia,* ՄԻԵԴ վճիռ, 7 հուլիսի 2007թ.:
[101] *Նույն տեղում*՝ պարագրաֆ 26:
[102] R.N.115-30.05.2009, R.N.109-12.2008, R.N.113-10.2008, R.N.49-18.07.2008, R.N.135- 27.06.2006, R.N.126-11.03.2009.
[103] R.N.11-24.05.2008.
[104] R.N.130-30.03.2009, R.N.112-02.12.2008, R.N.109-01.12.2008, R.N.135.22.06.2009, R.N.136.-22.06.2009, R.N.137-22.06.09, և R.N.138.25.06.2009.

հնարավորություն, մինչդեռ հանրության ներկայացուցիչները տեղեկացվում էին, որ ազատ նստատեղեր չկան:[105]

Երբեմն, դիտորդներն ականատես են եղել իրավիճակների, երբ կարգադրիչներն իրենք են կայացրել կոնկրետ անձին դատարանի շենքից հեռացնելու և/կամ նիստերի դահլիճ մուտք գործելն արգելելու վերաբերյալ կամայական թվացող որոշումներ: Որոշ դեպքերում կարգադրիչների վերաբերմունքն ամբաստանյալի հարազատների, դիտորդների և հասարակության այլ ներկայացուցիչների նկատմամբ կրել է թշնամական և անկիրթ բնույթ:[106]

2008թ. հուլիսի 22-ին Ազգային ժողովի անդամներից մեկին չի թույլատրվել մուտք գործել Երևանի քրեական դատարան, որովհետև նա հրաժարվել էր կարգադրիչներին հանձնել իր պայուսակում գտնվող դեղամիջոցը:[107]

2008թ. հուլիսի 17-ին կարգադրիչներն արգելել են մի ֆոտոլրագրողի մուտք գործել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի նիստերի դահլիճ միայն այն հիմքով, որ առաջին նիստի ժամանակ դատավորը նրան հեռացրել էր նիստերի դահլիճից:[108]

Մի դեպքում, դատական նիստի ավարտից անմիջապես հետո կարգադրիչները ԺՀՄԻԳ-ի դիտորդին դուրս են հրել լեփ-լեցուն նիստերի դահլիճից՝ առանց սեփական իրերը հավաքելու համար ժամանակ տրամադրելու:[109]

Դիտորդները նաև ականատես են եղել իրավիճակների, երբ հասարակությունն ունեցել է չափազանց մեծ հետաքրքրություն կոնկրետ գործերի նկատմամբ: Օրինակ՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանում Պ.-ի և Ս.-ի գործի քննության ընթացքում մարդիկ միմյանց հետ կիսում էին նստատեղերը, ինչպես նաև՝ կանգնում դահլիճի վերջնամասում: Թվով 20 մարդիկ կանգնած էին միջանցքում: [110] Հրապարակայնության սկզբունքը չի ենթադրում որ նիստերի դահլիճում պետք է պարտադիր ներկա գտնվեն բոլոր ցանկացողները: Միևնույն ժամանակ, մի շարք դեպքերում պարզ դարձավ, որ հասարակական հնչեղություն ունեցող գործերի քննության համար դիտավորյալ կերպով ընտրվում էին ավելի փոքր դահլիճներ՝ հանրության ներկայությունը սահմանափակելու նպատակով: Նման գործողությունները չէին կարող նպաստել արդարադատության իրականացման հանդեպ հանրային վստահության ամրապնդմանը:

Դ.-ի՝ հասարական հնչեղություն ունեցող գործով դատական գործի քննությունը նշանակված էր 2008թ. հուլիսի 28-ին, դատական նիստերի 4-րդ դահլիճում, որը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի ամենաընդարձակ դահլիճն է: Սակայն, հետագա լսումներն անցկացվել են դատական նիստերի 5-րդ

[105] R.N.112-02.12.2008, R.N.61-04.08.2008, R.N.49-18.07.2008, R.N.136-22.06.2009.
[106] R.N.130-29.04.2009, R.N.108-25.11.2008, R.N.52-21.07.2008.
[107] R.N.20-13.6.2008.
[108] R.N.61-04.08.2008.
[109] R.N.130-29.04.2009.
[110] R.N.48-17.07.2008.

դահլիճում, որը զգալիորեն փոքր էր: Այս հանգամանքը բացատրվել է նրանով, որ ավելի ընդարձակ դահլիճը զբաղեցված է, քանի որ այնտեղ ենթադրաբար քննվում է մեկ այլ քրեական գործ: 2008թ. հուլիսի 30-ին դիտորդները պարզել են, որ 4-րդ դահլիճում քննվում էր մի քաղաքացիական գործ, որին ներգրավված եին երեք մասնակիցներ, մինչդեռ Դ.-ի գործի քննությունը շարունակվել է 5-րդ դահլիճում:[111]

Ինչպես արդեն նշվեց վերևում, որոշ դիտարկված դատավարություններ ընթացել են սուր լարվածության մթնոլորտում: Ժամանակ առ ժամանակ, ամբաստանյալները և նրանց համախոհները չեն ենթարկվել դատավորների կարգադրություններին և չեն պահպանել դատական նիստերի դահլիճում գործող կարգը: Այդպիսի հանգամանքներում, դատավորները դատական նիստերի դահլիճից հեռացրել են հասարակության և ԶԼՄ-ի ներկայացուցիչներին:[112]

Օրենքով դատավորները լիազորված են կիրառել դատական սանկցիաներ իրենց կարգադրություններին չենթարկվելու համար, այդ թվում՝ նախազգուշացում, նիստերի դահլիճից հեռացում և տուգանք:[113] Արդարադատության պատշաճ իրականացման շահերի և անձի իրավունքների միջև հավասարակշություն ապահովելու անհրաժեշտությունը ենթադրում է, որ դատական սանկցիաները պետք է կիրառվեն պատշաճ զգուշավորությամբ և զսպվածությամբ: Իրականում նման շրջահայացություն դրսևորվել է որոշ դատավորների կողմից: Այնուամենայնիվ, մի շարք դեպքերում, դատավորներն անհատներին հեռացնում էին նիստերի դահլիճից՝ առանց նախազգուշացման և որոշման հիմնավորման: Որոշ դեպքերում, ամբաստանյալներին ծափահարությունների միջոցով ողջունելու համար հասարակության ներկայացուցիչներն առանց նախազգուշացման հեռացվել են նիստերի դահլիճից:[114] Եթե դատավորները ներկաներից չէին կարողանում հայտնաբերել »մեղավորին«, ապա դահլիճից հեռացվում էին ըստ շարքերի:[115] Ձևավորված այս պրակտիկան բացասական ազդեցություն է ունեցել ամբաստանյալի՝ հրապարակային քննության իրավունքի վրա:

### *ii. Տեղեկությունների մատչելիությունը*

Դատական քննության հրապարակայնությունն ապահովված է համարվում այն դեպքում, երբ հասարակությունը կարող է ճշգրիտ տեղեկություններ ստանալ դատական նիստերի ժամանակի և վայրի վերաբերյալ: Դատարանի ժամանակացույցերը պետք է ամբողջական տեղեկություններ պարունակեն, ներառյալ՝ ամբաստանյալի անունը, նրա դեմ ներկայացված մեղադրանքները, գործը քննող դատավորի անունը, դատական նիստի ժամանակը և դահլիճի համարը: Սակայն Ծրագրի դիտորդները պարզել են, որ ժամանակացույցերում հաճախ զետեղված չեն եղել ամբողջական և ճշգրիտ տեղեկություններ, օրինակ՝

[111] R.N.112-02.12.2008.
[112] Տես նաև՝ 8-րդ գլուխը:
[113] ՔԴՕ, հոդված $314^1$:
[114] R.N.52-21.07.2008, R.N.83-18.09.2008, R.N.27-19.06.2008.
[115] R.N.112-02.12.2008, R.N.52-21.07.2008, R.N.135-22.06.2009.

նիստերը տեղի են ունեցել այլ ժամի կամ վայրում, քան փակցված է եղել ցուցատախտակի վրա:[116]

Դիտարկման արդյունքում նաև զգալի թերություններ են հայտնաբերվել դատարանի ժամանակացույցերին հետևելու հարցում: Դիտարկման ենթարկված դատական նիստերից միայն 15% է անցկացվել ըստ ժամանակացույցի: Դատական նիստն ուշ կամ շուտ սկսելը հանդիսացել է հաճախ կրկնվող պրակտիկա: [117] Հաճախ, մինչև դատական նիստի սկսվելը դատավարության մասնակիցները ստիպված են եղել սպասել մի քանի ժամ: [118] Չնայած այն հանգամանքին, որ ժամանակացույցերին չհետևելը կարող է տարբեր պատճառներ ունենալ (որոնց մի մասը դուրս է դատավորի վերահսկողությունից)՝ խնդրի տարածվածությունն ու պարբերական բնույթը պահանջում են համակողմանի միջոցառումների ձեռնարկում: Վճռաբեկ դատարանն ևս ընդգծել է այս խնդրի լրջությունը՝ նշելով, որ նիստն ուշ սկսելը հանդիսանում է ՔԴՕ-ի լուրջ խախտում և առաջացնում է ՄԻԵԿ-ի 6(1)-րդ հոդվածով նախատեսված հրապարակային և մրցակցային քննության իրավունքների ոտնահարում:[119]

Մ.-ի գործով կայացած դատական քննության 13 նիստերից միայն մեկն է սկսվել ժամանակին, այն է՝ դատավճռի հրապարակումը: 2008թ. հուլիսի 7-ի նիստը ձգձգվել է 20 րոպեով, քանի որ անվտանգության աշխատակիցները սխալմամբ բերել էին այլ ամբաստանյալի: 2008թ. օգոստոսի 25-ին 20 րոպե ուշացումից հետո դատական նիստի օրը ենթարկվել է փոփոխության, քանի որ Մ.-ին կալանավորվածներին պահելու վայրից չեն ներկայացրել դատական նիստին (նիստերի դահլիճից դուրս դիտորդները կարգադրիչներից տեղեկացել են, որ պատճառը Ռուսաստանի և Վրաստանի միջև պատերազմի պատճառով առաջացած բենզինի պակասն է): 2008թ. սեպտեմբերի 4-ին նիստն սկսվել է 52 րոպե ուշացումով՝ նիստերի դահլիճի բացակայության պատճառաբանությամբ, իսկ 2008թ. սեպտեմբերի 8-ի նիստն անհայտ պատճառներով սկսվել է մեկ ժամ ուշացումով:[120]

### *iii. Նիստերի դահլիճների սարքավորումներն ու հարմարությունները*

Դիտարկված բոլոր գործերի դատական լսումները անց են կացվել դատական նիստերի դահլիճներում: Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության իշխանություններն արժանի են գովասանքի՝ բոլոր դատական նիստերի դահլիճները պատշաճ կահույքով և տեխնիկական սարքավորումներով հագեցնելու ուղղությամբ շարունակաբար գործադրվող ջանքերի համար: Ծրագրի դիտորդներն արձանագրել են, որ դատական նիստերի դահլիճների մեծ մասը համարժեքորեն հագեցված է համակարգիչներով և ձայնագրող համակարգերով:

[116] R.N.34-24.06.2008, R.N.3-02.05.2008, R.N.44-11.07.2008, R.N.92-01.10.2008, R.N.40-01.07.2008.
[117] R.N.04-09.05.2008, R.N.52-21.07.2008, R.N.08-15.05.2008, R.N.14-04.06.2008, R.N.16-06.06.2008.
[118] R.N.06-13.05.2008, R.N.17-11.06.2008, R.N.27-19.06.2008, R.N.31-23.06.2008, R.N.35-24.06.2008, R.N.59-06.06.2008, R.N.90-26.09.2008.
[119] 2007թ. մարտի 2-ի որոշումը, N 3-118/ՎԴ:
[120] R.N.113-10.12.2008.

Այդուհանդերձ, որոշ դեպքերում դատական նիստերի դահլիճներում բացակայում էին ապացույցների պատշաճ հետազոտման համար անհրաժեշտ սարքավորումներ, ինչպիսիք են էկրաններն ու DVD ձայնագրիչները:[121] Այլ դեպքերում, ձայնագրման համակարգերը չէին աշխատում և դատական նիստն արձանագրվում էր միայն ձեռագիր գրառումներ կատարելու միջոցով:[122] Ձայնագրման միջոցով արձանագրություն վարելիս դատավորները դատական նիստերի ընթացքում հաճախ պահանջել են նիստի քարտուղարին անջատել ձայնագրման սարքը, իսկ այնուհետև միացնել այն: Նիստի ընթացքում »արձանագրությունից դուրս« հաղորդակցության թույլատրումն առաջացնում է մտահոգություններ, քանի որ նման հաղորդակցությունների նկատմամբ վերադաս դատարանները և հասարակությունը չեն կարող վերահսկողություն իրականացնել:[123]

Դիտորդները նշել են, որ մի շարք դեպքերում հասարակության անդամները չէին կարողանում հետևել դատական նիստի ընթացքին՝ ոչ բավարար լսելիության պատճառով:[124] Դատական նիստերի դահլիճներում հիմնականում բացակայում էին ձայնի ուժեղացման համակարգերը: Արդյունքում, նիստերը հաճախ լսելի չէին հանրության համար, ինչն էլ ավելի էր խորացնում հիասթափության և նյարդայնության զգացումները ներկաների շրջանում: Այս իրավիճակն ավելի էր սրվում, երբ դատավորները, դատախազները և դատական նիստին մասնակցող այլ անձինք չէին խոսում բավարար չափով հստակ և բարձր ձայնով: Այս ոլորտում անհրաժեշտ են բարեփոխումներ՝ ազգային օրենսդրությամբ և միջազգային չափանիշներով երաշխավորված հրապարակային դատական քննության իրավունքի իրական ապահովումը երաշխավորելու նպատակով:

## Դ. Եզրահանգումներ

Դիտարկված բոլոր գործերով առնվազն հանրության և զանգվածային լրատվամիջոցների որոշ անդամների համար ապահովվել է դատական նիստերին ներկա գտնվելու հնարավորությունը: Դիտարկված դատավարություններից և ոչ մեկը չի անցկացվել դռնփակ դատական նիստում:

Դատական քննության հրապարակայնությունը ոչ միայն ամբաստանյալի՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիք է, այլ նաև՝ արդարադատության իրականացման հանդեպ հասարակական վստահությունն ամրապնդելու կարևոր գործիք: Ինչպես ցանկացած այլ պետական հաստատություն, արդարադատության համակարգը ծառայում է հասարակությանը՝ նրա յուրաքանչյուր անդամին, ով

[121] R.N.83-18.09.2008, R.N.26-19.06.2008.
[122] R.N.33-24.06.2008.
[123] Նիստին ներկա գտնվողների և քննության հիմնական մասնակիցների միջև ձայնամեկուսիչ պատնեշի առկայությունը դիտորդներին զրկել է նիստի ընթացքում »արձանագրությունից դուրս« տեղի ունեցող հաղորդակցություններն ամբողջությամբ և անկաշկանդ դիտարկելու հնարավորությունից: R.N.141-27.07.2009.
[124] R.N.112-02.12.2008, R.N.52-21.07.2008, R.N.83-18.09.2008, R.N.136-22.06.2008, R.N.137-22.06.2008, R.N.138-25.06.2008, R.N.26-19.06.2008.

մուտք է գործում դատարան: Դիտորդները ձեռք են բերել բավականաչափ ապացույցներ եզրակացնելու համար, որ դատական կարգադրիչներն իրենց գործառույթների իրականացման ընթացքում չեն առաջնորդվում այս հիմնարար սկզբունքներով: Ի լրումն անվտանգության ապահովման հետ կապված գործառույթներին, հասարակության անդամների՝ դատական նիստերին ներկա գտնվելու իրավունքի իրականացմանն աջակցելը պետք է դիտվի որպես կարգադրիչների ծառայության հիմնարար գործառույթը: Անհրաժեշտ է լուրջ ջանքեր գործադրել ապահովելու համար, որ դատական կարգադրիչները ճիշտ հասկանան իրենց այս գործառույթը և պատշաճորեն կատարեն այն:

Դատարանի շենքում ֆիզիկական անվտանգության ապահովումը պետք է երաշխավորվի համապատասխան ժամանակակից տեխնիկական միջոցների գործադրմամբ, այլ ոչ թե անձը հաստատող փաստաթղթերի՝ միջամտող և հիմնականում ոչ արդյունավետ ստուգումներով:

Զեկույցը նաև բացահայտում է դատարանները հանրության համար առավել մատչելի և ծառայություններ մատուցող հաստատություններ դարձնելու անհրաժեշտությունը: Այն ներառում է՝ նշանակված դատական նիստերի վերաբերյալ հիմնական տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև հանրության համար այնպիսի հնարավորության ապահովում, որ այն կարողանա լսել այն ամենը, ինչը տեղի է ունենում դատական նիստերի դահլիճում:[125]

Որպես հարակից խնդիր, դատական նիստերի արձանագրումը պետք է բարելավել՝ ապահովելով դատավարության ամբողջական և ճշգրիտ արձանագրումը:

---

[125] Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված իր մեկնաբանություններում, Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ 2009 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ-ում ներդրվել է »Դատալեքս« հանրային տեղեկատվական կրպակների համակարգը: Համակարգի միջոցով հնարավորություն է ընձեռնվում հետևել բոլոր ատյանների դատարաններում քննվող ցանկացած դատական գործով իրականացվող ընթացակարգերին, այն է՝ տեղեկանալ գործի կարգավիճակին և պատմությանը, ուսումնասիրել ժամկետները, որոշումները, դատական վերջնական ակտերի ամբողջական տեքստերը, ինչպես նաև որոնում կատարել օրենսդրության »Արլիս« շտեմարանում, այցելել պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերը և կատարել պետական տուրքերի վճարումներ: Նույն աղբյուրի համաձայն՝ »Դատալեքսի« 30 կրպակներն արդեն տեղադրված են դատարաններում և պետական կառավարման մարմինների շենքերում:

# Գլուխ 3. Անմեղության կանխավարկածը

Մի շարք դատավարությունների ընթացքում Ծրագրի դիտորդները հանդիպել են այնպիսի իրավիճակների, որոնք կասկածներ են հարուցում առ այն, թե արդյո՞ք ամբաստանյալն իրապես համարվել է անմեղ մինչև մեղքի ապացուցումը: Մի շարք դատավորներ ի վնաս ամբաստանյալի կատարել են բացասական մեկնաբանություններ՝ ակնարկելով ամբաստանյալների մեղավորությունը: Նիստերի ժամանակ որոշ ամբաստանյալների նկատմամբ կիրառված անվտանգության միջոցները (ձեռնաշղթաներ և անվտանգության աշխատակիցների մասսայական ներկայությունը) ստեղծել են այն տպավորությունը, թե ամբաստանյալը վտանգավոր հանցագործ է: Դիտորդներն առնչվել են նաև այնպիսի միջանկյալ դատական ակտերի, որոնք ամբաստանյալին ներկայացնում են որպես հանցագործություն կատարած անձ, ինչպես նաև մասնակցել են նիստերի, որի ընթացքում դատավորներն ամբողջությամբ չեն կատարել ամբաստանյալներին իրենց իրավունքները, ներառյալ՝ լռելու իրավունքը, բացատրելու պարտականությունը:

## Ա. Ներպետական օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ: Նույն հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը և չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:[126] Սահմանադրությունը նաև սահմանում է, որ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, և արգելում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:[127]

ՔԴՕ-ն վերահաստատում է անմեղության կանխավարկածի, ապացուցման պարտականությունը պաշտպանության կողմի վրա դնելու արգելքի, կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու,[128] ինչպես նաև իր ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու երաշխիքները:[129]

Հայաստանի ներպետական օրենսդրությունն ուղղակիորեն կարգավորում է կալանավորված անձանց նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցը՝ սահմանելով, որ ձեռնաշղթաները թույլատրելի են միայն այն դեպքում, երբ կալանավորված անձի վարքագիծը հիմք է տալիս ողջամտորեն ենթադրել, որ նա կարող է փախուստի դիմել, վնաս հասցնել իրեն կամ շրջապատին կամ դիմադրություն ցույց տալ ոստիկանությանը:[130] Բռնություն գործադրելու կամ

---

[126] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 21:
[127] *Նույն տեղում*, հոդված 22:
[128] ՔԴՕ, հոդված 18:
[129] *Նույն տեղում*, հոդված 20: Տե՛ս նաև՝ *նույն տեղում*, հոդված 334(2) և հոդված 336(1):
[130] »Ոստիկանության զորքերի մասին« Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 18:

փախչելու անմիջական վտանգի բացակայության պայմաններում հարկադրանքի միջոցներ կիրառելու արգելքը ենթադրաբար նպատակ ունի կանխելու կալանավորված անձի մեղավորության վերաբերյալ տեսողական տպավորության առաջացումը:

## Բ. Միջազգային չափանիշներ

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերը, ներառյալ՝ ՄԻՀՀ-ը,[131] ՔՔԻՄԴ-ը[132] և ՄԻԵԿ-ն[133] ամրագրում են մեղադրյալի՝ մինչև օրենքին համապատասխան մեղքի ապացուցումը անմեղ համարվելու իրավունքը: ԵԱՀԿ-ի 1990թ. Կոպենհագենի փաստաթղթում անմեղության կանխավարկածը դասվում է *»արդարադատության այն տարրերի շարքին, որոնք անհրաժեշտ են բոլոր մարդկանց ներհատուկ արժանապատվության ամբողջական արտահայտման համար«*: [134] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ դատարանների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ իրավական պահանջն առ այն, որ ապացուցման պարտականությունը դրված է մեղադրանքի կողմի վրա և չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի, հանդիսանում է անմեղության կանխավարկածի անմիջական հետևանքը: Այն նաև հաստատում է, որ քրեական գործերով ապացուցման չափանիշը ողջամիտ կասկածից վեր ապացուցումն է:[135]

Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքը կարելի է բաժանել երեք փոխկապակցված տարրերի.

ա/ դատարանը չպետք է սկսի քննությունն այն կանխակալ կարծիքով, որ ամբաստանյալը կատարել է այն հանցանքը, որում մեղադրվում է,

բ/ ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը,

գ/ ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ ամբաստանյալի:[136]

Ոչ միայն դատարաններն, այլև մյուս պետական մարմինները պարտավոր են հարգել անմեղության կանխավարկածի սկզբունքը: [137] Պետական իշխանության բոլոր մարմինները պարտավոր են զերծ մնալ դատաքննության ելքը կանխորոշելուց, այսինքն՝ մեղադրյալի մեղավորությունը հաստատող

---

[131] ՄԻՀՀ, հոդված 11(1):

[132] ՔՔԻՄԴ, հոդված 14(2):

[133] ՄԻԵԿ, հոդված 6(2):

[134] 1990թ. Կոպենհագենյան փաստաթուղթ, պարագրաֆ 5.19:

[135] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն No. 32՝ 14-րդ հոդվածի վերաբերյալ. Դատարանների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունքը, CCPR/C/GC/32, 23 օգոստոսի 2007թ., պարագրաֆ 30:

[136] Տե՛ս, *Barberà, Messegué and Jabardo v. Spain*, ՄԻԵԴ վճիռ, 6 դեկտեմբերի 1988թ., պարագրաֆ 77:

[137] Տե՛ս՝ *Daktaras v. Lithuania,* ՄԻԵԴ վճիռ, 10 հոկտեմբերի 2000թ., պարագրաֆ 42:

հրապարակային հայտարարություններ կատարելուց:[138] Լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափանիշներ են, որոնք արդար դատաքննության գաղափարի անկյունաքարն են հանդիսանում: [139] Մեղադրյալին իշխանությունների կողմից գործադրվող կամայական հարկադրանքից պաշտպանելու նպատակը արդարադատության իրականացման ընթացքում սխալներից խուսափելն է և արդար դատաքննության նպատակների ձեռք բերումը: [140]

Ամբաստանյալների հետ վարվելակերպը պետք է ամբողջությամբ արտացոլի անմեղության կանխավարկածի սկզբունքը (ներառյալ՝ ոտնաշղթաներ կամ ձեռնաշղթաներ կիրառելը կամ այլ կերպ մեղադրյալին հարկադրանքի ենթարկելը): Մեղադրյալի վտանգավորությունն ընդգծող առերևույթ նշանները ոտնահարում են անմեղության կանխավարկածի սկզբունքը: Մարդու իրավունքների կոմիտեն, մասնավորապես, նշել է, որ »*որպես կանոն, նիստերի ժամանակ ամբաստանյալները չպետք է շղթայվեն կամ պահվեն վանդակներում կամ այլ կերպ դատարանին ներկայացվեն այնպես, որը մատնանշում է նրանց՝ վտանգավոր հանցագործներ լինելու հնարավորության մասին*«:[141]

Շղթաների և անվտանգության միջոցների կիրառմանն առնչվող հարցերը ՄԻԵԴ-ը քննել է հիմնականում անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքի լույսի ներքո (հոդված 3), այլ ոչ թե անմեղության կանխավարկածի սկզունքի (6-րդ հոդված):
Այս առնչությամբ Եվրոպական դատարանը սահմանել է հետևյալ կանոնները.
Անվտանգության միջոցները պետք է պայմանավորված լինեն գործի հանգամանքներով, անվտանգության ապահովման կարիքներին համաչափ, այլապես դրանք կնպաստեն մեղադրյալի նվաստացմանն՝ անկախ նրանից, թե դա եղել է կանխամտածված, թե՝ ոչ: Անձին ձեռնաշղթաներ հագցնելը կամ անվտանգության այլ միջոցներ կիրառելը (օրինակ՝ նիստերի դահլիճում հատուկ ստորաբաժանումների ներկայությունը) հանգեցնում են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտմանը, եթե չի ապացուցվում, որ տվյալ իրավիճակում առկա են եղել անվտանգության լուրջ սպառնալիքներ:[142]

Չափազանց կարևոր է այն հարցի քննարկումը, թե արդյո՞ք առկա է տվյալ անձի կողմից փախչելու կամ վնաս պատճառելու վտանգ:[143] 3-րդ հոդվածը խախտված է համարվում այն դեպքերում, երբ հրապարակային դատաքննության ընթացքում

---

[138] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն No. 32՝ 14-րդ հոդվածի վերաբերյալ. Դատարանների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունքը, CCPR/C/GC/32, 23 օգոստոսի 2007թ., պարագրաֆ 30:
[139] Տե՛ս ՔՔԻՄԴ, հոդված 14(3)(է) Տե՛ս նաև՝ *Allan v. the United Kingdom*, ՄԻԵԴ վճիռ, 5 նոյեմբերի 2002թ., պարագրաֆ 44:
[140] *John Murray v. the United Kingdom*, ՄԻԵԴ վճիռ, 8 փետրվարի 1996թ, պարագրաֆ 45:
[141] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն No. 32՝ 14-րդ հոդվածի վերաբերյալ. Դատարանների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունքը, CCPR/C/GC/32, 23 օգոստոսի 2007թ., պարագրաֆ 30:
[142] Տե՛ս *Mouisel v. France*, ՄԻԵԴ վճիռ, 14 նոյեմբերի 2002թ., պարագրաֆ 47, *Henaf v. France*, ՄԻԵԴ վճիռ, 27 նոյեմբերի 2003թ., պարագրաֆ 48, և *Istratii and Others v. Moldova*, ՄԻԵԴ վճիռ, 27 մարտի 2007թ., պարագրաֆ 57:
[143] *Raninen v. Finland*, ՄԻԵԴ վճիռ, 16 դեկտեմբերի 1997թ., պարագրաֆ 56:

անձն անհիմն, առանց հիմքերի կրում է ձեռնաշղթաներ կամ նրա նկատմամբ կիրառվում են անվտանգության այլ միջոցներ:[144] Ամբաստանյալի՝ հասարակական գործիչ լինելը, նախկինում դատվածության բացակայությունը և քրեական գործով վարույթի ընթացքում դրսևորած կարգապահությունը կարևոր գործոններ են՝ անվտանգության շահր, դատարան փոխադրելու կամ դատական նիստերի ընթացքում փախուստի դիմելու կամ բռնություն գործադրելու վտանգները գնահատելիս:[145]

Դատական քննությունը հասարակ դիտորդի մոտ չպետք է այնպիսի տպավորություն ստեղծի, որ դատվում են »չափազանց վտանգավոր հանցագործներ«: Հետևաբար, երկաթե վանդակների և արգելապատ առաստաղների առկայությունը, ծանր զինված հսկիչների ներկայությունը դատարանում կամ դատական նիստերի դահլիճում պետք է լինեն բացառիկ դեպքերում:[146]

## Գ. Հետևություններ և վերլուծություն

Անմեղության կանխավարկածը գործում է քրեական գործի նախաքննության և դատական քննության փուլերում: Սույն Ծրագրում դիտորդներն ուսումնասիրել են այս սկզբունքի պահպանումը դատական նիստերի դահլիճներում: Դիտորդների պարտականությունները չեն ներառել այն հարցի գնահատումը, թե արդյոք մեղադրանքի կողմին հաջողվել է ողջամիտ կասկածից վեր ապացուցել ամբաստանյալի մեղքը: Այդպիսի գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ կլիներ իրականացնել ապացույցների ըստ էության հետազոտություն, ինչ դուրս կգար Ծրագրի շրջանակներից:

Դիտորդները համակարգված կերպով տեղեկություններ չեն հավաքել պաշտոնատար անձանց կողմից դատական նիստերի դահլիճից դուրս կատարված մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք կարող էին խախտել անմեղության կանխավարկածը:[147]

Դիտորդները գնահատել են անմեղության կանխավարկածի սկզբունքի հետևյալ տարրերը՝ դատարանների վերաբերմունքն ամբաստանյալի նկատմամբ, մասնավորապես այն, թե արդյոք դատարանները որոշակի կանխակալ հակվածություններ են դրսևորել և/կամ ցուցաբերել կողմնակալ վերաբերմունք ամբաստանյալի և նրա մեղավորության վերաբերյալ, դատավորի կամ դատաքննության որևէ այլ մասնակցի կողմից ամբաստանյալների նկատմամբ հոգեբանական կամ այլ տեսակի ճնշումների գործադրումը և անմեղության կանխավարկածի հետ անհամատեղելի արտաքին դրսևորումների առկայությունը

---

[144] *Gorodnichev v. Russia*, ՄԻԵԴ վճիռ 25 մայիսի 2007թ., պարագրաֆներ 105-109:
[145] *Sarban v. Moldova*, ՄԻԵԴ վճիռ, 4 հոկտեմբերի 2005թ., պարագրաֆ 89:
[146] *Ramishvili and Kokhreidze v. Georgia*, ՄԻԵԴ վճիռ, 27 հունվարի 2009թ., պարագրաֆ 100:
[147] Ծրագրին հատկացված միջոցները բավարար չէին լրատվամիջոցների մոնիթորինգ իրականացնելու համար:

(ձեռնաշղթաների անհիմն կիրառում, վանդակների առկայություն, անվտանգության այլ միջոցները):

### *i. Դատավորների կողմից հնչեցված բացասական մեկնաբանությունները*

Դիտորդներն արձանագրել են, որ մի շարք գործերով դատավորների կողմից նիստի ընթացքում հնչեցված մեկնաբանություններն ակնարկել են ամբաստանյալի մեղավորությունը: [148] Այդ մեկնաբանությունները հաճախ զուգակցվել են դատավորների կողմից դրսևորված մեղադրական կամ նույնիսկ բացահայտ թշնամական վերաբերմունքով: Նման մեկնաբանություններն ու վերաբերմունքն անհամատեղելի են ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքի հետ և վնասում են արդարադատության անկողմնակալ իրականացման վերաբերյալ հանրության վստահությանը:

| |
|---|
| 2008թ. նոյեմբերի 4-ի՝ ամբաստանյալ Մ.-ի գործով կայացած նիստի ընթացքում պաշտպանն իր ճառում ընդգծել է այն հանգամանքները, որոնք դրականորեն են բնութագրում ամբաստանյալի անձը և ձեռքբերումները: Նա նշել է՝ »Այս անձի հաղթանակների շնորհիվ աշխարհի շատ երկրներում հնչել է Հայաստանի օրհներգը և բարձրացվել է Հայաստանի դրոշը. նա պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով և հաղթանշաններով«: Դատավորը հեգնանքով հարցրել է. »Սա մեղմացնո՞ղ, թե՞ ծանրացնող հանգամանք է«, և անմիջապես ավելացրել. »Ես անձամբ գտնում եմ, որ դա ծանրացնող հանգամանք է, քանի որ նման արժանիքների տեր անձնավորությունը չպետք է կատարեր նման հանցանքներ«:[149] |

| |
|---|
| 2008թ. հուլիսի 11-ի՝ ամբաստանյալ Ա.-ի գործով կայացած նիստի ընթացքում, երբ ամբաստանյալը բերվել է դատական նիստերի դահլիճ, ներկաները սկսել են ծափահարել: Երևանի քրեական դատարանի դատավորը զայրացած մեկնաբանել է ներկաների նման արձագանքը՝ նշելով.՝ »Ես ամաչում եմ մարտի 1-ի և քեզ նման մարդկանց համար« (այս խոսքերն ուղղելով Ա.-ին):[150] |

Որոշ դեպքերում, դիտարկված գործերով դատավորները ամբաստանյալների վրա ճնշում են գործադրել՝ մեղքը խոստովանելու կամ ընդունելու նպատակով: Չնայած դատավորներն ունեն մեղադրանքի վերաբերյալ ամբաստանյալի դիրքորոշումը ճշգրտելու իրավական պարտականություն,[151] նրանք պետք է այն իրականացնեն չեզոքության սահմաններում՝ պատշաճ հարգանք ցուցաբերելով ամբաստանյալի՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի նկատմամբ:[152]

[148] Օրինակ՝ R.N.38-30.06.2008, R.N.30-22.06.2008, R.N.14-04.06.2008, R.N.24-18.06.2008, R.N.85-25.09.2008, R.N.18-12.06.2008, R.N.51-21.07.2008, R.N.55-22.07.2008, R.N.77-03.09.2008, R.N.100-10.10.2008.
[149] R.N.107-21.11.2008.
[150] R.N.83-18.09.2008.
[151] ՔԴՕ, հոդված 334:
[152] Տե՛ս նաև գլուխ 5-ը՝ ներքևում:

2008թ. հունիսի 23-ի՝ Կ.-ի գործով նիստի ժամանակ դատավորը երկու անգամ հարցրել է, թե արդյոք ամբաստանյալն ընդունում է իր մեղքը: Երբ ամբաստանյալը երկրորդ անգամ պատասխանեց՝ »Մեղավոր չեմ«, դատավորը կրկին հեգնանքով հարցրեց. »Ընդհանրապե՞ս«: Ավելի ուշ, երբ ամբաստանյալը սկսեց ցուցմունք տալ, դատավորը նրան ասաց, որ եթե նա ընդունի իր մեղքը և զղջում արտահայտի, ապա դատարանը կդիտի դա որպես մեղմացնող հանգամանք:[153]

Ամբաստանյալ Դ.-ին հարցաքննելիս, Երևանի քրեական դատարանի դատավորը հարցնում է ամբաստանյալին, թե արդյոք նա եղել է ընդդիմադիր շարժման ակտիվիստ, թե ոչ, որին ի պատասխան ամբաստանյալը նշել է, որ չի ցանկանում պատասխանել այդ հարցին: Դրան ի պատասխան՝ դատավորը լսելի կերպով քթի տակ արտասանեց. »Նա շատ էլ լավ ակտիվիստ է, բայց վախենում է ընդունել դա«: Այնուհետև, դատավորը բարձրաձայն զգուշացրեց ամբաստանյալին, որ նման պահվածքը չի բխում ամբաստանյալի շահերից, և որ ավելի լավ կլիներ, եթե նա ճիշտն ասեր:[154]

Հայաստանի օրենսդրությունը դատավորին պարտավորեցնում է ամբաստանյալին բացատրել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք չտալու, նախաքննության ընթացքում արված մեղքի խոստովանությամբ կամ հերքումով կաշկանդված չլինելու և լռելու իրավունքները:[155] Չնայած այն հանգամանքին, որ դատավորները, որպես կանոն, հետևել են այս սկզբունքին, Ծրագրի դիտորդներն ականատես են եղել այնպիսի իրավիճակների, երբ դատարանները պատշաճ կերպով չեն կատարել ամբաստանյալներին որոշ իրավունքներ բացատրելու պարտականությունը, որոնք կազմում են անմեղության կանխավարկածի բաղկացուցիչ մասը և զգալի նշանակություն ունեն արդար դատաքննության համար:

2008թ. ապրիլի 29-ի՝ Կ.-ի գործով նիստի ժամանակ Երևանի քրեական դատարանի դատավորն ամբաստանյալին չի բացատրել, որ նա կաշկանդված չէ գործի նախաքննության ընթացքում մեղքը խոստովանելու կամ հերքելու հանգամանքներով: Դատավորը նաև չի բացատրել ամբաստանյալին, որ նա պարտավոր չէր պատասխանել հարցերին, և որ հարցերին չպատասխանելը չի կարող մեկնաբանվել իր դեմ:[156]

### *ii. Անվտանգության միջոցները*

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային չափանիշները սահմանում են, որ ամբաստանյալները, որպես կանոն, նիստերի ընթացքում չպետք է լինեն շղթայված, պահվեն վանդակներում կամ  դատարանին ներկայացվեն այլ կերպ, որը կմատնանշի, թե նրանք կարող են վտանգավոր հանցագործներ լինել: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ապահովելու համար, որ անվտանգության միջոցները կիրառվում են անմեղության կանխավարկածին համապատասխան:

[153] R.N.52-21.07.2008.
[154] R.N.83-18.09.2008.
[155] ՔԴՕ, հոդվածներ 334 և 336:
[156] R.N.04-09.05.2008, R.N.89-26.09.2008.

Դիտորդներն արձանագրել են, որ առնվազն յոթ դիտարկված գործեր զուգորդվել են անվտանգության միջոցների խիստ օգտագործմամբ: Առաջին ատյանում քննված առնվազն 32 գործերով նիստերի դահլիճ մուտք գործելիս ամբաստանյալները կրել են ձեռնաշղթաներ, սակայն քիչ ժամանակ անց ձեռնաշղթաները հանվել են:[157] Սակայն, որոշ դեպքերում ամբաստանյալները մնացել են ձեռնաշղթաներով դատական նիստի կամ գործի դատական քննության ողջ ընթացքում:[158] Միայն փոքրաթիվ դեպքերում են ամբաստանյալները մուտք գործել նիստերի դահլիճ առանց ձեռնաշղթաների: Վերաքննիչ դատարան ամբաստանյալները բերվում էին ձեռնաշղթաներով, որոնք հեռացվում էին նրանց ձեռքերից և հագցվում էին նրանց ոտքերին, կամ՝ օգտագործվում էին ամբաստանյալի ոտքերը նրանց նստարանի երկաթե ձողին շղթայելու համար:

Մի քանի գործերով, դիտորդներն ականատես են եղել համակցված անվտանգության միջոցները ծայրահեղ կիրառման դեպքերի, ներառյալ՝ ոստիկանության ուժերի մասսայական ներկայությունը՝ զուգակցված ձեռնաշղթաների միաժամանակյա օգտագործմամբ: [159] Պարզվեց, որ որոշ անհատական անվտանգության միջոցների կիրառումը հիմնված չէր կոնկրետ անձանց առնչվող ռիսկերի գնահատման վրա: Չնայած դատական նիստերի դահլիճում պետք է պահպանվի ընդհանուր անվտանգություն, ամբաստանյալների նկատմամբ կիրառված անհատական անվտանգության միջոցները պետք է հավասարակշռեն անմեղության կանխավարկածի պահպանման անհրաժեշտությանը:

| |
|---|
| Ամբաստանյալ Ք.-ի գործով անվտանգության ինը զինված աշխատակիցներ և հինգ կարգադրիչներ հսկում էին ամբաստանյալին, որի ոտքերը ևս շղթայված էին:[160] Հանրային հնչեղություն ունեցող ամբաստանյալ Կ.-ի քրեական գործի քննության ժամանակ ութից 12 կարգադրիչներ կանոնավոր կերպով զբաղեցնում էին նիստերի դահլիճի նստատեղերի առաջին երկու շարքերը: Չորսից վեց կարգադրիչներ կանոնավոր կերպով կանգնում էին նստատեղերի միջև: Ի հավելումն, ամբաստանյալին հսկում էին ոստիկանության մի քանի զինված աշխատակիցներ:[161] |

Պարզվել է նաև, որ գոյություն չունի անվտանգության միջոցների կիրառումը վիճարկելու սահմանված մեխանիզմ: Այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ դատավորները դժկամ կամ անկարող էին իրականացնել վերահսկողություն այդ հարցի նկատմամբ:

| |
|---|
| 2008թ. սեպտեմբերի 19-ին և 2008թ. հուլիսի 17-ին Քրեական վերաքննիչ դատարանի կողմից քննված երկու գործերով ամբաստանյալների ոտքերը նիստի |

[157] E.g. R.N.9-19.05.2008, R.N.15-06.06.2008, R.N.16-06.06.2008, R.N.17-11.06.2008, R.N.20-13.06.2008, R.N.22-16.06.2008, R.N.23-17.06.2008, R.N.24-18.06.2008, R.N.33-24.06.2008.
[158] R.N.18-12.06.2008, R.N.44-11.07.2008, R.N.92-01.10.2008.
[159] R.N.13-04.06.2008, R.N.30-22.06.2008, R.N.86-25.09.2008, R.N.130-29.04.2008.
[160] R.N.13-04.06.2008.
[161] R.N.112-02.12.2008.

ողջ ընթացքում շղթայված էին, իսկ նրանց շրջապատում էին մի խումբ զինված ոստիկաններ և կարգադրիչներ: Թե ամբաստանյալները, թե նրանց պաշտպանները վիճարկել են ոտքերը շղթայելու օրինականությունը և դատարանին խնդրել ոտքերի շղթաները արձակելու կարգադրություն տալ՝ հղում կատարելով միջազգային չափանիշներին և վկայակոչելով, որ նման վերաբերմունքը հանդիսանում է նվաստացուցիչ վերաբերմունք: Ամբաստանյալներից մեկը նաև հայտնել է, որ դա խոչընդոտում է իր իրավունքների արդյունավետ պաշտպանությանը և ուշադրությունը շեղող ազդեցություն ունի: Դատավորը պատասխանել է. »Սա է սահմանված կարգը: Մենք դեմ չենք, ուստի կարող էք խնդրել ուղեկցող անձնակազմին, եթե դա ընդունելի է նրանց համար«: Սակայն, անձնակազմի ղեկավարը մերժել է խնդրանքի բավարարումը:[162]

Դիտարկումների արդյունքում նաև հայտնաբերվել է, որ որոշ միջանկյալ դատական ակտեր վկայակոչել են մեղադրյալին/ամբաստանյալին որպես »հանցանքը կատարած անձ«:[163] Այս առումով անհրաժեշտ է նշել, որ անմեղության կանխավարկածը ոտնահարվում է, »երբ դատարանի՝ քրեական հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձի առնչությամբ կայացված որոշման մեջ արտացոլված է կարծիք առ այն, որ անձը մեղավոր է՝ մինչև օրենքին համապատասխան նրա մեղքի ապացուցումը«:[164]

## Դ. Եզրահանգումներ

Դիտարկված գործերում անմեղության կանխավարկածը ոտնահարվել է մի շարք դատավորների կողմից կատարված մեկնաբանությունների և գործողությունների միջոցով: Առավել մեծ ջանքեր պետք է գործադրվեն երաշխավորելու համար, որ դատավորները հասկանում են մեղադրյալի նկատմամբ վերաբերմունքին առնչվող այս հիմնարար սկզբունքի գործնական դրսևորումները:

Ճանաչելով դատական նիստերի դահլիճում կարգուկանոն պահպանելու իրավաչափ անհրաժեշտությունը, դիտարկված որոշ գործերում ամբաստանյալների նկատմամբ կիրառված անվտանգության միջոցները եղել են անհամաչափ և հիմնված չեն եղել ամբաստանյալների վտանգավորության անհատական գնահատականի վրա: Ամբաստանյալների նկատմամբ կիրառված անվտանգության անհատական միջոցները պետք է հավասարակշռվեն անմեղության կանխավարկածի ապահովման անհրաժեշտությանը: Դատավորները պետք է պատրաստ լինեն իրենց դիրքորոշումն արտահայտելու նիստերի ժամանակ այս իրավունքը սահմանափակող միջոցների կիրառման առնչությամբ, քանի որ նման միջոցներն ազդեցություն ունեն անմեղության կանխավարկածի, ինչպես նաև մեղադրյալի այլ իրավունքների վրա:

---

[162] R.N.88-26.09.2008, R.N.91-29.09.2008.
[163] R.N.112-02.12.2008, R.N.61-04.08.2008.
[164] *Allenet de Ribemont v. France*, ՄԻԵԴ վճիռ, 10 փետրվարի 1995թ., պարագրաֆ 35:

# Գլուխ 4. Կողմերի հավասարությունը և ոստիկանության ապացույցների վրա հիմնվելու աստիճանը

Բազմաթիվ դիտարկված գործեր բացահայտեցին բացթողումներ՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև իրական հավասարության ապահովման կապակցությամբ, ինչը հակասում է արդար դատաքննության վերաբերյալ ներպետական և միջազգային չափանիշներում ամրագրված երաշխիքներին: Կողմերի հանդեպ դատավորները երբեմն ցուցաբերում էին անհավասար վերաբերմունք՝ դրսևորելով բացահայտ բարյացակամ վերաբերմունք մեղադրող կողմի և բացահայտ անբարյացակամ վերաբերմունք պաշտպանության կողմի նկատմամբ: Բազմաթիվ նիստերի ընթացքում դատավորները պաշտպանության կողմին չեն թույլատրել ներկայացնելու գործը և/կամ հարցաքննելու մեղադրող կողմի վկաներին: Սույն գլխում նաև ընդգծվում է մեղադրանքի օգտին ստացված վկաների գրավոր ցուցմունքների վրա հիմնվելու հետ կապված մտահոգություն այն պարագայում, երբ այդ ցուցմունքների հավաստիությունը հնարավոր չէր արդյունավետ կերպով ստուգել նիստի ժամանակ կամ որոնցից հետագայում վկաները հրաժարվել էին:

Մեծաթիվ գործերում արձանագրված խնդրահարույց հարցերից է ոստիկանների մեղսագրական ցուցմունքների վրա չափից ավելի հիմնվելը, ինչը նաև կասկած է հարուցում դիտարկված գործերում կողմերի հավասարության սկզբունքի առկայության առնչությամբ: Մի շարք գործերում, ոստիկան վկաների հայտարարությունները հանդիսացել են մեղադրական դատավճիռներ կայացնելու գլխավոր, եթե ոչ միակ, հիմքը՝ չնայած հաճախակի տեղ գտած դատավարական խախտումներին, հակասություններին և փաստերը հաստատող ապացույցների բացակայությանը:

## Ա. Ներպետական օրենսդրություն

Հայաստանի օրենսդրությունը, մասնավորապես ՔԴՕ-ը, նախատեսում է պաշտպանության և մեղադրանքի գործառույթների խիստ տարանջատում,[165] և երաշխավորում է կողմերի հավասարությունը՝[166] պահանջելով, որպեսզի գործի ներկայացման հարցում պաշտպանությունն ունենա մեղադրանքի կողմի հետ հավասար հնարավորություններ: Մասնավորապես՝ ՔԴՕ-ն պահանջում է, որպեսզի ապացույցների հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվի հավասար մատչելիություն:[167]

ՔԴՕ-ն և Դատական օրենսգիրքը[168] չափազանց կարևոր դեր են հատկացնում գործի քննության մրցակցային բնույթին:[169] Հայաստանի Հանրապետության քրեական

[165] ՔԴՕ, հոդված 23(2):
[166] *Նույն տեղում,* հոդված 23(5), *տե՛ս նաև* հոդված 304(1):
[167] *Նույն տեղում,* հոդված 23(5):
[168] *Նույն տեղում,* հոդված 23(1), *տե՛ս նաև* Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք, հոդված 17:

արդարադատության համակարգում մրցակցության տարրերի ներմուծումը եղել է դատական բարեփոխումների անկյունաքարերից մեկը, որն ամրապնդվել է 2005թ. սահմանադրական փոփոխություններով, և մի շարք քայլերով, որոնք ձեռնարկվել են պաշտպանության և մեղադրանքի կողմերի դիրքերը հավասարակշռելու նպատակով:

Օրենքը պահանջում է, որպեսզի երկու կողմերը ներկա գտնվեն դատական նիստին:[170] Այն դեպքում, երբ պաշտպանը չի ներկայացել դատական նիստին, նիստը հետաձգվում է: Ամբաստանյալի համաձայնության բացակայության պայմաններում պաշտպանը չի կարող փոխարինվել, բացառությամբ այն դեպքերի, երբ պաշտպանը տևական հիվանդության պատճառով այլ հիմքերով երեք անգամ անընդմեջ չի ներկայանում դատական նիստին, որի դեպքում դատարանը կարող է Հանրային պաշտպանի գրասենյակից նոր պաշտպան նշանակել:[171]

Դատարանը պարտավոր է գնահատել ապացույցների թույլատրելիությունը:[172] ՔԴՕ-ի համաձայն՝ »*յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից*«:[173]

Ապացույցներ պահանջելը կարող է իրականացվել կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ:[174] Անմիջականության սկզբունքի համաձայն՝ »*միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ*«:[175] Վկայի բացակայության դեպքում, դատավորը, ելնելով վկայի ցուցմունքի հարաբերական կարևորությունից, որոշում է, թե արդյոք անհրաժեշտ է հետաձգել նիստը:[176]

## Բ. Միջազգային չափանիշներ

»Կողմերի հավասարություն« նշանակում է, որ քննության ընթացքում երկու կողմերը պետք է ունենան հավասար իրավական դրություն, մասնավորապես՝

---

[169] Սա չի նշանակում, որ Հայաստանի քրեական արդարադատության համակարգը դասվում է մրցակցային համակարգերի շարքին: Այն հիմնված է քաղաքացիական իրավունքի ավանդույթի վրա և ներառում է այնպիսի հատկանիշներ, որոնք բացակայում են ավանդական մրցակցային համակարգերում (օրինակ, դատարանը կարող է իր նախաձեռնությամբ դատակոչել վկաների և գործն ուղարկել լրացուցիչ քննության):

[170] ՔԴՕ, հոդված 23(8), *տե՛ս նաև* հոդված 390:

[171] *Նույն տեղում,* հոդված 304(2):

[172] ՔԴՕ, հոդված 106:

[173] *Նույն տեղում,* հոդված 127:

[174] *Նույն տեղում,* հոդված 331:

[175] *Նույն տեղում,* հոդված 102(2):

[176] *Նույն տեղում,* հոդված 332(1):

դատարանի առջև նրանք հավասար վերաքննության իրավունք ունեն: Դա նշանակում է, որ բոլոր կողմերը պետք է նույն դատավարական իրավունքներն ունենան, եթե տարբերակումները նախատեսված չեն օրենքով և չեն կարող արդարացվել օբյեկտիվ և ողջամիտ պատճառներով, որոնք ամբաստանյալի համար կարող են անբարենպաստ կամ այլ անարդար հետևանքներ առաջացնել:[177]

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն նշել է, որ արդար քննությունը պահանջում է մի շարք պայմաններ, ներառյալ կողմերի հավասարությունը, մրցակցային դատաքննության սկզբունքի հարգումը և արագ քննությունը: [178] ՄԻԵԴ-ը գտել է, որ *»կողմերի հավասարության սկզբունքի՝ որպես արդար դատաքննության՝ ավելի լայն հասկացության հատկանիշներից մեկի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք մի կողմին մյուսի նկատմամբ չեն դնում անբարենպաստ դրության մեջ […]*«:[179]

Քրեական վարույթներում, երբ մեղադրանքի կողմին աջակցում է ողջ վարչական ապարատը ու այն ապահովված է ռեսուրսներով, կողմերի հավասարության սկզբունքը սեփական իրավունքները պաշտպանելու իրավունքի էական երաշխիք է: Կողմերի հավասարության սկզբունքն ապահովում է, որ պաշտպանության կողմը մեղադրանքի կողմի հետ հավասար՝ իր գործը նախապատրաստելու և ներկայացնելու ողջամիտ հնարավորություն ունենա: Դրա պահանջները ներառում են՝ պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ, ներառյալ՝ մեղադրանքի կողմից նյութական տեղեկությունների բացահայտումը,[180] պաշտպան ունենալու իրավունքը, վկաներ հրավիրելու ու հետազոտելու իրավունքը և նիստին ներկա գտնվելու իրավունքը:

Կողմերի հավասարության իրավունքը ներառում է նաև մրցակցային քննության իրավունքը, որն ըստ էության նշանակում է քրեական գործի վարույթի մասնակիցների՝ բոլոր ապացույցների կամ ներկայացված դիտարկումների մասին տեղյակ լինելու և դրանց վերաբերյալ մեկնաբանություններ արտահայտելու հնարավորությունը:[181] Բացի այդ, կողմերի հավասարության իրավունքը՝ ՄԻԵԿ-ի 6(3)բ հոդվածով երաշխավորված՝ պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքի հետ համատեղ, մեղադրող և քննչական մարմիններին պարտավորեցնում են բացահայտել իրենց տիրապետության տակ գտնվող ցանկացած նյութ՝ անկախ այն հանգամանքից, թե դա մեղադրյալի օգտին է, թե՝ դեմ: Այս սկզբունքը տարածվում է

[177] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն No. 32՝ 14-րդ հոդվածի վերաբերյալ. Դատարանների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունքը, CCPR/C/GC/32, 23 օգոստոսի 2007թ., պարագրաֆ 13, տե՛ս նաև *Dudko v. Australia*, UN Doc CCPR/C/90/D/1347/2005, 29 օգոստոսի 2007թ., պարագրաֆ 7.4:
[178] Տե՛ս *Morael v. France*, UN Doc. ,Supp. No. 40 (A/44/40) 210-ում (1989): 28 հուլիսի 1989թ., պարագրաֆ 9.3:
[179] *Foucher v. France*, ՄԻԵԴ վճիռ, 18 մարտի 1997թ., պարագրաֆ 34, *Bulut v. Austria*, ՄԻԵԴ վճիռ, 22 փետրվարի 1996թ., պարագրաֆ 47:
[180] *Foucher v. France*, ՄԻԵԴ վճիռ, 18 մարտի 1997թ., պարագրաֆներ 35-36:
[181] *Ruiz-Mateos v. Spain*, ՄԻԵԴ վճիռը, 23 հունիսի 1993թ., պարագրաֆ 63:

այն նյութերի վրա, որոնք կարող են կասկածի տակ դնել մեղադրանքի կողմի վկաների արժանահավատությանը:[182]

Կողմերի հավասարության սկզբունքի կարևոր մասն է կազմում այն պահանջն, ըստ որի՝ կողմերը պետք է վկաներ դատակոչելու հավասար հնարավորություններ ունենան:[183] Այս պահանջի իրավական հիմքը ՄԻԵԿ-ի 6.3(դ) հոդվածն է, որն ամրագրում է քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ »*հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները*«: Սա արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից է, և էական երաշխիք է հանդիսանում կողմնակալ ապացույցների թույլատրելիության դեմ:

Մարդու իրավունքների վերաբերյալ համապատասխան միջազգային փաստաթղթերը չեն սահմանում ապացույցների թույլատրելիությանն առնչվող որևէ նորմ:[184] Այս առումով, ՄԻԵԴ-ը միայն ուսումնասիրում է, թե արդյոք որոշումները կամայական են կամ ակնհայտ ոչ ողջամիտ, և թե արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդար է եղել:[185] Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատաքննության արդարության պահանջը ներառում է այն, թե ինչպես են ներկայացվել ապացույցները:[186]

Դատարանը գտել է, որ »*թեև, որպես կանոն, ներպետական դատարաններին է վերապահված որոշելու, թե արդյոք անհրաժեշտ կամ ցանկալի է կանչել վկային, կարող են լինել բացառիկ հանգամանքներ, որոնց պարագայում Դատարանը կարող է եզրակացնել, որ տվյալ անձին որպես վկա չլսելն անհամատեղելի է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի հետ*«:[187]

Որպես նման հանգամանքների օրինակներ՝ Դատարանը նշել է, որ »*ներպետական դատարանների կողմից պաշտպանության կողմի վկայի հարցաքննության մերժումն՝ առանց հաշվի առնելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, հանգեցրել է պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակմանը, որն անհամատեղելի է 6-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության երաշխիքների հետ*«,[188] և որ »*այնպիսի հանգամանքներում, երբ դիմողի դատապարտումը մեծապես հիմնված է եղել այն ենթադրության վրա, ըստ որի նա՝ որոշակի ժամի եղել է որոշակի վայրում՝ իր անունից վկաներ հրավիրելու և հարցաքննելու իրավունքը և կողմերի հավասարության սկզբունքը, որոնք արդար դատաքննության իրավունքի հատուկ ասպեկտներն են, նշանակում են, որ նրան*

[182]Տե՛ս *Dowsett v. United Kingdom*, ՄԻԵԴ վճիռ, 24 հունիսի 2003թ., պարագրաֆ 41:
[183] Տե՛ս *Engel and Others v. the Netherlands*, ՄԻԵԴ վճիռ, 8 հունիսի 1976թ., պարագրաֆ 91:
[184]Տե՛ս օրինակ՝ *Olujic v. Croatia*, ՄԻԵԴ վճիռ, 5 փետրվարի 2009թ., պարագրաֆ 77:
[185] Տե՛ս *Khamidov v. Russia,* ՄԻԵԴ վճիռ, 15 նոյեմբերի 2007թ., պարագրաֆ 170:
[186] Տե՛ս *ի թիվս այլոց՝ Lüdi v. Switzerland*, ՄԻԵԴ վճիռ, 15 հունիսի 1992թ., պարագրաֆ 43:
[187] Տե՛ս *Popov v. Russia*, ՄԻԵԴ վճիռ, 13 հուլիսի 2006թ., պարագրաֆ 179:
[188] *Նույն տեղում*, պարագրաֆ 188:

*պետք է ողջամիտ հնարավորություն ընձեռնվեր՝ այդ ննթադրությունն արդյունավետ կերպով վիճարկելու համար*«:[189]

Ռուտիկան վկաների ցուցմունքների վերաբերյալ նախկինում Դատարանը նշել է. »*այն հանգամանքը, որ քրեական գործի վարույթում միակ ապացույցը ծերբակալությունն իրականացրած ոստիկանի վկայությունն է՝ ինքնին չի հակասում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին, քանի դեռ մեղադրյալը հնարավորություն ունի ստուգելու այս ապացույցը մրցակցային դատավարությունում*«:[190]

Հայաստանի կողմից Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 1609 բանաձևի կատարման վերաբերյալ թիվ 1620 բանաձևում՝ Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների գործունեության մասին ԵԽԽՎ-ն նշել է. »բացառապես մեկ ոստիկանի ցուցմունքի վրա հիմնված դատավճիռը, առանց այդ ցուցմունքները հաստատող ապացույցների՝ անընդունելի է«: [191]

Վերջապես, անմիջականության սկզբունքը արդարության կարևոր երաշխիք է, քանի որ ներկայացված ապացույցը պետք է բավարար չափով »ուղղակի« լինի՝ դրանք դատական նիստի ընթացքում դրա հերքումը հնարավոր դարձնելու համար: Պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակումները ՄԻԵԿ 6-րդ հոդվածի հետ անհամատեղելի են համարվում այն ժամանակ, երբ դատապարտումը հիմնված է բացառապես կամ որոշիչ չափով այն վկայի ցուցմունքների վրա, ում մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ ով նախաքննության ընթացքում կամ դատական քննության ժամանակ չի հարցաքննվել դատական մարմնի կողմից:[192] Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ը գտնում է, որ անձը չի կարող դատապարտվել փաստաթղթի տեսք ստացած անուղղակի ապացույցների կամ գրավոր ապացույցների հիման վրա, եթե ամբաստանյալը հնարավորություն չի ունեցել պատասխանելու և խաչաձև հարցաքննելու այդ ապացույցի աղբյուրներին:[193]

## Գ. Հետևություններ և վերլուծություն

Ծրագրի դիտորդների կողմից հավաքած տեղեկություններից հետևում է, որ դիտարկված դատավարություններում կողմերի հավասարության սկզբունքը հետևողական կիրառում չի ստացել: Դիտորդները մի շարք բացթողումներ են արձանագրել՝ կապված դատարանի կողմից երկու կողմերի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի և իրենց գործը ներկայացնելու համար նրանց տրված հնարավորությունների հավասարության հետ: Այս խնդիրները ներքևում շարադրված են համապատասխան մասերում: Առանձին մաս է հատկացված մեղադրանքի կողմի վկաների գրավոր ցուցմունքների վրա հիմնվելու

[189] Տե՛ս *Polyakov v Russia,* ՄԻԵԿ վճիռ, 29 հունվարի 2009թ., պարագրաֆ 36:
[190] Տե՛ս *Galstyan v. Armenia*, ՄԻԵԴ վճիռ, 15 նոյեմբերի 2007թ., պարագրաֆ 78:
[191] ԵԽԽՎ թիվ 1620 բանաձևը Հայաստանի կողմից Վեհաժողովի 1609 բանաձևի կատարման վերաբերյալ, պարագրաֆ 4.7.3:
[192] *Delta v. France*, ՄԻԵԴ վճիռ, 19 դեկտեմբերի 1990թ., պարագրաֆ 37, *Isgrծ v. Italy*, ՄԻԵԴ վճիռ, 19 փետրվարի 1991թ., պարագրաֆ 35:
[193] *Delta v. France*, ՄԻԵԴ վճիռ, 19 դեկտեմբերի 1990թ., պարագրաֆ 37:

պրակտիկային և դրա՝ մրցակցային դատաքննության սկզբունքին համապատասխանելու հարցերին:

### *i. Գործը ներկայացնելու հնարավորությունները*

Դիտորդներն արձանագրել են պաշտպանության կողմի նկատմամբ դատարանի անբարենպաստ դիրքորոշման դրսևորումներ, ինչպես նաև իրավիճակներ, երբ պաշտպանության կողմը զրկվել է իր դատավարական իրավունքների արդյունավետ իրականացման և իրենց գործը ներկայացնելու հնարավորությունից: Դիտարկումների արդյունքում ձեռք բերված տվյալները մատնանշում են, որ պաշտպանության կողմն ապացույցներ ներկայացնելիս և դրանք հետազոտելիս, ինչպես նաև իրենց փաստարկները լսելի դարձնելու հարցում գտնվել է առավել անբարենպաստ պայմաններում:

*Կողմերի հավասարությունը՝ թվային արտահայտությամբ*

Թեև ստորև ներկայացված թվային տվյալները չեն հանդիսանում անհերքելի ապացույց, դրանք ծառայում են դիտարկված գործերով դատալսազության օգտին որոշակի անհավասարակշռված մոտեցման առկայությունը հիմնավորող ցուցանիշ:

Առաջին ատյանի դատարանում դիտարկված նիստերի ընթացքում պաշտպանության կողմը ներկայացրել է 390 միջնորդություն (24 դատավարական, 366 նյութական),[194] իսկ մեղադրանքի կողմը ներկայացրել է 115 միջնորդություն (10 դատավարական, 105 նյութական): Վերաքննիչ ատյանում պաշտպանության կողմը ներկայացրել է 93 միջնորդություն (27 դատավարական, 66 նյութական), իսկ մեղադրանքի կողմը ներկայացրել է 20 միջնորդություն (մեկ դատավարական, 19 նյութական): Ընդհանուր թվով, պաշտպանության կողմը ներկայացրել է 483 միջնորդություն, իսկ մեղադրանքի կողմը՝ 135 միջնորդություն:

Առաջին ատյանի դատարանները բավարարել են պաշտպանության կողմի 24 դատավարական միջնորդություններից 20-ը, իսկ 366 նյութական միջնորդություններից՝ 101 միջնորդություն: 201 նյութական միջնորդություններ մերժվել են, իսկ 64 միջնորդությունների քննարկումը հետաձգվել է (և դատական քննության ընթացքում մնացել են առանց քննության): Վերաքննիչ ատյանում, 27 դատավարական միջնորդություններից 24-ը բավարարվել է, իսկ 66 նյութական

[194] Սույն զեկույցի նպատակներից ելնելով՝ միջնորդությունները բաժանվել են երկու խմբի՝ դատավարական և նյութական: »Դատավարական«-ը մատնանշում է այն միջնորդությունները, որոնք վկայակոչել են ընթացակարգային խնդիրներ, ինչպիսիք են՝ դատական նիստի հետաձգումը: »Նյութականը« մատնանշում է այն միջնորդությունները, որոնք ուղղակիորեն առնչվել են դատավարության կողմի գործը ներկայացնելու հնարավորության հետ (վկա հրավիրելու, փաստաթուղթը գործին կցելու, ամբաստանյալին ազատ արձակելու, կալանավորման օրինականությունը ստուգելու վերաբերյալ միջնորդությունները և այլն): Արագացված դատաքննություն կիրառելու և դատավորի անաչառությունը վիճարկելու վերաբերյալ միջնորդությունները համարվել են առանձին կարգի միջնորդություններ, և չեն համարվել ոչ դատավարական, ոչ էլ նյութական միջնորդություններ:

միջնորդություններից բավարարվել են 12-ը: 19 նյութական միջնորդություններ մերժվել են:

Ինչ վերաբերվում է մեղադրանքի կողմի միջնորդություններին, առաջին ատյանի դատարանները բավարարել են տաս դատավարական միջնորդություններից ութը, և 105 նյութական միջնորդություններից՝ 80-ը: Վեց նյութական միջնորդությունների քննարկումը հետաձգվել է: Վերաքննիչ դատարանները մերժել են մեղադրանքի կողմի մեկ դատավարական միջնորդություն և 19 նյութական միջնորդություններից բավարարել 17-ը: Դատարանները մերժել են երկու միջնորդություն՝ մանրամասն պատճառաբանելով իրենց որոշումները:

Ընդհանուր թվով, պաշտպանության կողմի միջնորդությունների 31%-ը բավարարվել է, 56%-ը՝ մերժվել, իսկ 13%-ը՝ մնացել առանց լուծման: Մեղադրանքի կողմի պարագայում, միջնորդությունների 75%-ը բավարարվել են, 20%-ը՝ մերժվել, իսկ 5%-ը՝ մնացել առանց լուծման:

Աղյուսակ 2. Միջնորդությունների վերաբերյալ կայացված որոշումները

*Պաշտպանության կողմի միջնորդությունները*




*Մեղադրանքի կողմի միջնորդությունները*




Պաշտպանները պարբերաբար միջնորդել են դատարաններին՝ վկաներ դատակոչելու, դատաբժշկական փորձաքննություն նշանակելու, և այլ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու խնդրանքներով:[195] Դատարանները հիմնականում

[195] Ոչ պաշտոնական զրույցների ընթացքում, մի շարք պաշտպաններ նշել են, որ մինչդատական վարույթում նրանք հաճախ խուսափում են մեղադրանքի կողմի առջև իրենց վկաներին

դժկամություն էին ցուցաբերում այս միջնորդությունների բավարարման հարցում՝ հաճախ առանց որևէ պատճառաբանության, թեև ներպետական օրենսդրությունը դատարաններին պարտավորեցնում է պատճառաբանել այս որոշումները:[196]

Միջնորդությունների նման չհիմնավորված մերժումները պաշտպանության կողմին դնում էին լուրջ անբարենպաստ պայմանների մեջ՝ զրկելով նրան մեղադրանքի կողմի հետ հավասար պայմաններում իր գործը ներկայացնելու հնարավորությունից: Արդյունքում, առաջին ատյանում դիտարկված առնվազն 44 գործով դատարանի կողմից լսված վկաների ցուցմունքներն ապահովվել են միայն իրադարձությունների վերաբերյալ մեղադրանքի կողմի առաջարկված տարբերակի հիմնավորմանը: Պաշտպանության կողմը արդյունավետորեն զրկվել է հավանական արդարացնող ապացույցները ձեռք բերելու և մեղադրանքի կողմի վկաների ցուցմունքները հերքելու հնարավորությունից:[197]

| |
|---|
| 2008թ. ապրիլի 28-ի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանում Ա.-ի գործով նշանակված դատական նիստի ժամանակ պաշտպանության կողմը միջնորդել է որպես վկա հրավիրել երկու անձանց: Պաշտպանության կողմը նշել է, որ նրանց ցուցմունքը վերաբերելի է, քանի որ նրանք ուղեկցել են Ա.-ին այն ժամանակ, երբ նրան ձերբակալում էին 2008թ. մարտի 1-ի առավոտյան (Ա.-ն մեղադրվում էր ոստիկանին դիմադրելու համար): Այս միջնորդությունը դատավորի կողմից մերժվել է առանց որևէ պատճառաբանության: Քանի որ այլ վերաբերելի ապացույցներ չկային դատարանին ներկայացնելու և հետազոտելու համար՝ դատավճիռը գլխավորապես հիմնված էր Ա.-ին ձերբակալած երկու ոստիկանների ցուցմունքների վրա:[198] |

Ծրագրի դիտորդները մի շարք նիստերի ընթացքում արձանագրել են նաև կողմերի հանդեպ անհավասար վերաբերմունքի այլ դրսևորումներ. դատավորները հաճախ ընդհատել են պաշտպաններին, երբ նրանք հայտարարություններ էին անում, հարցաքննում վկաներին, կամ միջնորդություններ ներկայացնում: Մեղադրանքի կողմը, մյուս կողմից, բավարար հնարավորություններ ուներ իր գործը ներկայացնելու համար:[199]

| |
|---|
| 2008թ. մայիսի 26-ին Քրեական վերաքննիչ դատարանում նիստի ժամանակ դատախազն իր եզրափակիչ ճառը կարդաց 25 րոպեների ընթացքում առանց դատավորի կողմից ընդհատվելու: Սակայն, դատավորը հաճախակի ընդհատում էր պաշտպանին, երբ նա արտասանում էր իր եզրափակիչ ճառն՝ ասելով. »Սա ընդամենը եզրափակիչ ճառ է, և դուք պետք է հակիրճ լինեք«:[200] |

---

բացահայտելուց, քանի որ ունեին մտավախություն,, որ այդ վկաները կարող էին ճնշումների ենթարկվել:

[196] ՔԴՕ, հոդված 331:

[197] Օրինակ՝ R.N.3-02.05.2008, R.N.17-11.06.2008, R.N.18-12.06.2008, R.N.20-13.06.2008, R.N.31-23.06.2008, R.N.61.-04.08.2008, R.N.83-18.09.2008, R.N.119-08.01.2009.

[198] R.N.35-24.06.2008.

[199] Օրինակ՝ R.N.61-04.08.2008, R.N.108-25.11.2008, R.N.124-09.02.2009.

[200] R.N.13-04.06.2008. ՔԴՕ 354(6) հոդվածի համաձայն՝ դատարանը չի կարող դատական վիճաբանությունների տևողությունը սահմանափակել որոշակի ժամանակով, և դատավորը միայն

### *ii. Կողմերի հանդեպ անհավասար վերաբերմունքը*

Դիտորդները նաև արձանագրել են դատական վարքագծի այնպիսի օրինակներ, որոնք պատկերել են դատավորների՝ բացասական և հաճախ բացահայտ թշնամական վերաբերմունքը ամբաստանյալների և նրանց պաշտպանների հանդեպ: Այդ վերաբերմունքի անհամատեղելիությունն անմեղության կանխավարկածի հետ արդեն քննարկվել է վերևում՝ 3-րդ գլխում: Դատավորների կողմից նման վարքագծի դրսևորումը մտահոգությունների տեղիք է տալիս դատարանի առջև հավասարության առնչությամբ, հատկապես, երբ հաշվի է առնվում մեղադրանքի կողմի նկատմամբ դատավորների ցուցաբերած սիրալիր վերաբերմունքը: Դատավարությունների դիտորդները նկատել են ընդհանուր օրինաչափություն, ըստ որի՝ դատավորները հանդուրժողաբար են վերաբերվել դատախազների ուշ ներկայանալու և չներկայանալու դեպքերին, մինչդեռ պաշտպանների կողմից նույն վարքագծի դրսևորման դեպքում դիմել են դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար նախատեսված սանկցիաների կիրառմանը (տե՛ս գլուխ 9):[201]

2008թ. օգոստոսի 12-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանում տեղի ունեցած դատական նիստի ավարտին պաշտպանը դատավորին տեղեկացրեց այն մասին, որ հաջորդ դատական նիստի նշանակված օրը նրանք պետք է մասնակցեն մեկ այլ դատական նիստի և խնդրեց հաջորդ նիստը նշանակել մեկ այլ օր: Դատավորն առանց որևէ հիմնավորման մերժեց այս խնդրանքը: Ուստի, նշանակված օրը՝ 2008թ. օգոստոսի 14-ին, պաշտպանները չներկայացան նիստին: Դատարանը շարունակեց վարել նիստը և ծաղրեց ամբաստանյալին՝ ասելով, որ նրա փաստաբաններն առավել կարևոր պաշտպանյալներ ունեն, քան ինքը. »Չէ՞ր կարող նրանցից որևէ մեկը գալ: Նրանք ավելի՞ կարևոր գործեր ունեին: Ես մեկնաբանում եմ սա որպես ձեր նկատմամբ հարգանքի բացակայություն: Դուք պետք է շահագրգռված լինեք վարույթի շարունակմամբ: Ավելի լավ կլինի, եթե ձեզ համար նոր փաստաբան գտնեք«: Դատավորն այնուհետև դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար սանկցիա կիրառեց բացակա պաշտպանների նկատմամբ՝ միջնորդություն ներկայացնելով Փաստաբանների պալատին, որպեսզի վերջինս կարգապահական վարույթ հարուցի պաշտպանների նկատմամբ:[202]

2008թ. հուլիսի 8-ին Երևանի քրեական դատարանում տեղի ունեցող դատական նիստի ընդմիջման ժամանակ դատավորն ու մեղադրողը նիստերի դահլիճում մտերմիկ զրույց սկսեցին: Մեղադրողը դատավորին ասաց, որ նա շատ է շտապում, քանի որ վերաքննիչ դատարանում մեկ այլ նիստ ունի, և խնդրեց դատավորին զանգահարել այնտեղ: Դատավորը զանգահարեց ինչ որ մեկին և խոստացավ, որ մեղադրողը շուտով տեղ կհասնի: Ընդմիջումից կարճ ժամանակ անց, դատավորը

կարող է ընդհատել վիճաբանությունների մասնակցող անձանց, եթե նրանք շոշափում են գործի հետ առնչություն չունեցող հանգամանքներ:

[201] R.N.18-12.06.2008, R.N.43-08.07.2008, R.N.112-02.12.2008.

[202] R.N.112-02.12.2008.

հետաձգեց գործի քննությունը: Ամբաստանյալը շարունակեց մնալ կալանքի տակ:[203]

2008թ. հուլիսի 1-ին ժամանելով Երևանի քրեական դատարան՝ դիտորդները կարգադրիչներից տեղեկացան, որ նիստը հետաձգվելու է, որովհետև »այսօր Դատախազության 90 ամյակն է և դատախազը չի ներկայանալու«: Նիստն իսկապես հետաձգվեց դատավորի կողմից, քանի որ դատախազը չէր ներկայացել: Դատարանը չի ներկայացրել կամ քննարկել հետաձգելու պատճառները: [204]

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանում 2009թ. հունվարի 15-ին տեղի ունեցած նիստի սկզբում նիստի քարտուղարը հայտարարեց, որ պաշտպանը բացակա է: Դատավորը մասնակիցներին տեղեկացրեց, որ թեև առավոտյան նա զանգահարել է իրեն և տեղեկացրել, որ հիվանդ է, սակայն դատավորը դա չի համարում բացակայելու հարգելի պատճառ, քանի որ փաստաբանը դատարանին բժշկական տեղեկանք չի ներկայացրել: Այնուհետև, դատավորը փորձեց շարունակել նիստն առանց պաշտպանի, սակայն ամբաստանյալն առարկեց և դատավորը ստիպված էր հետաձգելու նիստը:[205]

### *iii. Ոստիկանների ցուցմունքների վրա հիմնվելու աստիճանը*

Ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների օգտագործումը դիտարկված մի շարք գործերի ընդգծված հատկանիշներից էր: Դիտարկված գործերով մեղադրանքի կողմի հրավիրած 234 վկաներից 125-ը ոստիկանության աշխատակիցներ էին: Դիտորդներն արձանագրել են 19 առանձին գործեր, որոնցում մեղադրանքները հիմնված են եղել ոստիկանության աշխատակիցների մեղսագրական ցուցմունքների վրա: 62 ոստիկան վկաներ են ցուցմունք տվել այս գործերում՝ յուրաքանչյուր գործում՝ մեկից յոթ վկա: 17 գործերով ոստիկան վկաների կողմից տրված ցուցմունքները դատարանում վկաների կողմից տրված միակ ցուցմունքներն են եղել և հանդիսացել են դատարանի որոշումների հիմնական հիմքը: Այս գործերի դիտարկումների արդյունքները մի շարք մտահոգությունների տեղիք են տալիս:

Ոստիկան վկաների մասնակցությամբ 19 գործերով 13 ամբաստանյալների նկատմամբ մեղադրանքներ են առաջադրվել ոստիկանին դիմադրություն ցույց տալու համար: [206] Ոստիկանության որոշ աշխատակիցներ, որոնք որպես վկա ցուցմունք էին տալիս այս գործերով, ճանաչվել են որպես տուժող այլ գործերով: Առնվազն վեց ամբաստանյալներ հայտարարել են ձերբակալության ժամանակ ոստիկանության կողմից իրենց նկատմամբ ցուցաբերած հակաիրավական վարքագծի և կիրառված բռնությունների մասին:[207] Դատավորները չեն քննել այս

[203] R.N.44-11.07.2008.
[204] R.N.44-11.07.2008.
[205] R.N.121-22.01.2009.
[206] ՔՕ, հոդված 316:
[207] R.N.3-02.05.2008, R.N.8-15.05.2008, R.N.17-11.06.2008, R.N.32-23.06.2008, R.N.49-18.07.2008, R.N.108-25.11.2008.

հայտարարությունները, ինչպես նաև չեն բացառել այդպիսի ապացույցների օգտագործումը:

Նման իրավիճակներում արդար դատաքննության վերաբերյալ ազգային օրենսդրությունը և միջազգային չափանիշները նախատեսում են, որ դատավորներն ամեն ջանք կգործադրեն՝ վերաբերելի բոլոր ապացույցների ձեռքբերման և հետազոտման ուղղությամբ, ինչպես նաև մեղադրյալին կտրամադրեն մեղադրանքի կողմի ներկայացրած ապացույցներն արդյունավետ վիճարկելու հնարավորություն: Սակայն, դատարանները, ըստ երևույթի, նման ջանքեր չեն գործադրել: Դիտարկումների արդյունքում հավաքված տեղեկությունները մատնանշում են, որ դատավորները պատրաստակամորեն ընդունում էին ոստիկան վկաների ցուցմունքները և չէին պահանջում այդ ցուցմունքները հաստատող այլ ապացույցներ: Որոշ դեպքերում, ոստիկանների ցուցմունքներն ընդունվել են դատավորների կողմից նույնիսկ այն դեպքում, երբ առկա էին էական հակասություններ այդ վկաների՝ մինչդատական վարույթում և դատարանում տրված ցուցմունքների միջև,[208] ինչպես նաև այն դեպքերում, երբ նույն գործով տարբեր ոստիկանների ցուցմունքներն ակնհայտորեն հակասում էին միմյանց:[209]

Միաժամանակ, դատավորները մեղադրանքի կողմին չեն պահանջել ներկայացնելու ապացույցներ, որոնք կհաստատեին ոստիկանների ցուցմունքների արժանահավատությունը, և մերժել են վկաներ հրավիրելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունները, ներառյալ՝ մեղադրանքի կողմի այն վկաներին, որոնց գրավոր ցուցմունքները հրապարակվել են դատարանում:[210]

| |
|---|
| Մի գործով, դատաքննության ժամանակ երկու ոստիկան վկաներ են հարցաքննվել՝ իրենց կողմից իրականացված ձերբակալության հանգամանքների առնչությամբ: Պաշտպանության կողմը միջնորդել է դատակոչել երեք վկաների՝ երկու քաղաքացիական անձանց և ոստիկանության մեկ աշխատակցի, ովքեր ենթադրաբար եղել էր ձերբակալության ականատեսը: Դատավորը մերժել է այս միջնորդությունները: Ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել Քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու տալու համար և դատապարտվել երեք տարի ազատազրկման:[211] |

Թեև այս միջնորդությունների որոշ մասը մերժվել է առանց որևէ պատճառաբանության,[212] այլ դեպքերում դատավորները պաշտպանության կողմին հայտնել են, որ կարիք չկա հրավիրելու այն վկաներին, որոնց մինչդատական

---

[208] R.N.46.09.07.2008, R.N.49.07.2008, R.N.52-21.07.2008, R.N.55.-22.07.2008, R.N.61-04-08-08, R.N. 108.25.11.2008, R.N109.01.12.2008.
[209] R.N.32-23.06.2008, R.N.20-13.06.2008, R.N.112-02.12.2008, R.N.17-11.06.2008, R.N.28-20.06.2008, R.N.46-09.07.2008, R.N.52-21.07.2008, R.N.112-02.12.2008, R.N.17-11.06.2008, R.N.28-20.06.2008, R.N.46-09.07.2008, R.N.52-21.07.2008, R.N.61-04.08.08, R.N.80-07.09.2008, R.N.84-20.09.2008, R.N.108-25.11.2008, R.N.109-01.12.2008.
[210] R.N.61-04.08.2008, R.N.108-25.11.2008, R.N.109-01.12.2008, R.N.112-02.12.2008, R.N. 46-09.07.2008, R.N.35-24.05.2008.
[211] R.N.35-24.06 2008.
[212] R.N.35-24.05.2008, R.N.109-01.12.2008.

վարույթում տրված ցուցմունքներն արդեն հրապարակվել են դատարանում,[213] դրանք չունեն էական նշանակություն գործի համար,[214] կամ առաջարկված վկաները չէին կարող անկողմնակալ ցուցմունքներ տալ՝ ամբաստանյալի հետ ունեցած կապերի պատճառով:[215]

Սմբատ Այվազյանի գործը լուսաբանում է վերը նշված մտահոգություններից շատերը:[216]

*Սմբատ Այվազյանի գործը*

Սմբատ Այվազյանը, որն ընդդիմության ներկայացուցիչ է, Պետական գնումների նախկին նախարար և Պետական եկամուտների նախկին նախարար, մեղադրվել և այնուհետև մեղավոր է ճանաչվել Կենտրոն համայնքի ոստիկանության բաժնի բակում ոստիկանի նկատմամբ բռնություն գործադրելու համար, երբ ոստիկանության աշխատակիցները հրամայել են նրան դուրս գալ ավտոմեքենայից և հետևել իրենց՝ դեպի ոստիկանության բաժին: Պրն. Այվազյանի դեմ առաջադրված մեղադրանքների հիմքում ընկած են եղել Կենտրոն համայնքի ոստիկանության բաժնի հինգ աշխատակիցների ցուցմունքները: Այդ ոստիկաններից երեքը ուղեկցել են ամբաստանյալին, իսկ մյուս երկուսը ոստիկանության բաժնի մուտքի մոտ հերթապահություն են իրականացրել:

Դատաքննության ընթացքում ամբաստանյալին հնարավորություն չի ընձեռվել խաչաձև հարցաքննելու երկու ոստիկաններին, ովքեր մուտքի մոտ հերթապահություն էին իրականացրել: Այն երեք ոստիկանները, ովքեր ուղեկցել էին պրն. Այվազյանին, միակ վկաներն են եղել, որոնց նա կարող էր հարցաքննել դատաքննության ընթացքում: Այն օրը, երբ մեղադրանքի կողմը հարցաքննել էր այս վկաներին, պաշտպանները ժամանակ են խնդրել՝ խաչաձև հարցաքննությանը նախապատրաստվելու համար, և դատավորը բավարարել էր այն: Սակայն, երբ քննությունը վերսկսվել է և պաշտպանությանը կողմը պատրաստ էր խաչաձև հարցաքննության՝ վկաները դատական նիստերի դահլիճում չեն գտնվել: Նրանք կրկին չեն ներկայացել դատարան՝ չնայած պաշտպանության կողմի՝ նրանց դատակոչելու վերաբերյալ միջնորդությունների առկայությանը:

Դատաքննության ընթացքում պաշտպանության կողմի ներկայացրած բազմաթիվ միջնորդություններ մերժվել են: Պաշտպանության կողմը միջնորդել է, ի թիվս այլոց, դատակոչել և հարցաքննել երկու անձանց, որոնք ամբաստանյալի հետ միասին տարվել էին ոստիկանության բաժին, հինգ վկաների (որոնց հետ պաշտպանության կողմը հարցազրույց էր ունեցել մինչև դատաքննությունը), որոնք քննության առարկա ժամանակահատվածում գտնվել էին ոստիկանության բաժնի դիմացի բակում, մեկ այլ կալանավորված անձի, որն ամբաստանյալի հետ միաժամանակ բերվել էր ոստիկանության նույն բաժին, և մի լրագրողի, որը քննության առարկա ժամանակահատվածում գտնվել էր ոստիկանության բաժնի

[213] R.N 109-01.12.2008.
[214] R.N.-61-04.08.2008.
[215] R.N.61-04.08.2008, R.N.112-02.12.2008.
[216] R.N.112-02.12.2008.

դիմացի բակում և այս դեպքի կապակցությամբ հոդված էր հրապարակել: Այս միջնորդությունները մերժելիս, դատավորը հաճախ նշել է, որ »գործի նյութերում նշված անձանց վերաբերյալ տեղեկություններ չկան«:

Չնայած հարցաքննված ոստիկանների կողմից դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներում առկա հակասություններին՝ դատարանն ընդունել է ոստիկան վկաների ցուցմունքները: Մասնավորապես, հինգ ոստիկաններից չորսն իրենց ցուցմունքներում նշել էին, որ ամբաստանյալը վատ խոսքեր չէր օգտագործել:

Առաջին ատյանի դատարանն իր՝ 2008թ. նոյեմբերի 19-ի դատավճռում հետևյալ կերպ է պատճառաբանել պաշտպանության կողմի ներկայացրած գրավոր ապացույցը մերժելու մասին իր որոշումը. »դատարանը գտել է, որ պաշտպանության կողմի ներկայացրած փաստարկները, փաստերը և նյութերը անհիմն են: Դրանք [փաստերը, փաստարկները և նյութերը] չեն բխում գործի փաստական հանգամանքներից, ներկայացվել են ամբաստանյալի հետ սերտ կապեր ունեցող անձանց կողմից և, հետևաբար, որպես այդպիսին չեն կարող անաչառ լինել և նպատակ ունեն պաշտպանելու նրան«:

Պաշտպանության կողմը բողոքարկել են այս դատավճիռը՝ պատճառաբանելով, որ մեղադրանքները բացառապես հիմնված են եղել ոստիկանների ցուցմունքների վրա, ընթացակարգային փաստաթղթերում ձերբակալության ժամը ճշգրիտ գրանցված չի եղել, պաշտպանության կողմի հիմնավորված միջնորդությունները մերժվել են, պաշտպանության համար վճռական նշանակություն ունեցող ապացույցները չեն ընդունվել և ոստիկաններին խաչաձև հարցաքննության ենթարկելու համար հնարավորություն չի տրվել:

Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ մեջբերելով նույն հիմնավորումները: Պաշտպանության կողմի փաստարկների վերաբերյալ Վերաքննիչ դատարանը գրել է, որ դրանք եղել են »քրեական դատավարության իրավունքի ոչ էական խախտումներ և որպես այդպիսին չեն կարող հիմք հանդիսանալ դատավճիռը բեկանելու և գործի վարույթը կարճելու համար«:

### *iv. Գրավոր ցուցմունքները և վկաներին հարցաքննելու իրավունքը*

Մրցակցային քրեական դատավարության ընթացքում բոլոր ապացույցներն, ըստ էության, պետք է ներկայացվեն մեղադրյալի ներկայությամբ և դատարանի առջև: Որպես արդար դատաքննության հավելյալ երաշխիք՝ անմիջականության սկզբունքն ունի հատուկ կարևորություն: Ամբաստանյալը պետք է բավարար ժամանակ և պատշաճ հնարավորություն ունենա իր դեմ ցուցմունք տվող վկաներին հարցաքննելու համար՝ կամ ցուցմունքը տալու ժամանակ, կամ հետագա փուլի ընթացքում:[217] Պետությունը պարտավոր է պոզիտիվ քայլեր ձեռնարկել, որպեսզի

[217] *LՖdi v. Switzerland*, ՄԻԵԴ վճիռ, 15 հուլիսի 1992, Series A no. 238, էջ 21, պարագրաф 49: *Delta v. France*, ՄԻԵԴ վճիռ, 19 դեկտեմբերի 1990թ., պարագրաֆ 36:

մեղադրյալը կարողանա արդյունավետ կերպով իրականացնել այս իրավունքները:[218]

Համաձայն այս չափանիշների՝ ամեն ողջամիտ ջանք պետք է գործադրել դատաքննության ընթացքում վկաների ներկայությունն ապահովելու համար: Դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ մի շարք դատավարությունների ընթացքում այդ սկզբունքը չի պահպանվել: Դատավորները պատրաստակամորեն հիմք էին ընդունում մինչդատական վարույթի ընթացքում վկաների կողմից տրված գրավոր ցուցմունքները՝ հաճախ անտեսելով նման ցուցմունքների օգտագործմանն առնչվող ներպետական օրենսդրության պահանջները:[219] Մի գործով, դատակոչված վկայի ենթադրյալ գործնական ուղևորությունը հարգելի պատճառ է դիտվել՝ մեղադրանքի կողմի վկայի դատարան չներկայանալու համար,[220] մինչդեռ երկու այլ դեպքերում, դատարանն ընդհանրապես չի պարզել վկաների չներկայանալու պատճառները:[221] Բոլոր այս դեպքերում, դատավորները հրապարակել են վկաների գրավոր ցուցմունքները, մինչդեռ պաշտպանության կողմը զրկված է եղել այդ վկաներին հարցաքննելու հնարավորությունից:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանում Բ.-ի գործով նիստի ընթացքում դատավորը կարդացել է անունները չնշված երեք վկաների ցուցմունքներ, որոնք ենթադրաբար ասել էին, որ ճանաչել էին ամբաստանյալի լուսանկարները և նույնացրել նրան այն անձի հետ, ով ապտակել էր ոստիկանին: Այդ վկաների անունները չէին հիշատակվել և նրանք չէին հրավիրվել դատարան:[222]

Երկու ամբաստանյալների մասնակցությամբ մի գործով Երևանի քրեական դատարանը հաստատված է համարել, որ մեղադրանքի կողմից երեք չներկայացած վկաները պատշաճ ծանուցված չեն եղել: Դատարանը պարզապես կարդացել է նրանց՝ մինչդատական վարույթում տրված ցուցմունքները:[223]

## Դ. Եզրահանգումներ

Դիտարկումների արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ դիտարկված բազմաթիվ գործերում կողմերի հավասարության սկզբունքը չի պահպանվել, և մեղադրանքի ու պաշտպանության կողմերը չեն արժանացել հավասար վերաբերմունքի: Լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու/հետազոտելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունների պարբերաբար մերժումը լրջորեն խոչընդոտել է պաշտպանության կողմի՝ գործը ներկայացնելու հնարավորությանը[224]: Որոշ գործերով, դատարանները հիմնվել են ոստիկան

[218] *Sadak et al v. Turkey*, ՄԻԵԴ վճիռ, 17 հուլիս 2001, պարագրաֆ 67:
[219] ՔԴՕ, հոդված 342:
[220] R.N.36-25.06.2008.
[221] R.N.119-08.01.2009, R.N.44-11.07.2008.
[222] R.N.9-19.05.2008.
[223] R.N.87-25.09.2008.
[224] Այս եզրահանգումների վերաբերյալ Գլխավոր դատախազությունը հայտնել է հետևյալ անհամաձայնությունը՝ *»գրեթե բոլոր դատաքննությունների ընթացքում պահպանվել են կողմերի հավասարությունը, մասնավորապես ապացույցներ ներկայացնելու, հետազոտելու, գնահատելու,*

վկաների ցուցմունքների վրա՝ առանց պաշտպանությանն արդյունավետ հնարավորություն տալու մրցակցային պայմաններում ստուգելու այդ ապացույցների ապացուցողական ուժը:

Վերոնշյալ բացթողումները պետք է շտկվեն համապարփակ կերպով: Օգտակար կլիներ, եթե դատավորները լրացուցիչ վերապատրաստում անցնեին կողմերի հավասարության սկզբունքի ապահովման ուղղությամբ՝ գործող օրենսդրությանը համապատասխան: Սակայն քաղաքականություն մշակողները նույնպես պետք է լրջորեն քննարկեն քրեական գործով մինչդատական վարույթի բարեփոխումների հարցը՝ առավել մրցակցային դատաքննություն ապահովելու նպատակով:

Կողմերի հավասարությունը չի կարող ապահովվել, քանի դեռ մեղադրանքի կողմն է նախապատրաստում բոլոր ապացույցները դատական քննության համար: Պաշտպանությանը պետք է թույլատրել հավաքելու ապացույցները: Մասնավորապես, պաշտպանությանը պետք է թույլատրել ներկայացնելու դատակոչի ենթակա վկաների իր սեփական ցուցակը: Պետք է ներմուծել մրցակցության դեպոզիտային ընթացակարգ՝ մինչև դատաքննությունը վկաների կողմից տրված ցուցմունքներն արձանագրելու նպատակով, եթե առկա է վկաների չներկայանալու վտանգը: Ընդհանուր առմամբ, պետք է մանրակրկիտորեն ուսումնասիրել և վերլուծել ԵԱՀԿ մասնակից պետություններում առկա, այսպես կոչված »զուգահեռ քննության« կամ »գործի նյութերի երկու թղթապանակների« (պաշտպանության և մեղադրանքի) փորձը:

---

*ինչպես նաև վկաներին անսահմանափակ ժամաքանակով հարցաքննելու, անգամ պաշտպանության կողմից խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի պահանջները, մեղադրանքի կողմի ներկայացված վկաները հարցաքննվել են ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի սահմաններից դուրս, ինչին արձագանքել է դատախազը«.*

## Գլուխ 5. Ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը և ապօրինաբար ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը

Դիտարկումների ողջ ընթացքում, Ծրագրի անձնակազմի ուշադրությանն են արժանացել ոստիկանության կողմից խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ անհանգստացնող հայտարարությունները: Ընդհանրապես, դատախազները և դատավորները պատշաճ կերպով չեն արձագանքել, երբ նրանց ուշադրությունը հրավիրվել է նմանատիպ հայտարարությունների վրա՝ դրանով իսկ անտեսելով ներպետական և միջազգային չափանիշներով հստակ սահմանված իրենց պարտականությունները: Ներքին դատախազական քննությունները, որոնք ակնհայտորեն իրականացվել են որոշ դեպքերում, չեն հանգեցրել որևէ հանրային փաստաթղթի ընդունման կամ վարույթի իրականացման:

Այս գլուխը նաև ուսումնասիրում է այն պրակտիկան, ըստ որի՝ դատավորները միշտ չէ, որ գնահատում են ապացույցների թույլատրելիության հարցը, ինչը պահանջվում է ներպետական և միջազգային չափանիշներով: Մասնավորապես՝ այդ չափանիշները սահմանում են, որ խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի միջոցով ստացված ապացույցի օգտագործումն անթույլատրելի է: Այդ ապացույցների բացառման վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունները անտեսվել են կամ մերժվել: Որոշ դեպքերում, դատավորները հիմք են ընդունել ամբաստանյալի կողմից մինչդատական վարույթում տրված ցուցմունքները, որոնք հակասում էին դատաքննության ընթացքում նրանց կողմից տրված ցուցմունքներին՝ չնայած ճնշումների և սպառնալիքների վերաբերյալ հայտարարություններին: Նմանապես, դատավորները հիմք են ընդունել վկաների ցուցմունքներ, որոնք ենթադրաբար ստացվել են ճնշումների ներքո:

### Ա. Ներպետական օրենսդրությունը

Իր դեմ ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը երաշխավորված է Հայաստանի Սահմանադրությամբ:[225] Սահմանադրությունը նաև արգելում է ապօրինաբար ձեռք բերված ապացույցների օգտագործումը:[226] ՔԴՕ-ն, ի լրումն ինքնամեղադրման դեմ վերոնշյալ երաշխիքի,[227] ուղղակիորեն նախատեսում է կասկածյալի և մեղադրյալի՝ ցուցմունք տալուց, մեղադրանքի կողմին որևէ նյութ տրամադրելուց կամ մեղադրանքի կողմի հետ այլ կերպ համագործակցելուց հրաժարվելու իրավունքները:[228] Այն նաև պահանջում է, որ տվյալ անձը տեղեկացվի այս իրավունքի մասին:[229] Նմանապես, ՔԴՕ-ի դրույթները, որոնք մասնավորեցնում են կասկածյալի իրավունքները և պարտականությունները, հստակ նշում են պարունակում՝ ցուցմունք և/կամ բացատրություններ տալուց հրաժարվելու իրավունքի վերաբերյալ:[230] Օրենսգրքի՝ ամբաստանյալի հարցաքննության ընթացակարգին վերաբերող դրույթները պահանջում են,

[225] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 22:
[226] *Նույն տեղում:*
[227] ՔԴՕ, հոդված 20:
[228] *Նույն տեղում,* հոդված 19(5):
[229] *Նույն տեղում,* հոդված 19(2):
[230] *Նույն տեղում,* հոդված 65(2):

որպեսզի նախագահող դատավորն ամբաստանյալին տեղեկացնի, որ նա իրավունք ունի հրաժարվելու ցուցմունք տալուց:[231]

ՔԴՕ-ն ուղղակիորեն արգելում է խոշտանգման, հարկադրանքի, խաբեության, կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների ոտնահարման կամ ընթացակարգային խախտումների արդյունքում ստացված ապացույցի օգտագործումը:[232] Խոշտանգումն արգելված է Հայաստանի քրեական օրենքով:[233] Ավելին, հարկադրանքի կամ վատ վերաբերմունքի միջոցով ապացույցներ կորզելը հավանաբար կարող է որակվել որպես իշխանության չարաշահում, ինչը Հայաստանի քրեական օրենսգրքի համաձայն քրեորեն պատժելի արարք է:[234]

Դատարանն ապացույցի թույլատրելիությունն ստուգելու պարտականություն ունի:[235] Ներկայացնող կողմը պարտավոր է ցույց տալ, որ ապացույցը ձեռք է բերվել դրա թույլատրելիության չափանիշներին համապատասխան: Սակայն, ՔԴՕ-ն անորոշ է ապացույցների անթույլատրելիության կանոնների արդյունավետության առումով: Թեև այն սահմանում է, որ միայն ՔԴՕ դրույթների համաձայն ձեռք բերված ապացույցը կարող է օգտագործվել դատարանում, և ակնհայտորեն անթույլատրելի է համարում ուժի, սպառնալիքի, խաբեության, ամբաստանյալի արժանապատվության հանդեպ ոտնձգության և այլ անօրինական միջոցների կիրառմամբ ստացված ապացույցները, որոնք խախտում են կասկածյալի պաշտպանության իրավունքը, ինչպես նաև »էական խախտումները«, այն այնուհետև »էական խախտումները« սահմանափակում է այն խախտումներով, որոնք վտանգում են փաստերի արժանահավատությունը:[236]

## Բ. Միջազգային չափանիշներ

Իր դեմ ցուցմունք չտալու կամ մեղքը չխոստովանելու իրավունքները անմեղության կանխավարկածի սկզբունքի մեջ արմատավորված էական երաշխիքներ են: ՔՔԻՄԴ-ը նախատեսում է, որ »*[ա]նձի դեմ առաջադրված մեղադրանքի հարցը որոշելիս, յուրաքանչյուր ոք, լիակատար հավասարության պայմաններում, ունի հետևյալ նվազագույն երաշխիքների իրավունք: […] (է) Իր դեմ ցուցմունք տալու կամ մեղքը խոստովանելու պարտադրանքից ազատ լինելու իրավունք*«:[237] ԵԱՀԿ-ի՝ 1991թ. Մոսկովյան փաստաթղթի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են ընդունել արդյունավետ միջոցներ՝ »*նախատեսելով, որ իրավապահ մարմիններն անպատեհ կերպով չեն օգտագործում կալանավորված կամ ազատազրկված անձի վիճակը՝ նրան խոստովանելուն կամ ինքն իրեն այլ կերպ մեղսագրելուն կամ ցանկացած այլ անձի դեմ ցուցմունք տալուն հարկադրելու նպատակով*«:[238]

---

[231] *Նույն տեղում*, հոդված 336:
[232] *Նույն տեղում*, հոդված 11(7) և հոդված 105:
[233] ՔՕ, հոդված 119:
[234] *Նույն տեղում*, հոդված 308:
[235] ՔԴՕ, հոդված 106 և հոդված 127:
[236] *Նույն տեղում*, հոդվածներ 104(3), 105(1) և (2):
[237] ՔՔԻՄԴ, հոդված 14(3)(է):
[238] 1991թ. Մոսկովյան փաստաթուղթ, պարագրաֆ 23.1(vii):

Թեն ՄԻԵԿ-ում ուղղակիորեն նախատեսված չէ, սակայն 6-րդ հոդվածում օգտագործված հասկացությունները ենթադրում են անձի լռելու իրավունքը: ՄԻԵԴ-ը գտել է, որ *»[թ]են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ուղղակիորեն սահմանված չէ, կասկածից վեր է, որ ոստիկանության կողմից հարցաքննության ժամանակ լռելու իրավունքը և իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափանիշներ են, որոնք 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության հասկացության բուն էության մասն են կազմում: Մեղադրյալին իշխանությունների անտեղի հարկադրանքից պաշտպանելով՝ այդ երաշխիքները նպաստում են արդարադատության սխալներից խուսափելուն և 6-րդ հոդվածի նպատակներն իրականացնելուն«*:[239]

Ոստիկանության հարցաքննության ընթացքում լռություն պահպանելու իրավունքն՝ իր դեմ ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքի և անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղկացուցիչն է:[240] Դա պետք է հասկանալ այն կերպ, որ անհրաժեշտ է բացառել անձի դատապարտումը, որն ամբողջությամբ կամ գլխավորապես հիմնված է նախաքննության կամ դատաքննության ընթացքում կատարված հարցաքննության ժամանակ ամբաստանյալի պահպանած լռությունից կատարված բացասական հետևությունների վրա: [241]

Ցուցմունք տալու կամ մեղքը խոստովանելու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը ներքուստ կապակցված է խոշտանգման կամ հարկադրանքի արդյունքում ձեռք բերված ցանկացած ապացույցի բացառման պահանջի հետ: Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան (ՄԱԿ ԽԴԿ) նախատեսում է, որ *»ցանկացած վկայություն, որը ստացվել է խոշտանգման արդյունքում, չի կարող որևէ վարույթում վկայակոչվել որպես ապացույց, բացառությամբ այն անձի դեմ, որը մեղադրվում է խոշտանգման համար՝ ապացուցելու համար, որ վկայությունը տրվել է«*:[242]

Համապատասխան միջազգային չափանիշների համաձայն՝ հարկադրանքի ցանկացած ձև, ներառյալ՝ խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքի այլ ձևերը և հարկադրանքը արգելված են: Մասնավորապես, Դատախազների դերի վերաբերյալ Ուղեցույցները դատախազներին արգելում են օգտագործել ապացույցը, եթե այն *»ձեռք է բերվել ապօրինի միջոցների օգտագործմամբ, ինչը համարվում է կասկածյալի իրավունքների կոպիտ խախտում, հատկապես, եթե միջոցները ներառել են խոշտանգում, դաժան կամ անմարդկային վերաբերմունք կամ պատիժ, կամ մարդու իրավունքների այլ ոտնահարումներ«*: [243] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի N20 Ընդհանուր մեկնաբանությունն անթույլատրելի ապացույցի վերաբերյալ ընդունել է համապարփակ մոտեցում, ինչը

---

[239] *John Murray v. United Kingdom*, ՄԻԵԴ վճիռ, 8 փետրվարի 1996թ., պարագրաֆ 45:

[240] Տե՛ս նաև՝ ՔՔԻՄԴ, հոդված 14(3)(է), և գլուխ 3՝ վերևում:

[241] *Նույն տեղում, տե՛ս նաև՝ Funke v. France*, ՄԻԵԴ վճիռ, 25 փետրվարի 1993թ., պարագրաֆ 44:

[242] ՄԱԿ-ի ԽԴԿ, հոդված 15: Տե՛ս նաև՝ *նույն տեղում*, հոդված 13 և հոդված 16(1):

[243] Դատախազների դերի վերաբերյալ Ուղեցույցներ, Ուղեցույց 16, ընդունվել է ՄԱԿ-ի՝ Հանցագործությունների կանխարգելմանն ու հանցագործների նկատմամբ վերաբերմունքին նվիրված ութերորդ համաժողովում, Հավանա, Կուբա, 1990թ. օգոստոսի 27-ից սեպտեմբերի 7-ը:

ներառում է ճնշման միջոցով ձեռք բերված ապացույցը՝ պահանջելով, որ »*օրենքը պետք է արգելի խոշտանգման կամ արգելված այլ վերաբերմունքի միջոցով ձեռք բերված հայտարարությունների կամ խոստովանության օգտագործման թույլատրումը դատական վարույթում*«:[244] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն իր N13 Ընդհանուր մեկնաբանության մեջ ավելացրել է, որ »*օրենքը պետք է պահանջի, որ հարկադրանքի ցանկացած ձևի օգտագործմամբ ձեռք բերված ապացույցն ամբողջությամբ անթույլատրելի է*«:[245] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն նշել է նաև, որ »*ճնշման միջոցով ձեռք բերված խոստովանությունները պետք է պարբերաբար բացառվեն դատական վարույթներից*«:[246]

Ավելին, իշխանությունները պարտավոր են պատշաճ կերպով քննելու քրեական գործով ամբաստանյալի կողմից խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի առնչությամբ հնչեցված ցանկացած հայտարարություն: Այս պարտականությունն արմատավորված է միջազգային իրավունքի մի շարք նորմերում, ներառյալ՝ ՔՔԻՄԴ-ով և ՄԻԵԿ-ով սահմանված՝ մարդու իրավունքների չարաշահումների զոհ դարձած անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու պետության պարտականությունը:[247] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն վերահաստատում է այս տեսակետը՝ ՔՔԻՄԴ-ի համապատասխան դրույթների առնչությամբ:[248] ԵԱՀԿ-ի՝ 1994թ. Բուդապեշտի փաստաթղթում, մասնակից Պետությունները պարտավորվել են »*քննելու խոշտանգման վերաբերյալ բոլոր հայտարարությունները և դատապարտելու մեղավորներին*«:[249]

Քննություն անցկացնելու պարտականությունը հատուկ ուշադրության է արժանացել ՄԻԵԴ-ի կողմից, որը մի շարք գործերով գտել է, որ պետությունները խախտել են 3-րդ հոդվածը (խոշտանգման արգելքը)՝ այն հիմքով, որ նրանք թերացել են անմարդկային վերաբերմունքի առնչությամբ դիմողի հայտարարությունների հիման վրա արդյունավետ պաշտոնական քննություն իրականացնել:[250] Դատարանի նախադեպային իրավունքից հետևում է, որ քննությունը պետք է լինի այնպիսին, որի շնորհիվ հնարավոր կլինի բացահայտել և պատժել

---

[244] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն 20՝ Խոշտանգումները և դաժան վերաբերմունքը կամ պատիժն արգելելու վերաբերյալ (հոդ. 7), CCPR/C/GC/20, 10 մարտի 1992թ., պարագրաֆ 12:

[245] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն 13՝ Դատարանի առջև հավասարության և օրենքով ստեղծված, անկախ դատարանի կողմից արդար և հրապարակային դատաքննության իրավունքի վերաբերյալ (հոդ. 14), CCPR/C/GC/13, 13 ապրիլի 1984թ., պարագրաֆ 14:

[246] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Եզրափակիչ դիտարկումներ. Վրաստան UN Doc: CCPR/C/79/Add.75, 5 մայիսի 1997թ., պարագրաֆ 26:

[247] ՔՔԻՄԴ, հոդված 2(3): ՄԻԵԿ, հոդված 13:

[248] *Casafranca v. Peru*, UN Doc. CCPR/C/78/D/981/2001, 22 հուլիսի 2003թ., պարագրաֆ 7.1, *Zelaya Blanco v. Nicaragua,* U.N. Doc. CCPR/C/51/D/328/1988, 20 հուլիսի 1994թ., պարագրաֆ10.6

[249] 1990թ. Բուդապեշտի փաստաթուղթ, պարագրաֆ 20:

[250] *Assenov et al. v. Bulgaria*, ՄԻԵԴ վճիռ, 28 հոկտեմբերի 1998թ., պարագրաֆներ 102, 106 : *Kuznetsov v. Ukraine,* ՄԻԵԴ վճիռ, 29 ապրիլի 2003թ., պարագրաֆ 105: *Labita v. Italy*, ՄԻԵԴ վճիռ, 6 ապրիլի 2000թ., պարագրաֆ 131:

մեղավորներին:[251] Անմարդկային վերաբերմունքին առնչվող լուրջ հայտարարությունները պետք է ամբողջական քննության ենթարկվեն: Իշխանություններն իրենց իրավասության շրջանակներում պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ քայլերը՝ միջադեպին առնչվող ապացույցները, ներառյալ՝ ի թիվս այլոց, ականատեսների ցուցմունքները և դատաբժշկական փորձաքննության ապացույցներն ապահովելու ուղղությամբ:[252] Այն դեպքերում, երբ անձն արգելանքի վերցվելիս գտնվել է լավ առողջական վիճակում, սակայն ազատ արձակվելու ժամանակ հայտնաբերվում են վնասվածքներ, ապա այդ վնասվածքների առաջացման պատճառների վերաբերյալ հավաստի բացատրություններ տալու պարտականությունը կրում է պետությունը:[253]

## Գ. Հետևություններ և վերլուծություն

### *i. Խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի և ոստիկանության բռնությունների վերաբերյալ հայտարարությունների հիման վրա քննություն չիրականացնելը*

Թեև միջազգային իրավունքը և ներպետական օրենսդրությունը պետական իշխանությունների համար խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունները քննելու խիստ պարտականություն են նախատեսում, դիտարկումների արդյունքում ձեռք բերված տվյալներն ընդգծում են, որ այս պարտականությունը ոչ միշտ է կատարվել: Դիտորդները լսել են ահազանգող հայտարարություններ՝ կապված իրավապահ մարմինների վարքագծի հետ: Նորից և նորից, ամբաստանյալները դատարանին հայտնում էին, որ ոստիկաններն իրենց ծեծել են և ոստիկանությունում գտնվելու ժամանակ ենթարկվել են դաժան և անմարդկային վերաբերմունքի: Նրանք ներկայացնում էին լուսանկարներ, բժշկական տեղեկանքներ և իրենց հայտարարությունների հիմնավորմանն ուղղված այլ ապացույցներ:

| |
|---|
| Ամբաստանյալ Գ.-ն և նրա պաշտպանը դատարանին հայտնեցին, որ ոստիկանները Գ.-ին ձերբակալելիս նրան դաժան ծեծի են ենթարկել, իսկ այնուհետև վերջինս կրկին ծեծի է ենթարկվել Կենտրոնի ոստիկանության բաժանմունքում՝ »Գեբելս« մականունով քննիչի կողմից: Արդյունքում կոտրվել են նրա կողոսկրը, մատը, ինչպես նաև ստացել է գլխի վնասվածքներ: Գ.-ի փաստաբանը նաև նշել է, որ ոստիկաններն օգտագործել են էլեկտրահարող սարք:[254] |

| |
|---|
| Ամբաստանյալ Մ.-ն դատարանին հայտնեց, որ Իջևանի ոստիկանության բաժանմունքում նրան սպառնացել և ծեծել են, ինչպես նաև քննիչը աքցանով |

[251] Տե՛ս *Muradova v. Azerbaijan,* ՄԻԵԴ վճիռ, 2 ապրիլի 2009թ., պարագրաֆ 100, 100.1: *Assenov et al v Bulgaria, Labita v. Italy* հղում՝ 255:
[252] Տե՛ս *Tanrıkulu Tanrikuluv. Turkey,* ՄԻԵԴ վճիռ, 8 հուլիսի 1999թ., պարագրաֆներ 104-106 և *GԾl v. Turkey,* ՄԻԵԴ վճիռ, 14 դեկտեմբերի 2000թ., պարագրաֆ 89:
[253] Տե՛ս *Aksoy v. Turkey,* ՄԻԵԴ վճիռ, 18 դեկտեմբերի 1996թ., պարագրաֆ 61:
[254] R.N.17-11.06.2008.

սեղմել և կոտրել է նրա մատը, որպեսզի ստիպի իրեն ստորագրելու մի հայտարարություն, որն ինքը չէր կարդացել: Նա դատարանին ցույց է տվել որոշ վնասվածքներ:[255]

Ամբաստանյալ Բ.-ն ցուցմունք տվեց այն մասին, որ իրեն ձերբակալել են 2008թ. մարտի 4-ին, երբ նրան խնդրել են գնալ Նորք-Մարաշի ոստիկանության բաժանմունք: Այնտեղ նրան մի քանի օր դաժան ծեծի են ենթարկել տարբեր աշխատակիցներ: Նա նշեց պատասխանատու աշխատակիցների անունները: Նա մանրամասն նկարագրեց ծեծը: Նա նաև նշեց, որ մի օր քննչական խմբի ղեկավարն ասել է. »Տարեք նրան դուրս և կրակեք: Մենք կասենք, որ նա ցանկացել է փախչել և մենք ստիպված ենք եղել կրակել նրա վրա«:[256]

2008թ. հուլիսի 9-ի նիստի ժամանակ պաշտպանը դատարանին տեղեկացրեց, որ ամբաստանյալ Կ.-ն ոտքի վնասվածք է ստացել, երբ մարտի 1-ին բերվել է ոստիկանության բաժանմունք, որտեղ խնդրել է տրամադրել բժշկական օգնություն: Սակայն նա չի ստացել բժշկական օգնություն մինչև մարտի 5-ը: Քննիչը Կ.-ին ասել է, որ նրան կթույլատրեն տեսնել բժշկի, եթե նա ստորագրի իրեն թելադրված վկայությունը:[257]

2008թ. օգոստոսի 6-ի նիստի ժամանակ ամբաստանյալ Դ.-ն նկարագրեց, թե ինչպես էին ինքն ու իր եղբայրը Էջմիածնից վերադառնում Երևան, երբ նրանց մեքենան շրջապատել են ֆուրգոնից դուրս ցատկող զինված մարդիկ: Այդ մարդիկ ստիպողաբար բացել են դուռը, և նա զենքով երկու հարված է ստացել գլխին, այնուհետև իրեն գցել են գետնին: Նա տեսել է մի մարդու, որն ատրճանակն ուղղել էր իր վրա: Նա լսել է երկու կրակոց, որոնցից մեկը վիրավորել է իրեն: Նրան մտցրել են մեքենայի մեջ և տարել ոստիկանության բաժանմունք: Այնտեղ նա տեսել է իր եղբորը՝ գետնի վրա, արնաթաթախ վիճակում: Նրան նույնպես գցել են գետնին, և նրանց երկուսին դաժանաբար ծեծի են ենթարկել մի քանի մարդ: Միայն հաջորդ օրն են նրան տարել հիվանդանոց, որտեղ նրան մերժել են տրամադրել սնունդ և ջուր:[258]

Առնվազն 27 ամբաստանյալներ պնդել են, որ ձերբակալության պահին կամ կալանքի տակ գտնվելու ընթացքում իրավապահ մարմինների կողմից ենթարկվել են անմարդկային վերաբերմունքի: Որոշ դեպքերում, առանձին բողոքներ ներկայացվել են դատախազությանը:[259] Ֆիզիկական բռնությունից և կյանքին ուղղված սպառնալիքներից բացի, հայտարարությունները ներառել են վիրավորանքներ, նվաստացումներ և սնունդ ու բժշկական օգնություն տրամադրելու մերժման դեպքեր, ինչպես նաև այլ ձևերի դաժան, անմարդկային և

[255] R.N.53-21.07.2008.
[256] R.N.83-18.09.2008.
[257] R.N.84-20.09.2008.
[258] R.N.129-16.03.2009.
[259] Օրինակ՝ R.N.83-18.09.2008, R.N.128-26-03-2009, R.N.129-16.03.2009, R.N.27-19.06.2008, R.N.17-11.06.2008.

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:[260] Եղել են նաև դեպքեր, երբ վկաները դատարանում հայտարարել են, որ իրենց նախաքննական ցուցմունքները տվել են ճնշումների և սպառնալիքների ազդեցության տակ (տե՛ս ներքևում):

Որպես կանոն, դատարաններն այս հայտարարություններին չեն արձագանքել: Միայն երկու դեպքերում են դատավորները քրեական գործ հարուցելու խնդրանքով դիմել Գլխավոր դատախազությանը. երկուս էլ կապված է եղել վկաների հետ, ովքեր վկայակոչում էին, որ մինչդատական ցուցմունքները տրվել են ճնշումների ներքո:[261] Որևէ իրավապահ մարմնի պաշտոնատար անձի նկատմամբ մեղադրանք չի առաջադրվել:

### *ii. Անթույլատրելի ապացույցները չբացառելը*

Դատավորները և դատախազները պարտավոր են գնահատելու ապացույցի թույլատրելիությունը:[262] Հայաստանի օրենսդրությունն ուղղակիորեն արգելում է խոշտանգումների, հարկադրանքի կամ խաբեության միջոցով, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների խախտման կամ դատավարական խախտումների արդյունքում ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

Դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ դատախազները և դատավորները չեն իրականացրել քննության ընթացքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը գնահատելու իրենց պարտականությունը: Դատավորները հիմնականում անտեսել կամ մերժել են անթույլատրելի ապացույցները բացառելու վերաբերյալ պաշտպանության կողմի ներկայացրած միջնորդությունները:[263] Այս միջնորդություններից որևէ մեկի արդյունքում դատարանը չի հետազոտել վիճարկվող ապացույցները ձեռք բերելու հանգամանքները: Արդյունքում, դատարանը կայացրել է մի քանի մեղադրական դատավճիռներ, որոնք առնվազն մասամբ հիմնված էին խոշտանգումների, հարկադրանքի կամ խաբեության, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի

[260]Օրինակ՝ R.N.84-20.09.2008, R.N.129.-16.03.2009, R.N.83-18.09.2009, R.N.84-12.09.2009, R.N.138-25.06.2009, R.N.18-12.06.2008, R.N.137-22.06.2009, R.N.7-19.06.2008, R.N.136-22.06.2009.

[261] Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված Դատական դեպարտամենտի և Գլխավոր դատախազության մեկնաբանություններում զետեղված տեղեկությունների համաձայն՝ Գլխավոր դատախազության կողմից հարուցվել է չորս քրեական գործ: Մի դեպքում, երեք քրեական գործ է հարուցվել Կոտայքի մարզի դատարանի դատավորի՝ 2009 թվականի մայիսի 7-ի դիմումի հիման վրա: Այս գործերը վերաբերվել են նույն դատավարությամբ անցնող երեք տարբեր վկաների, ովքեր վկայակոչում էին, որ իրենց նախաքննական ցուցմունքները տվել են ճնշումների տակ: Մյուս դեպքում, քրեական գործը հարուցվել է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի՝ 2009 թ. մայիսի 22-ի դիմումի հիման վրա և նույնպես վերաբերվում էր վկային, ով դատարանում ցուցմունք տալիս հայտնել էր, որ իր նախաքննական ցուցմունքները բռնությամբ են կորզվել: Գլխավոր դատախազության կողմից իրականացված քննության արդյունքում պարզվել է, որ այս չորս վկաների կողմից ներկայացված հայտարարություններն անհիմն են, իսկ չորս քրեական գործերի վարույթները կարճվել են: Դատական դեպարտամենտը նույնպես հիշատակել է, որ սույն զեկույցում որպես օրինակ բերված երկու գործերի դեպքում դատարանները տեղյակ են եղել ընթացող քննության մասին, հետևաբար՝ ամբաստանյալների կողմից ներկայացված հայտարարությունների կապակցությամբ որևէ որոշում չեն կայացրել:

[262] Տե՛ս վերևում, բաժին Ա. և Բ.

[263] R.N. 52-21.07.2008, R.N.22-16.06.2008, R.N.113-10.12.2008, R.N.49-18.07.2008.

իրավունքների խախտման կամ դատավարական խախտումների վերաբերյալ հայտարարություններով արատավորված ապացույցների վրա:

| |
|---|
| Պաշտպանը Երևանի քրեական դատարանին միջնորդեց անթույլատրելի ճանաչել ամբաստանյալ Մ.-ին ճանաչման ներկայացնելու վերաբերյալ արձանագրությունը՝ որպես օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույց: Պաշտպանության կողմը ներկայացրեց ապացույց, համաձայն որի՝ ճանաչման ներկայացնելիս Մ.-ն միակ անձն է եղել, որն արյունահոսում էր և դեմքի վրա ծեծի տեսանելի նշաններ ուներ: Ըստ Մ.-ի՝ նա լսել է, թե ինչպես է քննիչը վերևլակից դուրս գալիս տուժողին և վկաներին մատնացույց է արել դեպի իր կողմը՝ ասելով »Նա է«: Դատավորը մերժեց միջնորդությունն՝ ասելով՝ »դատաբժշկական փորձաքննության վերաբերյալ տեղեկանքը ամեն ինչ բացատրում է«:[264] |

| |
|---|
| Պաշտպանության կողմը միջնորդեց Երևանի քրեական դատարանին անթույլատրելի ճանաչել վկա Գ.-ի նախաքննական ցուցմունքները, քանի որ դրանք ձեռք էին բերվել օրենքի խախտմամբ: Մասնավորապես, նա նշեց, որ Ազգային անվտանգության ծառայության բաժանմունքում Գ.-ի հարցաքննությունը տևել է մոտ յոթ ժամ,[265] այնուհետև վերջինս տեղափոխվել է Հատուկ քննչական բաժանմունք: Հարցաքննության արձանագրությունը կազմվել է Հատուկ քննչական բաժնի քննիչի կողմից, որը չէր իրականացրել հարցաքննությունը: Դատավորը մերժել է միջնորդությունը՝ պարզապես ասելով՝ »ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար բավարար ապացույցներ չկան«, իսկ դատավճռում հիմնվել է Գ.-ի գրավոր նախաքննական ցուցմունքների վրա:[266] |

Դիտարկված դատաքննություններում դատավորները հաճախ ավելի հակված էին հիմք ընդունելու ամբաստանյալների և վկաների նախաքննական ցուցմունքները, քան հետազոտելու նրանց՝ դատարանում տրված բանավոր ցուցմունքները, հատկապես եթե դրանք հակասում էին միմյանց (տե՛ս նաև՝ գլուխ 5):[267] Ավելին, նույնիսկ երբ ամբաստանյալներն ու վկաներն այդ հակասությունները բացատրում էին քննության ժամանակ իրականացված ճնշումներով և ահաբեկումներով, դատավորներն այնուամենայնիվ անտեսում էին նման հայտարարությունները և հիմք ընդունում այդ գրավոր ցուցմունքները:[268]

Նման պրակտիկան կարևոր հարցեր է բարձրացնում Հայաստանում կողմերի հավասարության և մրցակցային դատաքննության սկզբունքների պահպանման առնչությամբ:

Քննչական մարմինների կողմից ստացված գրավոր ցուցմունքների լայն կիրառությունը դատարանում ամբաստանյալների՝ իրենց նախաքննական ցուցմունքները ճնշման, ահաբեկման կամ խոշտանգման արդյունքում ձեռք բերված

[264] R.N.83-18.09.2008.
[265] ՔԴՕ 205[1]–րդ հոդվածը նախատեսում է, որ վկայի հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից ավելի:
[266] R.N.22-16.06.2008.
[267] R.N.49-18.07.2008, R.N.52-21.07.2008.
[268] R.N.48-17.07.2008.

լինելու վերաբերյալ հայտարարությունների անտեսմամբ՝ ընդգծում են դատարանների քննչական հակվածությունը՝ նախաքննության ընթացքում գրավոր ձևով պաշտոնական դարձված ցանկացած ապացույցի լրացուցիչ արժեք վերագրելիս: Այս մոտեցումը կարող է իրավապահ մարմինների մոտ տարբեր անբարենիշխիղճ եղանակներով, ներառյալ՝ խոշտանգման կիրառմամբ, նման ապացույցներ ստեղծելու խթան առաջացնել՝ դրանով իսկ վտանգելով կասկածյալի և վկաների հիմնարար ազատությունները, որն ի վերջո կարող է հանգեցնել դատական իշխանության նկատմամբ հանրության վստահության նվազեցմանը:

### *iii. Վկաներին ճնշելը, ահաբեկելը և այլ միջամտությունները*

Դիտորդներն արձանագրել են դեպքեր, երբ վկաները դատարանի տեղեկացրել են, որ իրենց նախաքննական ցուցմունքները կամավոր չեն տվել՝ նշելով ճնշման, ահաբեկման և ազատությունից զրկելու դեպքերի մասին:[269] Ինչպես նշվել էր նախապես, դատավորները, որպես կանոն, չեն արձագանքել նման հայտարարություններին և դրանց արժանահավատությունը ստուգելու նպատակով հետագա քննություն չեն նախաձեռնել:[270]

| |
|---|
| Երևանի քրեական դատարանի կողմից քննված մի գործով մի քանի վկաներ դատարանին հայտնեցին, որ նրանց երեք օրով զրկել են ազատությունից և մերժել սնունդ և ջուր տրամադրելը, այնուհետև, ստիպել են գրել քննիչների կողմից թելադրված ցուցմունքները: Դատավորը հարցրեց. »Այդքան հե՞շտ է ձեզ համոզելը, որպեսզի սուտ ցուցմունք տաք: Մի քանի չբացահայտված գործեր կան, այդ գործերով էլ ցուցմունք կտա՞ք«: Դատավորի դատավճիռը հիմնված էր այդ վկաների ցուցմունքների վրա, առանց հարկադրանքի խնդրին առնչվող հայտարարությունների հիշատակման և թույլատրելիության հարցի քննարկման:[271] |

| |
|---|
| 2009թ. մայիսի 18-ի նիստի ընթացքում վկան հրաժարվեց իր նախաքննական ցուցմունքներից: Նա բացատրեց, որ իր հարցաքննությունը տևել է մոտ վեց ժամ և քննիչը բազմաթիվ անգամ կրկնել է նույն հարցը: Վկան իրեն ուժասպառ է զգացել և առանց կարդալու ստորագրել է քննիչի կողմից կազմված արձանագրությունը: Նույն գործով մեկ այլ վկա ցուցմունք տվեց այն մասին, որ նախքան ստորագրելը |

[269] R.N.48-17.07.2008, R.N.137-22.06.2009, R.N.136-22.06.2009.

[270] Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ իրենց մեկնաբանություններում, Դատական դեպարտամենտը և Գլխավոր դատախազությունը հղում են կատարել 260-րդ հղումում մատնանշված չորս գործերին: Դատական դեպարտամենտը նաև հայտնել է, որ այդ հայտարարությունները »*հանգամանորեն քննարկվել են ինչպես դատական քննության ընթացքում՝ պաշտպանների մասնակցությամբ, այնպես էլ վերլուծվել և համապատասխան գնահատականի են արժանացել դատական ակտերով: Բավարար հիմքերի դեպքում, համապատասխան նյութերն ուղարկվել են դատախազություն: Եղել են նաև բազմաթիվ դեպքեր, երբ այդպիսի հայտարարությունների քննարկման արդյունքում, վկաների նկատմամբ հետագա ճնշումները բացառելու նպատակով, դատարանների կողմից ձեռնարկվել են անձերի և նրանց ընտանիքների պաշտպանության միջոցներ*«:

[271] R.N.18-12.06.2008.

նա չէր կարդացել իր նախաքննական ցուցմունքները, քանի որ նրան անընդմեջ հարցաքննել էին տասնմեկ ժամ և զրկել սննդից ու ջրից:[272]

## Դ. Եզրահանգումներ

Ոստիկանության կողմից կիրառված բռնությունների, իրավապահ մարմինների կողմից անմարդկային վերաբերմունքի և նույնիսկ խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններ ներկայացվել են մի շարք դիտարկված գործերով: Այդ հայտարարությունները պատշաճ քննության չեն ենթարկվել. թե դատախազները, և թե դատավորները լռություն են պահպանել այնպիսի իրավիճակներում, երբ ներպետական օրենսդրությունն ու միջազգային չափանիշները պարտավորեցնում են նրանց արձագանքելու: Դատարանները մեղադրական դատավճիռներ կայացնելիս հաճախ հիմք են ընդունել այնպիսի ապացույցներ, որոնք արատավորված են եղել նման հայտարարություններով[273]:

Նման իրավիճակը պահանջում է լուրջ և արդյունավետ միջոցառումների իրականացման անհրաժեշտությամբ: Առաջին հերթին դրանք պետք է ուղղված լինեն ոստիկանների և քննիչների կողմից լիազորությունների չարաշահումների դեպքերի բացառմանը, որոնք պետք է պատասխանատվության ենթարկվեն կասկածյալների և վկաների նկատմամբ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցուցաբերման

[272] R.N.136-22.06.2009. Սույն զեկույցի վերաբերյալ իր մեկնաբանություններում Դատական դեպարտամենտը պարզաբանել է, որ դատարանը հարցաքննել է վկաներին սույն ցուցմունքների առնչությամբ և գտել է, որ այդ ցուցմունքները արժանահավատ չէին:

[273] Այս եզրահանգումների վերաբերյալ Դատական դեպարտամենտը ներկայացրել է հետևյալ մեկնաբանությունը. *»Բերված սակավաթիվ օրինակների հիման վրա ճիշտ չենք համարում այն ընդհանրական եզրահանգումը, որ ապացույցների թույլատրելիության հարցը դատարաններում պատշաճ քննության առարկա չի դարձվել: Այն, որ ապացույցների թույլատրելիության հարցը դատարաններում քննարկման առարկա է հանդիսանում, հաստատվում է, օրինակ, Հակոբ Հակոբյանի, Գաբրիել Գաբրիելյանի, Լավրենտ Գասպարյանի վերաբերյալ կայացված դատավճիռներով: Այս գործերով մեղադրանքի հիմքում դրված որոշ ապացույցներ դատարանի կողմից ճանաչվել են անթույլատրելի: Ավելին, Արմեն Սարգսյանի վերաբերյալ գործով Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 16-ի դատավճռով ճանաչման ներկայացնելու մասին 2008 թվականի մարտի 6-ի երկու արձանագրությունները ճանաչվել են որպես անթույլատրելի ապացույցներ: Քրեական դատարանը, Ա.Սարգսյանին երկու վկաների ճանաչմանը ներկայացնելու արձանագրությունները ճանաչելով որպես անթույլատրելի ապացույց և հանելով ապացուցողական զանգվածից, ամբաստանյալի մեղավորությունը ապացուցված է համարել ճանաչման ներկայացնելուց հետո նույն վկաների տրված ցուցմունքներով: Վճռաբեկ դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ բեկանել է այս որոշումը, Ա.Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ: Նշված գործով, Վճռաբեկ դատարանը, կիրառելով »թունավոր ծառի պտուղների« սկզբունքը, այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ մեղադրյալ Ա.Սարգսյանին վկաների ճանաչմանը ներկայացնելու երկու արձանագրությունները անթույլատրելի ապացույց ճանաչելու պարագայում այդ նույն վակների տրված ցուցմունքները չէին կարող որպես ապացույց օգտագործվել և դրվել Ա.Սարգսյանի մեղադրանքի հիմքում: Այդ ապացույցները թույլատրելի չեն, քանի որ դրանց բովանդակությունն ամբողջովին հիմնված է եղել անթույլատրելի ճանաչված քննչական գործողության տվյալների վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին«:*

յուրաքանչյուր դեպքի համար: Ինչպես արդեն 1998թ. [274] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն առաջարկել է Հայաստանին, նմանատիպ բոլոր միջադեպերի առնչությամբ անհրաժեշտ է ստեղծել անկախ քննություն իրականացնող հատուկ քննչական մարմին: Նման միջադեպերի հանդիպելիս դատավորները պետք է այդ մասին նշված մարմնին հայտնելու հստակ պարտականություն ունենան:

Քրեական դատավարության վերաբերյալ օրենսդրությունը նույնպես պետք է փոփոխությունների ենթարկվի՝ անօրինական միջոցներով ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Փոփոխություններն իրականություն կդառնան այն ժամանակ, երբ դատարաններն սկսեն կտրականապես մերժել դատախազությանը հիմք ընդունելու »***թունավոր ծառի պտուղները***«: Մասնավորապես՝ եթե նիստի ժամանակ ամբաստանյալները հրաժարվել են իրենց գրավոր ցուցմունքներից, ապա այդ ցուցմունքները պետք է հանվեն ապացույցների շարքից, իսկ մեղադրանքի կողմը չպետք է հիմնվի դրանց վրա:

---

[274] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն արտահայտել է *»մտահոգություն՝ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ցուցաբերման կապակցությամբ«* և առաջարկել է *»հատուկ անկախ մարմին հիմնադրել՝ իրավապահ մարմինների անձնակազմի կողմից թույլ տրված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի առնչությամբ բերված բողոքներն ուսումնասիրելու նպատակով«:* Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները. Հայաստան, CCPR/C/79/Add.100., 19 նոյեմբերի 1998թ.:

# Գլուխ 6. Անձամբ կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը

Այս գլխում քննարկվում են պաշտպանության իրավունքի, մասնավորապես՝ պաշտպանության իրականացման համար բավարար հնարավորությունների ապահովման և իրավական ներկայացուցչության արդյունավետության առնչությամբ իրականացված դիտարկումների արդյունքում ձեռք բերված տվյալները: Որոշ դեպքերում պաշտպանները գործնականում զրկվել են պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից: Որոշ պաշտպաններ, ի նշան բողոքի՝ լքել են դատական նիստերի դահլիճը: Արձանագրվել են նաև որոշ մտահոգություններ՝ կապված հանրային պաշտպանների կողմից մատուցված ծառայությունների որակի և արդյունավետության հետ:

## Ա. Ներպետական օրենսդրություն

Հայաստանի Սահմանադրությունը նախատեսում է յուրաքանչյուր անձի՝ իրավական օգնություն ստանալու իրավունքը, ինչպես նաև »*ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու*« իրավունքը:[275] ՔԴՕ-ն մասնավորեցնում է այս իրավունքը՝ սահմանելով կասկածյալի կամ մեղադրյալի՝ անձամբ, պաշտպանի և/կամ իրավական ներկայացուցչի միջոցով մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը, ինչպես նաև սրանից բխող՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը կասկածյալին/մեղադրյալին բացատրելու նրանց իրավունքները, ապահովելու դրանցից օգտվելու հնարավորությունը, ինչպես նաև ապահովելու կասկածյալի/մեղադրյալի պաշտպանի մասնակցությունը գործի քննությանը:[276]

ՔԴՕ-ն ձերբակալման կամ մեղադրանքի ներկայացման պահից ապահովում է յուրաքանչյուր կասկածյալի և մեղադրյալի անարգել պաշտպան ունենալու իրավունքը, այդ թվում՝ պաշտպանի հետ անարգել շփվելու իրավունքը: [277] Պաշտպանի մասնակցությունը չի կարող արգելվել, եթե մեղադրյալը/կասկածյալը պաշտպանի աջակցությունը ստանալու ցանկություն է հայտնել, իսկ որոշ դեպքերում այս իրավունքից հրաժարվելն արգելվում է:[278]

Ամբաստանյալն ազատ է պաշտպան ընտրելու հարցում: Եթե նա չունի պաշտպան կամ իրավաբանին վարձատրելու միջոցներ, սակայն ցանկանում է իր պաշտպանությունն իրականացնել պաշտպանի միջոցով, կամ չի կարող հրաժարվել պաշտպանվելու այդ իրավունքից, ապա պաշտպանը պետք է նշանակվի Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի կազմում գործող Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից:[279] Վարույթն իրականացնող

[275] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 20:
[276] ՔԴՕ, հոդվածներ 10 և 19:
[277] *Նույն տեղում*, հոդվածներ 63 և 65:
[278] *Նույն տեղում*, հոդված 69 (1), տե՛ս նաև՝ ՀՀ Սահմանադրություն, հոդված 20:
[279] *Նույն տեղում*, հոդված 70(1):

մարմնին ուղղակիորեն արգելվում է պաշտպան առաջարկել:[280] Ամբաստանյալն իրավունք ունի հրավիրել մեկից ավելի պաշտպանների:[281] Անապահով ամբաստանյալներին, ինչպես նաև այն ամբաստանյալներին, որոնք պաշտպան ունենալու ցանկություն չունեն, սակայն չեն կարող հրաժարվել իրենց այդ իրավունքից՝ տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն:[282]

Եթե ընտրված կամ նշանակված պաշտպանը սահմանված ժամկետներում չի մատուցում իր ծառայությունները, ապա նա պետք է փոխարինվի:[283] Փոխարինումը կարող է իրականացվել միայն ամբաստանյալի համաձայնությամբ: Պաշտպանին փոխարինելու անհնարինության դեպքում գործի քննությունը պետք է կասեցվի մինչև նոր իրավաբան գտնելը: Նոր ներգրավված պաշտպանին գործի նյութերին ծանոթանալու նպատակով բավարար ժամանակ պետք է տրամադրվի:[284]

Համապատասխան օրենսդրությունը երրորդ անձանց ուղղակիորեն արգելում է միջամտել փաստաբանական գործունեությանը, ինչպես նաև նախատեսում է, որ փաստաբանը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել դատարանում, հետաքննության կամ նախաքննության մարմիններում իր հայտնած դիրքորոշման համար:[285]

### Բ. Միջազգային չափանիշներ

ՄԻՀՀ-ն,[286] ՔՔԻՄԴ-ն[287] և ՄԻԵԿ-ն[288] նախատեսում են հանցագործության մեջ մեղադրվող անձի՝ ինքնուրույն կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը: Այս իրավունքը հստակ արտացոլված է ԵԱՀԿ անդամ երկրների ստանձնած պարտավորություններում:[289] ՄԱԿ-ի՝ »Իրավաբանների դերի մասին հիմնարար սկզբունքներ«-ը նույնպես հաստատում են պաշտպանի աջակցությունը ստանալու բոլոր անձանց իրավունքը, և բոլոր անդամ պետություններին կոչ են անում արդյունավետ և ոչ խտրական ընթացակարգեր և մեխանիզմներ ստեղծել՝ *»արդյունավետ և հավասար պայմաններով իրավաբանական ծառայություններից օգտվելու«,* ինչպես նաև *»անապահով անձանց իրավական ծառայություններ տրամադրելու նպատակով բավարար ֆինանսական և այլ միջոցների տրամադրումն«* ապահովելու նպատակով:[290] Ամբաստանյալն իրավունք ունի իր պաշտպանությունն իրականացնել իր կողմից ընտրված պաշտպանի միջոցով:[291]

---

[280] *Նույն տեղում,* հոդված 70(2):
[281] *Նույն տեղում,* հոդված 70(6):
[282] *Նույն տեղում,* հոդված 10(5) և »Փաստաբանության մասին« ՀՀ օրենքի 6-րդ հոդված, տե՛ս նաև՝ ՀՀ Սահմանադրություն, հոդված 20:
[283] ՔԴՕ, հոդված 70(5):
[284] *Նույն տեղում,* հոդված 304:
[285] »Փաստաբանության մասին« ՀՀ օրենքի 21-րդ հոդված:
[286] ՄԻՀՀ, հոդված 11(1):
[287] ՔՔԻՄԴ, հոդված 14(3)(բ):
[288] ՄԻԵԿ, հոդված 6(3)(գ):
[289] Տե՛ս օրինակ՝ ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենի փաստաթուղթը, պարագրաֆ 5.17:
[290] ՄԱԿ-ի՝ Իրավաբանների դերի մասին հիմնարար սկզբունքներ (1990), Սկզբունքներ 1-4, Իրավաբանի և իրավական ծառայություններից օգտվելու մատչելիությունը:
[291] ՔՔԻՄԴ, հոդված 14(3)(բ), ՄԻԵԿ, հոդված 6(3)(գ):

Միջազգային իրավունքով նախատեսված արդարության գաղափարը պահանջում է, որպեսզի ոստիկանության կողմից հարցաքննության իրականացման հենց սկզբնական փուլից մեղադրյալն արդեն ստանա պաշտպանի աջակցությունը: Անկախ պատճառաբանությունից՝ ոստիկանության կողմից հարցաքննության իրականացման առաջին 48 ժամերի ընթացքում պաշտպանի ծառայությունից օգտվելուն խոչընդոտելը (մի իրավիճակը, երբ պաշտպանության կողմի իրավունքները կարող են անդարձելիորեն խափանվել) անհամատեղելի է ՄԻԵԿ-ի 6(1) և 6(3)(գ) հոդվածներով նախատեսված մեղադրյալի իրավունքների հետ:[292]

Պաշտպանության իրավունքը խախտված է համարվում, եթե ձերբակալված անձին չի թույլատրվում հաղորդակցվել իրավաբանի հետ: Համաձայն ՄԻԵԴ-ի՝ *Golder*-ի գործով կայացված հայտնի վճռի՝ *»[ի]րավունքի արդյունավետ իրականացմանը խոչընդոտելը կարող է հանգեցնել այդ իրավունքի խախտմանը, նույնիսկ եթե խոչընդոտները կրել են ժամանակավոր բնույթ«:*[293] Հետևաբար, այն պահից սկսած, երբ ձերբակալված անձը ցանկություն է հայտնում իր պաշտպանությունը պաշտպանի օգնությամբ իրականացնելու մասին, այդ հաղորդակցությունը պետք է հնարավոր լինի:

Միջազգային չափանիշները պահանջում են, որպեսզի անապահով ամբաստանյալներն անվճար կամ պետության կողմից ֆինանսավորվող իրավաբանական օգնություն ստանան, երբ դա բխում է արդարադատության շահերից: Այն դեպքերում, երբ առկա է ազատությունից զրկելու հավանականություն, արդարադատության շահերը, սկզբունքորեն, պահանջում են պաշտպանի առկայությունը:[294] ՄԱԿ-ի՝ Իրավաբանների դերի մասին հիմնարար սկզբունքները սահմանում են, որ *»բոլոր այն դեպքերում, երբ այդպես են պահանջում արդարադատության շահերը, պաշտպան չունեցող բոլոր անձինք ունեն իրենց վերագրվող հանցագործության բնույթին համապատասխան փորձով և գիտելիքներով օժտված պաշտպան ունենալու իրավունք՝ արդյունավետ իրավական պաշտպանություն ստանալու նպատակով, առանց ծառայությունների համար վճարելու, եթե նշված անձինք չունեն բավարար միջոցներ«:*[295]

Պետությունը պարտավոր է ամբաստանյալին տրամադրել որակյալ և արդյունավետ իրավաբանական օգնություն: ՄԻԵԴ-ն նշել է, որ *»չնայած նրան, որ պետությունը չի կարող պատասխանատվության կրել իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանի ծառայությունների յուրաքանչյուր թերության համար՝ այնուամենայնիվ, իրավասու ներպետական մարմինները ՄԻԵԿ-ի 6(3)(գ) հոդվածի ուժով պարտավոր են միջամտել, եթե պաշտպանն ակնհայտորեն թերանում է*

[292] Տե՛ս *John Murray v. UK*, ՄԻԵԴ վճիռ, 8 փետրվարի 1996թ., պարագրաֆներ՝ 62-64:
[293] *Golder v. UK*, ՄԻԵԴ վճիռ, 21 փետրվարի 1975թ., պարագրաֆ 26:
[294] *Benham v. United* Kingdom, ՄԻԵԴ վճիռ, 10 հունիսի 1996թ., պարագրաֆ 61: Տե՛ս նաև Quaranta v. Switzerland, ՄԻԵԴ վճիռ, 24 մայիսի 1991թ.:
[295] Իրավաբանների դերի վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներ (1990թ.), Սկզբունք 6:

*արդյունավետ իրավաբանական օգնություն տրամադրել կամ պետական մարմինները բավարար չափով տեղեկացվել են այդ խնդրի մասին«:*[296]

Համապատասխան միջազգային չափանիշների համաձայն՝ պետությունը պարտավոր է բավարար պայմաններ ստեղծել պաշտպանության նախապատրաստման համար: Այդպիսի պայմանները պետք է ներառեն փաստաթղթերին և մեղադրյալի կողմից իր պաշտպանությունը նախապատրաստելու համար պահանջվող այլ ապացույցներին ծանոթանալը, ինչպես նաև պաշտպան պահանջելը և նրա հետ հաղորդակցվելը: Մեղադրյալի հետ հաղորդակցությունը պետք է իրականացվի բացարձակ գաղտնիության պայմաններում: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն հատուկ նշել է, որ »*իրավաբանները պետք է ի վիճակի լինեն սահմանված մասնագիտական չափանիշներին և իրենց ներքին համոզմանը համապատասխան պաշտպանել և ներկայացնել իրենց պաշտպանյալներին՝ առանց որևէ կողմից սահմանափակումների, ազդեցությունների, ճնշումների կամ անհարկի միջամտությունների ենթարկվելու*«:[297]

ՄԱԿ-ի՝ Իրավաբանների դերի մասին հիմնարար սկզբունքները պահանջում են, որ պետություններն »*ապահովեն, որպեսզի իրավաբաններն իրենց բոլոր մասնագիտական գործառույթներն իրականացնեն առանց սպառնալիքների, խոչընդոտների, ահաբեկումների և այլ անհարկի միջամտությունների, ինչպես նաև ընդունված մասնագիտական պարտականություններին, չափանիշներին և էթիկային համապատասխանող որևէ գործողության կատարման համար չենթարկվեն քրեական հետապնդման, վարչական, տնտեսական կամ որևէ այլ պատասխանատվության, ինչպես նաև ազատ լինեն դրա սպառնալիքից*«: [298] Սկզբունքները նաև պահանջում են, որ իրավաբաններն *»օժտված լինեն քաղաքացիական և քրեական անձեռնմխելիությամբ՝ գրավոր կամ բանավոր վարույթների ընթացքում կամ դատարանում մասնագիտական պարտականությունների կատարման կամ այլ իրավական կամ վարչական մարմնում բարեխղճորեն կատարված հայտարարությունների համար«:*[299]

## Գ.Հետևություններ և վերլուծություն

### *i. Իրավաբանական օգնության մատչելիությունը*

Դիտարկված գործերի մեծ մասում ամբաստանյալները ներկայացված էին պաշտպանի միջոցով: Առաջին ատյանի դատարաններում դիտարկված 83 գործերով դիտորդներն արձանագրել են, որ 61 գործերով ամբաստանյալները

[296] Տե՛ս *Kamasinski v. Austria*, ՄԻԵԴ վճիռ, 19 դեկտեմբերի 1989թ., պարագրաֆ 65, ինչպես նաև *Artico v. Italy*, ՄԻԵԴ վճիռ, 13 մայիսի 1980թ., պարագրաֆներ 33-36 և *Daud v. Portugal*, ՄԻԵԴ վճիռ, 21 ապրիլի 1998թ., պարագրաֆ 38:
[297] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի 13-րդ Մեկնաբանություն՝ դատարանի առջև բոլորի հավասարության և անկախ ու օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից արդարացի և հրապարակային դատաքննության մասին (հոդվ. 14), CCPR/C/GC/13:
[298] ՄԱԿ-ի՝ Իրավաբանների դերի մասին հիմնարար սկզբունքներ (1990), Սկզբունք 16:
[299] *Նույն տեղում*, Սկզբունք 20:

ներկայացված են եղել մասնավոր պաշտպանների միջոցով, 18 գործերով՝ հանրային պաշտպանների միջոցով,[300] և չորս գործերով ամբաստանյալները ներկայացվեծ չեն եղել պաշտպանի միջոցով: Վերաքննիչ դատարանում, 41 դիտարկված գործերով բողոքարկող կողմին ներկայացրել են մասնավոր պաշտպանները, 12 գործով՝ հանրային պաշտպանները,[301] իսկ չորս գործերում չի եղել պաշտպան:[302]

Վարույթի մինչդատական փուլում իրավաբանական օգնության մատչելիության հարցը դուրս էր դիտարկման շրջանակներից: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տարբեր կազմակերպություններ գրանցել են մարտի 1-2 դեպքերից հետո ձերբակալված անձանց գործերով պաշտպանի ներգրավման մասին պահանջների մերժման դեպքեր:[303] Որոշ պաշտպաններ Ծրագրի դիտորդներին ոչ պաշտոնապես հայտնել են, որ իրենց ձերբակալված հաճախորդների հետ հաղորդակցվելու հարցում հանդիպել են խոչընդոտների: Այս խնդիրները, սակայն, հազվադեպ էին բարձրացվում դատական քննության ընթացքում:

| |
|---|
| Ամբաստանյալ Լ-ն պնդում էր, որ նա բազմիցս պահանջել է, որպեսզի իրեն պաշտպան տրամադրվի, սակայն կալանավորման երեք ամիսների ընթացքում որևէ պաշտպան չի ունեցել:[304] Ամբաստանյալ Ֆ-ն ցուցմունք է տվել, որ իրեն ծեծի են ենթարկել Հատուկ քննչական ծառայության աշխատակիցները, որոնք փորձել են ստիպել նրան հրաժարվել պաշտպանից և սուտ ցուցմունք տալ:[305] |

### *ii. Պաշտպանություն իրականացնելու բավարար հնարավորություն*

Դիտորդները գրանցել են որոշ դեպքեր, երբ դատարանները պաշտպանին գործնականում զրկել են իրենց մասնագիտական գործառույթներն ու պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից: Դատարանի կողմնակալ մոտեցումների անթույլատրելիության հարցի քննարկումը ներկայացված է 3-րդ և 9-րդ գլուխներում, այդ վարքագծի ազդեցությունը կողմերի հավասարության և դատավարության մրցակցային բնույթի վրա ներկայացվել է 4-րդ գլխում: Այս դեպքերն ակնհայտ մտահոգություններ են առաջացնում՝ պաշտպանի միջոցով պաշտպանություն իրականացնելու իրավունքի արդյունավետ իրականացման կապակցությամբ:

---

[300] Մասնավոր և հանրային պաշտպանները ներկայացրել են մեկ ամբաստանյալի՝ տարբեր նիստերի ընթացքում:
[301] Մասնավոր և հանրային պաշտպանները ներգրավված էին երկու ամբաստանյալի մասնակցությամբ մեկ գործում:
[302] Երկու գործերով տեղեկություն չկա:
[303] Տե՛ս օրինակ՝ »Ժողովրդավարությունը քարքարոտ հիմքի վրա«, պատրաստվել է Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպության կողմից, 25 Փետրվար 2009, հասանելի է http://www.hrw.org/en/node/80935/.
[304] R.N.84-20.09.2008.
[305] R.N.90-26.09.2008.

2008թ. մայիսի 15-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանում տեղի ունեցած նիստի ժամանակ դատավորը հաճախ ընդհատում էր պաշտպանության կողմին, երբ վերջինս հարցեր էր ուղղում մեղադրանքի կողմի 2 ոստիկան վկաներին: Դատավորը թույլ չտվեց պաշտպանության կողմին հարցաքննել վկաներին՝ նրանց մինչդատական և դատական վարույթներում տված ցուցմունքների ակնհայտ հակասությունների վերաբերյալ: Դատավորը նշեց, որ »դատաքննության ընթացքում պետք է քննարկվեն ամբաստանյալի գործողությունները«:[306]

Որոշ պաշտպաններ, ի նշան բողոքի, հեռացել են դատական նիստի դահլիճից: Դիտորդները երեք դատական նիստերի ընթացքում ցուցադրաբար հեռանալու չորս առանձին դեպք են գրանցել:[307] Բացի այդ, պաշտպանները, որպես դատավորների հնարավոր կամայական գործողությունների դեմ բողոքի նշան՝ նաև ընդվզել են նախատեսված դատական նիստերը:[308]

Դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար այս պաշտպաններին պատասխանատվության ենթարկելու հարցի իրավաչափությունը քննարկվում է նաև 9-րդ գլխում: Ակնհայտ է, որ նման վարքագիծը լուրջ հարցեր է բարձրացնում իրավաբանների մասնագիտական պարտականությունների և էթիկայի վերաբերյալ: Այս հարցերը պետք է լուծվեն իրավաբանների անկախության վերաբերյալ միջազգային չափանիշներին համապատասխան:

2008 թվականի օգոստոսի 21-ի դատաքննության ընթացքում պաշտպան Ս-ն. մի քանի միջնորդություն է ներկայացրել՝ հավելյալ ապացույցներ ուսումնասիրելու վերաբերյալ: Ի թիվս այլոց, նա միջնորդել է ուսումնասիրել իր մոտ առկա DVD տեսագրությունը, որը հերքում էր մեղադրանքի կողմի վկաների (ոստիկանության աշխատակիցների) ցուցմունքներն իր պաշտպանյալի դեմ: Նույն տեսագրությունը նախկինում մեկ այլ գործով ընդունվել էր որպես ապացույց և ունեցել էր որոշիչ նշանակություն՝ իր պաշտպանյալի հետ միասին ձերբակալված մի քանի անձանց արդարացման համար: Դատավորն այս միջնորդությունը համարեց ուշացած և թողեց այն առանց քննության: Դատական նիստի ընթացքում փաստաբանը մի քանի անգամ կրկնեց իր միջնորդությունը, սակայն այն չբավարարվեց: Այնուհետև, պաշտպանը միջնորդեց հրավիրել և հարցաքննել լրացուցիչ վկաներ, որոնք չէին կանչվել դատարան: Այս միջնորդությունները նույնպես դատարանի կողմից համարվեցին ուշացած, և դատավորը դրանք թողեց առանց քննության: Դատավորը նախազգուշացրեց պաշտպանին ենթարկվել իր կարգադրություններին և պահպանել կարգուկանոն դատական նիստերի դահլիճում: Պաշտպանը մեղադրեց դատարանին մեղադրական հակվածություն դրսևորելու, իր պաշտպանյալի նկատմամբ քաղաքական հայացքների համար հետապնդումներ իրականացնելու մեջ և ի նշանի բողոքի՝ լքեց դատական նիստերի դահլիճը: Դատավորը կիրառեց դատական սանկցիա՝ կարգապահական

[306] R.N.35-24.06.2008.
[307] R.N.112-02.12.2008, R.N.108-25.11.2008, R.N.141-27.07.2009.
[308] R.N.112-02.12.2008, R.N.108-25.11.2008, R.N.139-10.07.2009.

վարույթ հարուցելու խնդրանքով դիմելով Փաստաբանների պալատ, միաժամանակ, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար Ս.-ի նկատմամբ քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմեց Գլխավոր դատախազությանը:

Փաստաբանների պալատի կարգապահական մարմինը նշել է, որ դատարանը, խախտելով ՔԴՕ-ն, Հայաստանի Սահմանադրությունը, ՄԻԵԿ 6-րդ հոդվածը՝ ապօրինաբար մերժել է պաշտպանի կողմից ներկայացված ապացույցի ուսումնասիրությունը: Վկայակոչելով իրավաբանական մասնագիտությանն ու խոսքի ազատությանը վերաբերող միջազգային և ներպետական չափանիշները՝ Փաստաբանների պալատը գտել է, որ դատական սանկցիան կիրառվել է իր մասնագիտական պարտականությունները բարեխղճորեն իրականացնող պաշտպանի նկատմամբ: Այն գտավ, որ սանկցիայի կիրառումն անհիմն է, իսկ փաստաբանի գործողությունը նկարագրեց որպես »նիստի ժամանակ դատավորի կամայական գործողությունների դեմ բողոքելու՝ պաշտպանի վերջին և բացառիկ միջոց«: Կարգապահական մարմինը որոշեց կարճել կարգապահական վարույթը, ինչպես նաև իր մտահոգությունը հայտնեց Ս.-ի դեմ՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու մեղադրանքով հարուցված քրեական գործի կապակցությամբ:

### *iii. Իրավական ներկայացուցչության արդյունավետություն*

Դիտորդների հարցաշարը պարունակում է հարց՝ պաշտպանության իրականացման ընդհանուր որակի մասին: Ըստ դիտորդների գնահատականի՝ “որակյալ, բանիմաց և արդյունավետ” պաշտպան ունենալու իրավունքն ապահովվել է դիտարկված 140 գործերից 87–ում (62%), մինչդեռ 33 գործով (23,5%) այն չի ապահովվել:[309] Մասնավոր պաշտպանների գործունեությունը դրական է գնահատվել 67 գործով, իսկ բացասական՝ 24 գործով, մինչդեռ հանրային պաշտպանների աշխատանքը համարվել է բավարար 19 գործով և ոչ բավարար՝ ութ գործով:

Այս թվերը ցույց են տալիս, որ կողմնակի դիտարկողները պաշտպանների գործունեությունն ընդհանուր առմամբ բավականին դրական են գնահատել: Արտահայտվել են մտահոգություններ՝ կապված հանրային պաշտպանների տրամադրած ծառայությունների որակի հետ: Նրանց մասնակցությամբ գործերի 37%-ում կատարված աշխատանքը ոչ բավարար է գնահատվել (մասնավոր պաշտպանների դեպքում այս թիվը 24% է): Դիտորդները տեղեկացրել են, որ այս դեպքերում հանրային պաշտպանների վարքագիծն ընդհանուր առմամբ եղել է պասիվ: Թվում էր, թե նրանցից ոմանք լավատեղյակ չէին իրենց պաշտպանյալներին ներկայացված մեղադրանքների և իրենց գործերի փաստերի մասին: Նրանք ոչ միշտ էին միջնորդություններ ներկայացնում ապացույցներ ներկայացնելու, նոր վկաներ հարցաքննելու կամ ընթացակարգային հարցերի շուրջ փաստաթղթեր ներկայացնելու խնդրանքներով: Այս խնդիրները խոսում են

309 Յոթ գործերով դիտորդները դժվարացել են պատասխանել այս հարցին, ութ գործերով պաշտպանը բացակայում էր, իսկ չորս գործերով որևէ տեղեկություն չկա:

Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող ծառայությունների ընդհանուր որակի բարելավման անհրաժեշտության մասին:

Երբ դատավորը խնդրեց հանրային պաշտպանին բացատրել ամբաստանյալին արագացված դատաքննության հետևանքները և այդ նպատակով հինգ րոպե տևողությամբ ընդմիջում հայտարարեց, հանրային պաշտպանը հեռացավ՝ թողնելով ամբաստանյալին դատական նիստի դահլիճում: Երբ դատական նիստը վերսկսվեց, հանրային պաշտպանը դատարանին տեղեկացրեց, որ նա ամեն ինչ բացատրել է ամբաստանյալին, և ամբաստանյալի համար ամեն ինչ պարզ է: Դատական վիճաբանությունների փուլում նրա դիրքորոշումը արտահայտվում էր հետևյալ կերպ. »քանի որ ամբաստանյալն ընդունել է իր մեղքը, համաձայն փաստաբանի էթիկայի կանոնների՝ մնում է պարզապես միանալ մեղադրանքի կողմին և հաստատել ամբաստանյալի մեղքը«:[310]

Ընդմիջման ժամանակ հանրային պաշտպանը զանգ ստացավ և ինչ-որ մեկին ասաց, որ ինքը փորձել էր ազատվել քննվող գործից, սակայն այն, միևնույն է, իրեն էր հանձնարարվել: Պաշտպանը խոստացավ մեկ ժամից ազատվել: Երբ նիստը վերսկսվեց, հանրային պաշտպանը շատ պասիվ էր: Նա որևէ միջնորդություն չներկայացրեց, իսկ դատական վիճաբանությունների ժամանակ իր ճառը վատ էր պատրաստված: Երբ դատավճիռը հրապարակվեց, ամբաստանյալը ակնհայտորեն հիասթափված էր և իր պաշտպանին մեղադրում էր անգործություն ցուցաբերելու մեջ:[311]

## Դ. Եզրահանգումներ

Ինքնուրույն կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը մնում է դատարկ խոստում, եթե դատական քննության ընթացքում պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվում ներկայացնել իր գործը: Այսպիսին էր իրավիճակը դիտարկված որոշ դատաքննությունների պարագայում: Դատական նիստերի դահլիճից պաշպանների հեռանալու դեպքերը ցույց են տալիս լարվածության ամենաբարձր աստիճանը և հաստատում են այդ խնդիրների լրջությունը: Կողմերի հավասարության հետ կապված խնդիրները շտկելուն ուղղված բազմակողմանի լուծումների անհրաժեշտությունն արդեն քննարկվել է 4-րդ գլխում:

Ներկայացուցչության որակի խնդիրը դիտարկված որոշ գործերում առկա խնդիրներից մեկն էր: Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող իրավաբանական օգնության որակը բարելավելու կարիք կա: Անհրաժեշտ է քննարկել հատուկ Իրավաբանական օգնության խորհուրդ ստեղծելու հնարավորությունը: Այս մարմինը պետք է օժտված լինի իրավաբանական օգնության տրամադրման քաղաքականությունը

[310] R.N.33-24.06.2008.
[311] R.N.32-23.06.2008.

հաստատելու և առկա խնդիրներն ու պրակտիկան ուսումնասիրելու իրավասությամբ: Այն կարող է կազմվել Փաստաբանների պալատի, քաղաքացիական հասարակության, գիտական հաստատության, դատական համակարգի, ինչպես նաև Արդարադատության և Ֆինանսների նախարարությունների՝ հավասար քանակով ներգրավված ներկայացուցիչներից:

# Գլուխ 7. Արագացված դատաքննությունները

Արագացված դատաքննություններն օգտակար միջոց են արդարադատության համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար: Սակայն, որպես կանոն, դրանց արդյունքում ամբաստանյալը հրաժարվում է մի շարք կարևոր դատավարական իրավունքներից, հետևաբար՝ այս ընթացակարգը պետք է զուգակցվի այնպիսի երաշխիքներով, որոնք ընդհանուր առմամբ ապահովում են քրեական դատավարության արդարությունը: Սույն գլխում ուսումնասիրված ամենաէական երաշխիքներից մեկն այն է, որ ամբաստանյալն իր գործն արագացված կարգով քննելու վերաբերյալ համաձայնությունն արտահայտի գիտակցված և կամավոր: Դիտարկումների արդյունքում պարզվել է, որ այս երաշխիքը միշտ չէ որ պատշաճ կերպով պահպանվել է և ոչ բոլոր ամբաստանյալներն են լիովին տեղեկացված եղել և գիտակցել են իրենց գործն արագացված կարգով քննելու վերաբերյալ համաձայնություն տալու հետևանքների մասին:

## Ա. Ներպետական օրենսդրություն

Հայաստանի օրենսդրությունը նախատեսում է արագացված դատական քննության հնարավորությունը: Այն դեպքերում, երբ վերագրվող արարքի համար օրենքով նախատեսված պատժի առավելագույն ժամկետը չի գերազանցում տաս տարի ժամկետով ազատազրկումը, ամբաստանյալի խնդրանքի առկայության դեպքում ՔԴՕ-ն թույլատրում է կիրառել արագացված դատաքննություն: Արագացված դատաքննությունը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ ամբաստանյալն ընդունում է իրեն ներկայացված մեղադրանքը: Դատախազը մեղադրական եզրակացության մեջ կարող է առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, սակայն մինչև դատաքննությունն սկսելը կարող է փոխել իր դիրքորոշումը:[312]

Արագացված դատաքննության բնորոշ հատկանիշներից մեկն այն է, որ ապացույցները, որոնք կարող են ներկայացվել դատարանում, սահմանափակ են: Դատարանը, սակայն, պարտավոր է հիմնովին հետազոտելու ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվության աստիճանը, ինչպես նաև պատասխանատվությունը մեղմացնող/ծանրացնող հանգամանքները, որոնք կարող են ազդել պատասխանատվության և պատժի վրա: Արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակվող պատիժը չի կարող գերազանցել հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը:[313] Վերջնական դատավճիռը կարող է բողոքարկվել դատարանում՝ բողոքարկման ընդհանուր կարգի համաձայն, բացառությամբ, որ վերաքննիչ դատարանը չի կարող բեկանել դատավճիռն այն հիմքով, որ դրանում շարադրված փաստական հանգամանքների մասին դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին:[314]

---

312 ՔԴՕ, հոդված 375[1]:
313 *Նույն տեղում*, Article 375[3]:
314 *Նույն տեղում*, հոդված 375[4]:

Դատարանի քննությանն արժանանալու համար դատական քննության արագացված կարգի կիրառման վերաբերյալ ամբաստանյալի միջնորդությունը պետք է բավարարի երեք պահանջներ: Այն պետք է ցույց տա, որ ա/ դիմողը լիովին գիտակցում է միջնորդության բնույթն ու հետևանքները, բ/ դիմողը միջնորդությունը ներկայացրել է ազատ կամքով, գ/ միջնորդությունը ներկայացվել է դիմողի փաստաբանի հետ խորհրդակցելուց հետո: [315] Այն դեպքում, երբ դիմողը փաստաբան չունի, դատարանը պարտավոր է նշանակելու պաշտպանի: Եթե ամբաստանյալը հրաժարվում է պաշտպանից, ապա արագացված դատաքննությունը չի կարող կիրառվել: Երբ գործում առկա են ավելի քան մեկ ամբաստանյալներ, արագացված դատաքննություն կարող է կիրառվել այն դեպքում, եթե բոլորը համաձայն են դրա կիրառմանը:[316]

## Բ. Միջազգային չափանիշներ

Արագացված դատական քննությունների կիրառումը կարող է բարձրացնել արդարադատության իրականացման արդյունավետությունը և երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետներում իրականացնելու պահանջի ապահովումը: Սակայն նման ընթացակարգը պետք է զուգակցվի համապատասխան դատավարական երաշխիքներով՝ ամբաստանյալի իրավունքների հավանական խախտումներից խուսափելու և կանխելու այնպիսի իրավիճակների առաջացումը, երբ արդյունավետությունը ձեռք է բերվում արդարադատության հաշվին:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ No.R(87)18 Առաջարկը միանշանակ կերպով չի պահանջում, որպեսզի »մեղադրանքի ընդունումը« քրեական արդարադատության մասը կազմի, սակայն այն խրախուսում է նման ընթացակարգի կիրառումը, եթե այն համատեղելի է սահմանադրական և իրավական ավանդույթների հետ: Նման ընթացակարգերում, »*ենթադրյալ հանցագործը վարույթի վաղ փուլում պետք է ներկայանա դատարան՝ հրապարակայնորեն դատարանի առջև հայտարարելու համար, թե արդյոք ընդունում, թե հերքում է իրեն ներկայացված մեղադրանքները […]: Նման դեպքերում, դատարանը պետք է կարողանա որոշել, թե արդյոք ամբողջությամբ կամ մասնակի չի իրականացնելու քննության փուլը և միանգամից շարունակի հանցագործի անձի հետազոտումը, պատժի նշանակումը և, երբ դա տեղին է, որոշի փոխհատուցման հարցը*«: [317] Եթե կիրառվում է, ապա մեղքի ընդունումը պետք է զուգակցվի մի շարք էական երաշխիքներով. »*[Այն] պետք է իրականացվի դատարանում՝ դռնբաց դատական նիստում*«, »*[հ]րեն ներկայացված մեղադրանքին ի պատասխան հանցագործի կողմից պետք է հնչի դրական պատասխան*« և »*[ն]ախքան հանցագործի նկատմամբ »մեղքի ընդունման«*

---

[315] *Նույն տեղում*, հոդված $375^{1}$:

[316] *Նույն տեղում*, հոդված $375^{2}$ և $375^{1}$(5):

[317] Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ No.R(87)18 Առաջարկն ուղղված անդամ պետություններին, III (ա)(7) (5):

*ընթացակարգով պատիժ նշանակելուն անցնելը՝ դատավորը պետք է հնարավորություն ունենա լսելու գործի երկու կողմերին«*:[318]

Առաջարկը նաև թույլատրում է օգտվել պարզեցված ընթացակարգերից. դատական կարգադրություններ և նմանատիպ ընթացակարգեր, որոնց դեպքում բաց է թողնվում քննության փուլը և անմիջականորեն կայացվում են որոշումներ, որոնք հավասարազոր են դատապարտմանը: Նման ընթացակարգերը խորհուրդ են տրվում այն հանգանքների դեպքում, որոնք »*գործի հանգամանքների բերումով թեթև են, որտեղ գործի փաստերը լավ հաստատված են թվում և հստակ երևում է, որ մեղադրվող անձն այն անձն է, ով կատարել է հանցագործությունը*«: [319] Այն ընդգծում է անհրաժեշտությունն ապահովելու համար, որ կասկածյալը »*պատշաճ կերպով տեղեկացված է իր համաձայնությունը տալու հետևանքների մասին: Նա պետք է տեղեկացվի դրա մասին հասկանալի և հստակ կերպով, ցանկության դեպքում իրավական խորհրդատվություն ստանալու համար համապատասխան անձին ողջամիտ ժամանակ տրամադրվի*«: [320] Այն ընդգծում է մեղադրյալի համաձայնության անհրաժեշտությունը. »*[ե]թե մեղադրյալն առարկում է դատական կարգադրության դեմ, որը պատճառաբանելու կարիք չկա, ապա այդ փաստն ինքնին առ ոչինչ է դարձնում կարգադրությունը և կանոնավոր ընթացակարգին անցնելու անհրաժեշտություն ստեղծում՝ առանց այն սկզբունքի կիրառման, ըստ որի վերաքննության փուլում անձի վիճակը չի կարող վատթարացվել*«: [321] Առաջարկն ուղղակիորեն մատնանշում է պարզեցված ընթացակարգերի արդյունքում ազատազրկման հետ կապված պատիժների նշանակման անթույլատրելիությունը:[322]

Առաջարկի համաձայն՝ կանոնավոր դատական ընթացակարգերը պետք է ավելի արդյունավետ դարձվեն: Այն, մասնավորապես, նախատեսնում է, որ »*[թ]ե արդյոք նախնական քննությունն արդյունավետ կլինի պետք է որոշի դատական մարմինը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով ոստիկանության կողմից իրականացրած քննությունը, գործի ծանրությունն ու բարդությունը, և այն, թե արդյոք մեղադրյալը վիճարկում է փաստերը: 4. Եթե իրականացվում է նախաքննություն, ապա այն պետք է իրականացվի այնպիսի ընթացակարգով, որը բացառում է բոլոր ոչ անհրաժեշտ ձևականությունները և, հատկապես, խուսափում է վկաներին պաշտոնապես լսելու անհրաժեշտությունից, այն դեպքերում, երբ մեղադրյալը չի վիճարկում փաստերը: 5. Եթե համապատասխան դատական մարմինը չի գտնում, որ նախաքննության իրականացումն օգտակար կլիներ, ապա գործն անմիջապես պետք է բերվի առաջին ատյանի դատարան*«:[323]

Առաջարկը նաև խրախուսում է դատախազներին հայեցողական լիազորություններ տրամադրելը, երբ պատմական և սահմանադրական ավանդույթները թույլատրում

[318] *Նույն տեղում*, III (ա)(8):
[319] *Նույն տեղում*, II (գ)(1):
[320] *Նույն տեղում*, II (գ)(2):
[321] *Նույն տեղում*, II (գ)(5):
[322] *Նույն տեղում*, II (գ)(3):
[323] *Նույն տեղում*, III (ա) (3, 4, 5):

են դա:[324] Մեղադրանք ներկայացնելու հայեցողության սկզբունքի »*կիրառումը պետք է հենվի որոշակի ընդհանուր հիմքի վրա, ինչպիսին է հանրային շահը*«,[325] ինչը նշանակում է, որ »*[մ]եղադրանք ներկայացնելու վերաբերյալ որոշումը […] կայացվում է միայն այն ժամանակ, երբ մեղադրանք հարուցող մարմինը բավարար ապացույցներ ունի մեղքը հիմնավորելու համար*«:[326]

## Գ. Հետևություններ և վերլուծություն

Առաջին ատյանի դատարաններում դիտարկված 82 գործերից 25-ը քննվել են արագացված կարգով: Այս կարգով քննված գործերով մեղավոր ճանաչված 32 ամբաստանյալներից 15-ը պատիժը պայմանական չկիրառելու հիմքով ազատ են արձակվել դատարանից, 13-ը կրել են ազատազրկման հետ կապված պատիժները:

Հայաստանի օրենսդրությամբ սահմանված դատական քննության արագացված կարգը տարբերվում է մրցակցային արդարադատության բազմաթիվ համակարգերում »մեղքի ընդունումից« նրանով, որ մեղադրյալը չի կարող բանակցություններ վարել դատախազության հետ րի պատժի շուրջ: Ավելի շուտ, քրեական իրավունքի շրջանակներում դատավորն իր հայեցողությամբ նշանակում է նվազեցված պատիժը: Հաշվի առնելով արագացված կարգի կիրառության լայն շրջանակները՝ (մինչև տաս տարվա ժամկետով ազատազրկում նախատեսող հանցագործությունները), պատիժ նշանակելիս դատավորի հայեցողությունը զգալի է: Այս հանգամանքն ամբաստանյալների համար զգալի անորոշություն է ստեղծում, որոնց՝ արագացված կարգն ընտրելու հիմնական դրդապատճառն անհապաղ ազատ արձակվելու ակնկալիքն է:

| |
|---|
| Արագացված կարգի կիրառման վերաբերյալ դատարանում արված իր միջնորդությունը Կ.-ն բացատրել է նրանով, որ ինքը հասկացել էր, թե »մեղքն ընդունելու դեպքում իրեն ազատ էին արձակելու«:[327] Մեկ այլ գործով, երբ Մ.-ին հարցրեցին, թե արդյոք նա հաստատում է արագացված կարգ կիրառելու վերաբերյալ իր միջնորդությունը, նա նշեց, որ արդեն բացատրել էր, որ »կցանկանար այս ամենին վերջ տալ, որքան հնարավոր է շուտ«:[328] Ամբաստանյալ Փ.-ն, ում գործը քննվել էր արագացված կարգով, զարմացած և մոլորված էր թվում, երբ դատավորը նրան դատապարտեց ազատազրկման:[329] |

Այս անորոշությունը նաև կասկածանք է հարուցում այն *de facto* բանակցությունների հանդեպ, որոնք տեղի են ունեցել կողմերի միջև: Արագացված կարգով քննված գործերի մեծ մասի դիտարկումներն այնպիսի տպավորություն են

[324] *Նույն տեղում*, I (ա) (1) (»Մեղադրանք ներկայացնելու հայեցողության սկզբունքը պետք է ներկայացվի կամ դրա կիրառումը լայնացվի այն դեպքում, երբ պատմական զարգացումները և անդամ երկրների սահմանադրությունները թույլատրում են, հակառակ դեպքում՝ պետք է ստեղծվեն այլ մեխանիզմներ, որոնք հետապնդում են նույն նպատակը«):
[325] *Նույն տեղում*, I (ա) (4):
[326] *Նույն տեղում*, I (ա) (3):
[327] R.N.16-06.06.2008.
[328] R.N.54-22.07.08.
[329] R.N.33-24.06.2008.

ստեղծել, որ դրանք հիմնված են եղել մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև արագացված կարգ կիրառելու հարցի շուրջ կայացված համաձայնության վրա: Մի քանի գործերով, մեղադրանքի կողմը մեղադրական եզրակացության մեջ առարկել է արագացված կարգ կիրառելու դեմ, բայց հետագայում փոխել է դիրքորոշումը դատարանում: Սակայն, ներկա ընթացակարգը ցանկացած նման բանակցություններ դուրս է թողնում դատարանի տեսադաշտից և ամբաստանյալին խոցելի վիճակում թողնում՝ հավանական հարկադրանքի և խաբեության նկատմամբ:

Թեև օրենքը պահանջում է պաշտպանի մասնակցությունը արագացված կարգով քննվող գործերի քննությանը, այս երաշխիքը չի կարող բավարար լինել ապահովելու համար, որ ամբաստանյալի կողմից լիարժեք դատաքննությունից հրաժարվելը տեղի է ունեցել գիտակցված և կամավոր: Դիտարկված որոշ գործեր ցույց են տալիս, որ ամբաստանյալները տատանվում էին արագացված կարգի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում: Որոշ դեպքերում, օրենքին հակառակ, միջնորդությունը ամբաստանյալի անունից ներկայացրել են նրանց պաշտպանները:[330]

Ամբաստանյալ Փ.-ն, որն ուներ մտավոր հիվանդության բժշկական պատմություն, շփոթված էր երևում և թվում է, թե չէր հետևում դատաքննությանը: Փ.-ն ի վիճակի չէր պատասխանելու, թե երբ է ձերբակալվել և երբ է նրան հանձնվել մեղադրական եզրակացությունը: Երբ դատավորը հարցրեց, թե արդյոք գիտակցում է մեղքն ընդունելու և արագացված կարգ կիրառելու հետևանքները, Փ.-ն պատասխանեց, որ չի կարող վստահաբար ասել: Դատավորը հինգ րոպե տևողությամբ ընդմիջում հայտարարեց և պաշտպանին խնդրեց բացատրել հետևանքներն ամբաստանյալին, թեև պաշտպանը պնդում էր, որ արդեն բացատրել էր: Նիստերի դահլիճից դատավորի դուրս գալուց անմիջապես հետո պաշտպանը դուրս եկավ, Փ.-ն ուղեկցող պահակախմբի հետ մնաց դահլիճում, որոնք խորհուրդ տվեցին նրան միջնորդել արագացված կարգ կիրառելու համար: Երբ նիստը վերսկսվեց, պաշտպանը դատավորին տեղեկացրեց, որ նա բացատրել է հետևանքները և ամբաստանյալի համար ամեն ինչ պարզ էր, այնուհետև շրջվեց դեպի Փ.-ն, որը միայն ասաց՝ »այո«: Դատավորն այլ հարցեր չտվեց և որոշում կայացրեց գործի քննությունը արագացված կարգով շարունակելու վերաբերյալ:[331]

Ամբաստանյալների համար նախատեսված երաշխիքներն կարող են ամրապնդվել, եթե դրանք խստապահանջ կերպով կիրառվեն: Հակառակ դեպքում, դատավորների և դատախազների կողմից իրենց պարտականությունների ոչ արհեստավարժ իրականացումը կարող է անարդյունավետ դարձնել այդ իրավական երաշխիքները:

Մասնավորապես՝ օրենքը պահանջում է, որպեսզի մեղադրողը ներկայացնի մեղադրանքները, իսկ դատավորը պետք է հավաստիանա, որ ամբաստանյալը հասկանում է մեղադրանքը, համաձայն է դրա հետ և գիտակցում է լիարժեք դատական քննությունից հրաժարվելու վերաբերյալ միջնորդության հետևանքները:[332] Մեղադրանքը դատարանում ներկայացնելու վերաբերյալ

[330] R.N.12-29.05.2008, R.N.14-04.06.2008, R.N.6-13.05.2008.
[331] R.N.33-24.06.2008.
[332] ՔԴՕ, հոդված 375[1:]

օրենսդրական պահանջը հանդիսանում է լրացուցիչ երաշխիք, և հավասարապես ծառայում է դատավարության այլ մասնակիցներին և հանրության ներկայացուցիչներին տեղյակ պահելու նպատակին:

Դիտորդներն արձանագրել են, որ մի շարք գործերով մեղադրողները մեղադրանքը չեն ներկայացրել պարզ և հասկանալի կերպով: Նրանք հաճախ կարդացել են մեղադրական եզրակացության միայն եզրափակիչ մասը, որը լի է իրավաբանական տերմիններով: Չեն բացատրվել փաստական հանգամանքները և ամբաստանյալին վերագրվող կոնկրետ արարքը: Դատավորները մասնավորեցնող հարցեր չեն ուղղել՝ հավաստիանալու համար, թե արդյո՞ք ամբաստանյալներն իրականում հասկացել են մեղադրանքները:[333]

Ընդհանուր առմամբ, տպավորությունն այն էր, որ դատավորներն արագացված կարգով քննության նախապայմանների առկայության մեջ հավաստիանալու իրենց պարտականությունը համարում էին լոկ ձևականություն: Դատավորները հաճախ օրենքով սահմանված հարցերը տալիս էին արագ հերթականությամբ. թե արդյո՞ք ամբաստանյալը հասկանում է մեղադրանքը, արդյո՞ք նա համաձայն է մեղադրանքի հետ, արդյո՞ք նա պնդում է արագացված կարգ կիրառելու վերաբերյալ իր միջնորդությունը, արդյո՞ք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, արդյո՞ք մինչև միջնորդությունը ներկայացնելը խորհրդակցել է պաշտպանի հետ և արդյո՞ք գիտակցում է արագացված քննության հետևանքները: Ամբաստանյալի կողմից հնչեցվող պարզապես »այո« պատասխանը համարվում էր բավարար՝ արագացված կարգ կիրառելու որոշում ընդունելու համար: [334] Դատավորները արագացված կարգ կիրառելու վերաբերյալ որևէ միջնորդություն չեն մերժել, ոչ էլ դադարեցրել են որևէ արագացված քննություն՝ այն սկսելուց հետո: Որոշ դեպքերում, դատավորները նույնիսկ չեն հարցրել օրենքով պահանջվող բոլոր հարցերը:[335]

Որոշ գործերով ամբաստանյալների կողմից հնչեցված հայտարարությունները մատնանշում էին այն հանգամանքը, որ նրանք մասամբ կամ ամբողջությամբ չեն ընդունում իրենց ներկայացված մեղադրանքները, ինչը կասկած է հարուցում արագացված կարգի իրավաչափության նկատմամբ և ընդգծում դրա անկատար կիրառման հետ կապված խնդիրները:

Ամբաստանյալ Ա.-ն սկզբում հրաժարվեց ներկայացնել արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդություն, այնուհետև մտափոխվեց և ներկայացրեց միջնորդությունը: Երբ դատախազն ավարտեց մեղադրանքների հրապարակումը, դատավորը հարցրեց, թե արդյո՞ք ամեն ինչ պարզ էր. ի պատասխան՝ ամբաստանյալ Ա.-ն ասաց՝ »այո«: Դատավորն այնուհետև հարցրեց, թե արդյո՞ք Ա.-ն ընդունում է մեղադրանքները: Ա.-ն պատասխանեց »այո«, սակայն ավելացրեց, որ »գրվածն ավելի լուրջ է, քան ես կատարել եմ«: Դատավորն այլ

[333] R.N.16-06.06.2008, R.N.4-09.05.2008, R.N.34-24.6.2008, R.N.59-06.06.2008, R.N.8-15.05.2008.
[334] R.N.5-12.05.2008, R.N.10-23.05.2009, R.N.7-15.05.2008.
[335] R.N.2-21.04.2008, R.N.34-24.06.2008, R.N.4-09.05.2008, R.N.54-22.07.2008.

հարցեր չտվեց և որոշում կայացրեց գործի քննությունն արագացված կարգով շարունակելու վերաբերյալ:[336]

2008թ. մայիսի 5-ի նիստին Հ.-ն ընդունեց ոստիկանին դիմադրելու և նրա նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքները: Նրա պաշտպանը արագացված կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացրեց: Իր վերջին խոսքում, Հ.-ն դատարանին խնդրեց հաշվի առնել այն հանգամանքը, որ վատառողջ սիրտ ունի և ֆիզիկապես չէր կարող կատարած լինել վկայակոչված դիմադրությունն ու բռնությունը:[337]

Երբ դատավորը Ե.-ին հարցրեց մեղադրանքի հետ համաձայն լինելու մասին, նա ասաց, որ մասամբ ընդունում է դրանք: Մասնավորապես, նա ասաց, որ իր տանը հայտնաբերված ռազմամթերքը 15 տարվա է, և որ նա նախկինում դատապարտվել էր Ղարաբաղից ռազմամթերք բերելու համար, հետևաբար՝ սա նույն արարքի համար կրկնակի պատասխանատվություն է: Նա հավելեց, որ չէր ցանկանա քաղաքականացնել իր խոսքը, բայց ակնհայտ էր, որ նա նույն արարքի համար երկրորդ անգամ է ենթարկվում պատասխանատվության, որովհետև նա մասնակցել է ցույցերին: Դատավորը շարունակեց գործի քննությունն արագացված կարգով:[338]

Վերջում, ՔԴՕ-ի՝ ներկայումս կիրառվող դրույթները մեղքի վերաբերյալ ավելի վաղ բանակցությունների համար բավարար հնարավորություն չեն ստեղծում, որը թույլ կտար ժամանակ խնայելու և նախնական քննություն չիրականացնելու համար, դրանով իսկ կրճատելով այն ժամկետը, որը մեղադրյալն անցկացնում է նախնական կալանքի մեջ:

## Դ. Եզրահանգումներ

Անհրաժեշտ է լրացուցիչ քննարկել արագացված ընթացակարգը բարելավելու հարցը: Առկա էին կասկածներ առ այն, թե արդյոք բոլոր ամբաստանյալները պատշաճ տեղեկացված են եղել և լիարժեք գիտակցել են դատական քննության արագացված կարգ ընտրելու հետևանքները: Անհրաժեշտ է առավել հետևողական լինել ամբաստանյալների կողմից իրենց ներկայացված մեղադրանքը գիտակցված և կամավոր ընդունելու ներկայիս երաշխիքները կիրառելու հարցում:

Այն ամբաստանյալները, որոնք դատարանում համաձայնել են իրենց ներկայացված մեղադրանքների հետ և որոնց գործը քննվել է դատական քննության արագացված կարգով, մինչև գործի նախաքննության ավարտը զգալի ժամանակ են անցկացրել կալանավորվածներին պահելու վայրերում: Սա նշանակում է, որ զգալի միջոցներ խնայելու հնարավորություն կստեղծվեր, եթե այս ամբաստանյալները վարույթի ավելի վաղ փուլում հնարավորություն ունենային ընդունելու իրենց ներկայացված մեղադրանքները: Անհրաժեշտ է քննարկել

[336] R.N.68-14.08.2008.
[337] R.N.10-23.05.2008.
[338] R.N.59-06.06.2008.

այնպիսի ընթացակարգ նախատեսելու հարցը, որն իսկապես կկրճատեր քրեական գործի վարույթը և կպաշտպաներ մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքը:

# Գլուխ 8. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը

Դիտարկված որոշ գործեր ընթացել են սուր լարվածության մթնոլորտում: Ժամանակ առ ժամանակ, ամբաստանյալների և նրանց համախոհների վարքագիծը դատական քննության հետագա ընթացքի ապահովումը դարձնում էին չափազանց դժվարին: Այս դատավարությունների ընթացքում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար հաճախակի կիրառվել են սանկցիաներ: Թեև անհրաժեշտ է պահպանել դատական նիստերի դահլիճում կարգը և դատավորների արժանապատվությունը, նման միջոցների ծայրահեղ կիրառումը մտահոգություններ է առաջացնում, որոնք քննարկվում են սույն գլխում: Երբ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նշանակված պատժամիջոցը համաչափ և հետևողական չէ, ինչպես նաև անտեսվում է արդար քննության սկզբունքը, ապա դատավարության մասնակիցների և հանրության ներկայացուցիչների, այդ թվում՝ լրագրողների նկատմամբ դրանց կիրառումը կարող է հանգեցնել դատարանի նկատմամբ հանրության վստահության նվազեցմանը: Այդ պատժամիջոցների կիրառումն ամբաստանյալների և նրանց պաշտպանների նկատմամբ կարող է խոչընդոտել ամբաստանյալի՝ դատական նիստին ներկա գտնվելու և պաշտպանի միջոցով իր իրավունքները պաշտպանելու իրավունքների իրականացմանը:

## Ա. Ներպետական օրենսդրություն

Ըստ Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը հանցագործություն է: Արգելված վարքագիծը ներառում է՝ վկայի, տուժողի կամ պաշտպանի կողմից դատարան չներկայանալը, դատավորի հրամաններին չենթարկվելը, դատական նիստը խանգարելը, ինչպես նաև դատավարության մասնակիցներին կամ դատավորին ուղղված վիրավորանքը:[339]

Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրքը պահանջում է, որ յուրաքանչյուր անձ հարգալից վերաբերմունք դրսևորի դատարանի նկատմամբ, ինչպես նաև լիազորում է սանկցիաներ կիրառել այն գործողությունների համար, որոնք համարվում են դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում: [340] Դատական օրենսգիրքն այս կապակցությամբ նախատեսում է սանկցիաների չորս տեսակ. ա) նախազգուշացում, բ) դատական նիստերի դահլիճից հեռացնել, գ) դատական տուգանք) դ) Գլխավոր դատախազին կամ Փաստաբանների պալատին ուղղված դիմում՝ դատախազին կամ պաշտպանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Սանկցիան պետք է համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու դատարանի բնականոն գործունեությունը: Նախազգուշացումը կամ դատական նիստերի դահլիճից հեռացնելը կիրառվում են դատարանի արձանագրային որոշման միջոցով, որը կայացվում է նույն դատական նիստի ընթացքում: Դատական սանկցիա կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում

[339] ՔՕ, հոդված 343:

[340] Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք, հոդված 6:

անմիջապես: Դատական սանկցիայի կիրառումը կարող է բողոքարկվել: Դատական սանկցիայի կիրառումը չի բացառում արդեն սանկցիայի ենթարկված անձի նկատմամբ պատասխանատվության այլ ձևերի կիրառումը:[341]

Դատական օրենսգիրքը պարունակում էր նրաշխիք՝ ամբաստանյալի բացակայությամբ դատաքննությունն իրականացնելու դեմ՝ սահմանելով, որ դատաքննության ժամանակ ամբաստանյալի՝ դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում դատավարությունը հետաձգվում է:[342] Սակայն, ՔԴՕ-ի վերջերս վերանայված 314[1]-րդ հոդվածը դատավորին իրավունք է տալիս դատաքննությունը շարունակել ամբաստանյալի բացակայությամբ, եթե վերջինս, չնայած նախկինում կատարված զգուշացմանը՝ շարունակում է դատական նիստը խաթարող վարքագիծ դրսևորել: 2009 թվականի փետրվարին, Հայաստանի խորհրդարանը ՔԴՕ-ի փոփոխությունների փաթեթ ընդունեց՝ փոփոխության ենթարկելով ամբաստանյալի բացակայությամբ դատական նիստերի անցկացումն արգելող իրավական դրույթները, որոնք ուժի մեջ մտան 2009 թվականի մարտի 1-ին: Փոփոխությունները վերացրեցին ամբաստանյալի բացակայությամբ դատական քննություն անցկացնելու արգելքը և թույլատրեցին շարունակել դատաքննությունն՝ առանց ամբաստանյալի ներկայության:[343]

314[1]-րդ հոդվածը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեպքերում նախատեսում է դատական սանկցիաների աստիճանակարգ, ինչպես նաև դրանց կիրառման պայմանները, և ի պատասխան դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումներին՝ հոդվածը թույլատրում է կիրառել նախազգուշացում, դատական նիստերի դահլիճից հեռացնել, տուգանք, միջնորդության ներկայացում դատախազին՝ քրեական գործ հարուցելու վերաբերյալ, կամ բողոքի ներկայացում Գլխավոր Դատախազություն կամ Փաստաբանների պալատին: Դատական սանկցիաները կարող են կիրառվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերունք դրսևորելու, դատական նիստերի բնականոն ընթացքը խաթարելու, դատավարական իրավունքները չարաշահելու կամ դատավարական պարտականությունները չկատարելու դեպքերում: Եթե ամբաստանյալը հեռացվում է դահլիճից անհարգալից վերաբերմունքի կամ դատական նիստը խաթարող վարքագծի համար, ապա դատավարությունը շարունակվում է ամբաստանյալի բացակայությամբ՝ պայմանով, որ վերջնական դատավճիռը պետք է հրապարակվի ամբաստանյալի ներկայությամբ:[344]

## Բ. Միջազգային չափանիշներ

Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը սահմանվել է որպես *»ցանկացած գործողություն, որն ուղղված է խոչընդոտելու, խաթարելու կամ դժվարացնելու դատարանի՝ արդարադատություն իրականացնելու գործառույթը,*

[341] *Նույն տեղում,* հոդված 63:
[342] *Նույն տեղում:*
[343] ՔԴՕ հոդված 314[1]:
[344] *Նույն տեղում:*

*կամ ուղղված է նվազեցնելու դատարանի հեղինակությունը կամ արժանապատվությունը*«:[345] Նման վարքագիծը գնահատելու և պատժելու լիազորությունը համարվում է օրենքի գերակայության էական լրացում, ինչպես նաև արդարադատության անխափան իրականացումն ապահովելու նպատակով դատավորներին տրված լիազորություններին ներհատուկ հատկանիշներից մեկը, որով դատավորը համապատասխան քայլերի միջոցով վերահսկում է դատավարությունը:[346] Ինչ վերաբերում է դատական իշխանության հեղինակության պաշտպանությանը, ապա այստեղ վտանգի տակ է այն վստահությունը, որը ժողովրդավարական հասարակություններում դատարանները քրեական դատավարության շրջանակներում պետք է ներշնչեն մեղադրյալին և հասարակությանն ընդհանրապես:[347]

Արդար դատաքննության ընդհանուր կանոնը ենթադրում է, որ ամբաստանյալները իրավունք ունեն ներկա գտնվել իրենց դատաքննությանը:[348] Այնուամենայնիվ, ամբաստանյալի բացակայությամբ դատաքննությունների անցկացումը կամ այսպես կոչված »*in absentia*« դատաքննությունները, կարող են թույլատրելի լինել բացառիկ հանգամանքներում՝ արդարադատության պատշաճ իրականացման շահերից ելնելով: Ամբաստանյալի բացակայությամբ դատավարությունը կարող է տեղի ունենալ, օրինակ, եթե ամբաստանյալը հրաժարվել է արդար դատաքննության իր իրավունքից: Որպեսզի ամբաստանյալի կողմից այս կարևոր իրավունքից հրաժարվելն իրավաչափ լինի, հարկավոր է ցույց տալ, որ դա հաստատվել է կասկած չհարուցող պայմաններում և որ նման հրաժարումից հետո առկա են եղել նվազագույն և համապատասխան երաշխիքներ:[349]

Դատաքննությանը ներկա գտնվելու մեղադրյալի իրավունքը կարող է նաև ժամանակավորապես սահմանափակվել, եթե մեղադրյալը դատաքննության ընթացքին խոչընդոտում է այն աստիճան, որ դատարանն անհրագործելի է համարում դատաքննության շարունակումը նրա ներկայությամբ:[350]

Մարդու իրավունքների միջազգային չափանիշները շեշտում են, որ »*երբ բացառիկ պատճառներով արդարացված է »in absentia« դատաքննության իրականացումը, պաշտպանական կողմի իրավունքների խիստ պահպանումը դառնում է առավել անհրաժեշտ*«:[351] Մեղադրյալի բացակայությամբ անցկացվող դատաքննություններն ուղղորդող չափանիշների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (75) 11 բանաձևը նաև պարունակում է մի շարք հիմնարար երաշխիքներ, որոնք, ի թիվս այլոց, սահմանում են, որ »*ապացույցները*

---

[345] Black's Law Dictionary [Բլեքի իրավաբանական բառարան], էջ 319 (6-րդ հրատ.1990):
[346] *Ravnsborg v. Sweden*, ՄԻԵԴ վճիռ, 23 մարտի 1994թ., պարագրաֆ 34:
[347] *Fey v. Austria*, ՄԻԵԴ վճիռ, 24 փետրվարի 1993թ., պարագրաֆ 30:
[348] ՔՔԻՄԴ, հոդված 14(3)(դ) և ՄԻԵԿ, հոդված 6(1):
[349] *Poitrimol v. France*, ՄԻԵԴ վճիռ, 23 նոյեմբերի 1993թ., պարագրաֆ 31, *Zana v. Turkey*, ՄԻԵԴ վճիռ, 25 նոյեմբերի 1997թ., պարագրաֆ 70:
[350] Տե՛ս *Արդար դատաքննության ձեռնարկ*, Ամնեսթի ինթերնեյշնլ, 1998, Գլուխ 21.1:
[351] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի N 13 Ընդհանուր մեկնաբանությունը՝ դատարանի առջև հավասարության և օրենքի հիման վրա ստեղծված, անկախ դատարանի կողմից արդար և հրապարակային դատաքննության իրավունքի վերաբերյալ (Հոդվ. 14), CCPR/C/GC/13, 13 ապրիլի 1984թ., պարագրաֆ 11:

*պետք է ընդունվեն սովորական կարգով, և պաշտպանական կողմը պետք է մասնակցության իրավունք ունենա«:*[352]

## Գ. Հետևություններ և վերլուծություն

Դիտարկված որոշ դատավարություններ, ներառյալ՝ մեծ հնչեղություն ստացած գործերով, ընթացել են գերլարված մթնոլորտում: Դատական քննությունններն ընդհատվել են ամբաստանյալների և նրանց համախոհների կողմից, ովքեր իրենց անհամաձայնությունն են արտահայտել քրեական վարույթի առնչությամբ: Նրանց վարքագիծը դատական քննության բնականոն ընթացքի ապահովումը դարձրել է դժվարին: Այսպիսի հանգամանքներում, դատական նիստերի դահլիճում նիստը խաթարող վարքագիծը պատժելու նպատակով դատավորները օգտագործել են տարբեր սանկցիաներ, ներառյալ՝ նախազգուշացում, տուգանքի նշանակում և դատական նիստերի դահլիճից հեռացում: Դատական սանկցիաները կիրառվել են ամբաստանյալների, նրանց փաստաբանների և հանրության ներկայացուցիչների, այդ թվում՝ լրագրողների նկատմամբ: Որոշ դեպքերում դատավորները նաև քրեական գործ հարուցելու միջնորդությամբ են դիմել դատախազությանը:

2009 թվականի մարտի 1-ի՝ ՔԴՕ-ում տեղի ունեցած փոփոխություններից հետո թույլատրվեց որոշակի հանգամանքներում անցկացնել դատաքննությունն ամբաստանյալի բացակայությամբ, ամբաստանյալի հեռացումը թույլատրող դրույթները որպես սանկցիա սկսեցին ավելի հաճախակի կիրառություն ստանալ: Նախքան փոփոխությունները, դատավորներն ընդհանուր առմամբ հակված էին կիրառել այլ դատական սանկցիաներ, օրինակ՝ նախազգուշացում և տուգանք, իսկ հեռացումը դիտվում էր որպես բացառիկ միջոց:

Կիրառված սանկցիաների հետ կապված հիմնական մտահոգությունները վերաբերում են դրանց համաչափությանը, պատշաճ ընթացակարգին և կիրառման հետևողականությանը: Դիտարկումների արդյունքում ընդգծվել են նաև դատավարության տարբեր մասնակիցների նկատմամբ կիրառված կոնկրետ սանկցիաներին առնչվող լրացուցիչ մտահոգություններ:

### i. *Համաչափությունը, պատշաճ ընթացակարգը և հետևողականությունը*

Դատական օրենսգրքի համաձայն, եթե դատավորները սանկցիաներ են կիրառում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար, ապա դա պետք է լինի »*համաչափ արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը*«:[353] Ընդհանուր առմամբ, այս սկզբունքները պահպանվել են դատավորների կողմից: Միաժամանակ, դիտորդներն արձանագրել են իրավիճակներ, երբ կիրառված սանկցիաները չեն համապատասխանել խախտման բնույթին: Օրինակ, որոշ

---

[352] Ամբաստանյալի բացակայությամբ իրականացվող դատաքննության իրականացման չափանիշների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (75) 11 բանաձև, 21 մայիսի 1975թ., պարագրաֆ 5:

[353] Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք, հոդված 63:

դեպքերում ամբաստանյալները դատական քննության անցկացման կարգի վերաբերյալ իրենց առարկություններն արտահայտել են դատական նիստերի դահլիճում սովորաբար գործող պահանջներին չենթարկվելու միջոցով, մասնավորապես՝ դատարանի պահանջին հակառակ՝ ոտքի չեն կանգնել կամ չեն նստել: Դատավորները շարունակաբար պատժել են նման անհնազանդությունը՝ ամբաստանյալներին դատական նիստերի դահլիճից հեռացնելու միջոցով:

2009 թվականի հունվարի 21-ին Վերաքննիչ դատարանում տեղի ունեցող նիստի ժամանակ առանց նախազգուշացման որոշում կայացվեց դատական նիստերի դահլիճից հեռացնելու ամբաստանյալ Ս.-ին՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու, այն է՝ դատավորների՝ դահլիճ մուտք գործելիս ոտքի չկանգնելու համար: Դատարանը հետաձգեց նիստը հինգ օրով:[354]

Համաչափությունը կապված է պատշաճ ընթացակարգի պահպանման հետ: Դիտորդները նշել են, որ դատական սանկցիաները դատավորի կողմից երբեմն կիրառվել են հապճեպորեն՝ առանց սանկցիայի ենթարկվող անձի կարծիքը լսելու: Սա իրավախախտներին զրկել է իրենց վարքը բացատրելու, մեղմացնող հայտարարություն անելու կամ դատարանից ներողություն խնդրելու հնարավորությունից: Այն դեպքերում, երբ սանկցիան կիրառվել է ամբաստանյալների նկատմամբ, վերջիններիս պաշտպաններին ոչ միշտ է հնարավորություն ընձեռնվել դիմելու դատարանին իրենց պաշտպանյալների անունից:[355]

Մեկ այլ ընդհանուր խնդիր վերաբերում է սանկցիաների կիրառման հետևողականությանը: Ամբաստանյալների և դատավարության այլ մասնակիցների նույն վարքագիծը պատժվում էր մի դեպքում, սակայն անտեսվում մեկ այլ դեպքում: Նույն դատավորը անհարգալից վերաբերմունքի համար նախատեսվող սանկցիան կարող էր խստությամբ կիրառել որոշակի ժամանակահատվածում, սակայն ավելի ուշ անտեսել նույն վարքագիծը: Թեև սուբյեկտիվության գործոնի առկայությունը կարող է անխուսափելի լինել, դատարանի՝ միմյանցից զգալիորեն տարբերվող գործողությունները բացասաբար են անդրադառնում շահագրգիռ անհատների իրավունքների վրա:[356]

Օրենսդրական դաշտը ևս նպաստում է այս անհետևողականությանը: Ներկայումս Հայաստանի օրենսդրությունը չի պարունակում հստակ սահմանագիծ Քրեական օրենսգրքով պատժելի վարքագծի և այն վարքագծի միջև, որը կհանգեցներ Դատական օրենսգրքով նախատեսված սանկցիաների կիրառմանը: Սա դատավորներին հայեցողություն է տալիս դատական սանկցիայի կիրառման միջոցով անմիջապես պատժելու ենթադրյալ իրավախախտին՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար կամ քրեական գործ հարուցելու նպատակով փաստի մասին հայտնելու դատախազին կամ կիրառել երկուսը միաժամանակ:

---

[354] R.N.141-27.07.2009.
[355] R.N.108-25.11.2008, R.N.112-02.12.2008, R.N.61-04.08.2008, R.N.52-21.07.2008:
[356] R.N.44-11.07.2008, R.N.112-02.12.2008, R.N.121-22.01.2009, R.N.43-08.07.2008:

### *ii. Սանկցիաների կիրառումն ամբաստանյալների և նրանց փաստաբանների նկատմամբ*

Ամբաստանյալների կողմից նիստի բնականոն ընթացքը խոչընդոտող վարքագծի դրսևորումը (ոտքի կանգնելուց կամ նստելուց հրաժարվելը, առանց դատարանի թույլտվության հայտարարություններ անելը, դատավարության մասնակիցների նկատմամբ վիրավորանքներ թույլ տալը և այլն), որպես կանոն, պատժվել է ամբաստանյալներին որոշ ժամանակով դատական նիստերի դահլիճից հեռացնելու ձևով: Դիտորդները ութ դատական նիստերի ընթացքում գրանցել են նման հեռացման 19 դեպք:

Հստակ է, որ ամբաստանյալի հեռացումը դատական նիստերի դահլիճից և դատաքննության շարունակումը նրա բացակայությամբ[357] բացառիկ միջոց է, և այն պետք է այդպիսին դիտվի հենց դատավորների կողմից: Դատավորները պետք է առաջնորդվեն համաչափության սկզբունքով և գնահատեն ամբաստանյալի վարքագծի արդյունքում դատաքննությանը պատճառված վնասի աստիճանը՝ ամբաստանյալի արդար դատաքննության հիմնարար իրավունքների և իրավախախտ վարքագծի ծանրության միջև հավասարակշռություն հաստատելու նպատակով: Դիտարկված որոշ դեպքերում իրականությունն այլ է եղել:

2008թ. դեկտեմբերի 27-ին, 2009թ. հունվարի 9-ին, 2009թ. հունվարի 13-ին, 2009թ. հունվարի 16-ին, 2009թ. հունվարի 30-ին, 2009թ. փետրվարի 12-ին, 2009թ. մարտի 9-ին և 2009թ. մարտի 13-ին, »յոթի գործով«[358] ամբաստանյալները հեռացվել են դատական նիստերի դահլիճից՝ դատավորի՝ դահլիճ մտնելու ժամանակ ոտքի չկանգնելու և դատաքննության արդարության վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու համար:

ՔԴՕ-ում 2009թ. մարտի 1-ին տեղի ունեցած փոփոխություններից հետո, որոնք թույլատրեցին դատավարության շարունակումը հեռացված ամբաստանյալների բացակայությամբ, »յոթի գործով« նախագահող դատավորը կանոնավոր կերպով կիրառում էր դատական նիստերի դահլիճից 10 օրով հեռացնելու սանկցիան՝ մեջբերելով ՔԴՕ-ն:[359] 2009թ. մարտի 9-ին դատավորն այս սանկցիան կիրառեց առանց նախապես զգուշացնելու:

2009թ. մարտի 13-ին դատավորը նկատողություն արեց ամբաստանյալ Գ.-ին՝ դատավորի՝ դատական նիստերի դահլիճ մուտք գործելու ժամանակ ոտքի չկանգնելու համար: Դատավորը հարցրեց, թե արդյո՞ք ամբաստանյալի ոտքի չկանգնելու պատճառը նրա առողջական վիճակն էր: Ամբաստանյալը

[357] ՔԴՕ-ի 314[1](6)-րդ հոդվածը դատավորներին թույլատրում է շարունակել դատաքննությունը, եթե ամբաստանյալը հեռացվում է դատական նիստերի դահլիճից դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար: Դատական սանկցիայի կիրառման հետևանքով անազատության մեջ անցկացված ժամանակն այս դեպքում հանվում է հնարավոր ազատազրկման ժամկետից:

[358] 2008 թ. մարտի 1-2-ին տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ենթադրյալ կազմակերպիչների միացյալ դատավարությունը:

[359] Դատարանը մեջբերեց միայն ՔԴՕ-ն՝ առանց հիշատակելու 2009թ. մարտի 1-ին փոփոխված Դատական օրենսգրքի 63-րդ հոդվածը:

պատասխանեց »ոչ« և խնդրեց հնարավորություն տալ բացատրելու իր վարքագծի պատճառը: Դատավորը թույլ չտվեց ամբաստանյալին հայտարարություն անել և անմիջապես ընթերցեց տաս օր ժամկետով ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելու իր որոշումը:

Երբ »յոթի գործը« մասնատվեց և քննվեց հինգ առանձին դատավարությունների միջոցով, դրան հաջորդող ժամանակահատվածում դատավորները կարծես թե ավելի քիչ էին հակված գործադրելու դատական նիստերի դահլիճի կարգը խախտող վարքագծի համար սանկցիա կիրառելու իրենց լիազորությունները: Հակառակ դատավարական ընթացակարգի պահանջներին, ամբաստանյալ Գ.-ն շարունակում էր ոտքի չկանգնել, սակայն դատավորը ուշադրություն չէր դարձնում այս վարքագծին:

2009թ. ապրիլի 8-ին, 2009թ. ապրիլի 15-ին և 2009թ. ապրիլի 17-ին ամբաստանյալներ Ա.-ն և Ս-ն ոտքի կանգնեցին, երբ դատավորը մուտք գործեց դատական նիստերի դահլիճ և կանգնած մնացին դատական նիստի ողջ ընթացքում: Դատավորը չընդհատեց դատաքննությունը և ոչ մի կերպ չարձագանքեց ամբաստանյալների այս վարքագծին՝ թույլատրելով, որպեսզի նիստը շարունակվի:

Մի քանի դեպքերում, դատավորները պատժել են նաև պաշտպաններին: Երեք դատաքննության ընթացքում չորս սանկցիա է կիրառվել պաշտպանների նկատմամբ: Մեղադրողի նկատմամբ դատական նիստերի դահլիճը լքելու հիմքով սանկցիա է կիրառվել մեկ գործի շրջանակներում (պաշտոնական նախազգուշացման ձևով), այն բանից հետո, երբ ամբաստանյալները դատարանի ուշադրությունը հրավիրել են այդ փաստի վրա:

Որոշ պաշտպաններ ենթարկվել են սանկցիաների՝ դատավորի գործողությունների դեմ առարկելու և դատաքննության՝ իրենց ընկալմամբ անարդարացի լինելու վերաբերյալ հայտարարություններ անելու համար: Միջազգային չափանիշները հստակեցնում են, որ փաստաբանները պետք է կարողանան իրենց մասնագիտական գործառույթներն իրականացնել առանց ահաբեկման կամ հետապնդման ենթարկվելու, ինչպես նաև չպետք է պատժամիջոցների ենթարկվեն այն գործողությունների համար, որոնք կատարել են ճանաչված մասնագիտական պարտականություններին, չափանիշներին և էթիկայի կանոններին համապատասխան:[360] Դատական կազմի և պաշտպանի միջև զարգացող առճակատումը հանգեցնում է անհեթեթ իրավիճակների, որոնք բացասաբար են ազդում արդար դատաքննության իրավունքի վրա:

2009թ. մարտի 16-ին՝ »յոթի գործով« դատական նիստի ժամանակ, պաշտպան Ա.-ն տեղեկացրեց դատարանին, որ իր պաշտպանյալը հրաժարվում է իր ծառայություններից և պատրաստվում է ներգրավել նոր պաշտպանի: Մեղադրողը պաշտպանական կողմին մեղադրեց դատավարությունը ձգձգելու մեջ: Դատավորը

[360] Տե՛ս ՄԱԿ-ի Իրավաբանների դերի վերաբերյալ հիմնարար սկզբունքները (1990), Սկզբունք 16:

հրաժարվեց ընդունել պաշտպանից հրաժարվելը և հրամայեց նրան մնալ նշանակված պաշտպանի կարգավիճակում:[361] Երբ Ա.-ն ընդմիջումից հետո չվերադարձավ դատական նիստերի դահլիճ, դատավորը նրա նկատմամբ սանկցիա կիրառեց՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար, և դիմում ուղարկեց Փաստաբանների պալատին՝ խնդրելով կարգապահական վարույթ հարուցել Ա.-ի դեմ: Ի պատասխան այս որոշման՝ դատական նիստերի դահլիճում ներկա մյուս պաշտպանները համատեղ հայտարարությամբ հանդես եկան՝ նշելով, որ »պաշտպանների դեմ իրականացվում է կազմակերպված արշավ«, և որ նրանք գործնականում զրկված են պատշաճ պաշտպանություն իրականացնելու հնարավորությունից: Բոլոր պաշտպանները ոտքի կանգնեցին և լքեցին դատական նիստերի դահլիճը: Այս դեմարշին դատարանը պատասխանեց բոլոր ներգրավված պաշտպանների նկատմամբ դատական սանկցիայի կիրառմամ, իսկ Փաստաբանների պալատին համապատասխան դիմումներ ուղարկվեցին: Դատական նիստերի դահլիճում ամբաստանյալներից և ոչ ոք ներկա չէր, քանի որ նրանք բոլորն էլ դատավորի կողմից նախապես հեռացվել էին դատական նիստերի դահլիճից՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար:

### *iii. Սանկցիաների կիրառումը հանրության ներկայացուցիչների նկատմամբ*

Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նախատեսված սանկցիաները ժամանակ առ ժամանակ կիրառվել է նաև դահլիճում ներկա գտնվող հանրության այն ներկայացուցիչների նկատմամբ, ովքեր խոչընդոտել են դատավարության ընթացքին: Դատական նիստը խոչընդոտող վարքագիծը ներառել է ամբաստանյալին ծափահարելը, բարձրաձայն մեկնաբանություններ կատարելը և աղմկելը: Թվում էր, որ նման վարքագծի դրսևորմանը նպաստող գործոններից մեկը ներկաների շարքերում ոստիկանության աշխատակիցների (ինչպես համազգեստով, այնպես էլ քաղաքացիական հագուստով) ներկայությունն է եղել, ովքեր վիճաբանել են նիստին ներկա գտնվող հասարակության մյուս անդամների հետ: Դատավորները դատական նիստերի դահլիճից հեռացրել են անհատների կամ մարդկանց ամբողջ շարքեր: Համաչափության և պատշաճ ընթացակարգի վերաբերյալ վերևում նշված նույն խնդիրները հավասարապես կիրառելի են այս դեպքերի նկատմամբ:

Ամբաստանյալ Ե.-ի դատաքննության ժամանակ դատավորը գրեթե յուրաքանչյուր նիստի ընթացքում Ե.-ի մորը հեռացնում էր դատական նիստերի դահլիճից, քանի որ վերջինիս արձագանքը դատաքննության վերաբերյալ զգացմունքային էր:[362] Դատաքննության ընթացքում դատավորը, առանց նախազգուշացնելու, նաև տասնյակ մարդկանց հեռացրեց դատական նիստերի դահլիճից:[363]

---

[361] Դատական դեպարտամենտի մեկնաբանությունների համաձայն՝ պաշտպանից հրաժարվելը դատարանը կարող է ընդունել միայն ՔԴՕ 72-րդ հոդվածի պահանջներն ապահովելու պարագայում, որոնց թվում է նշված է, որ դատարանում պաշտպանից հրաժարվելը հնարավոր է բացառապես նրա ներկայությամբ: Տվյալ դեպքում, դատարանը ամբաստանյալի նկատմամբ կիրառել էր դատական նիստերի դահլիճից հեռացնելը դատական սանկցիան, որի դեպքում ՔԴՕ 69-րդ հոդվածը պարտադրում է պաշտպանի ներկայությունը:

[362] R.N. 83-18.09.2008.

[363] R.N.112-02.12.2008.

Հ.-ի գործով 2008թ. հունիսի 2-ի դատական նիստի ժամանակ դատավորը երկու կնոջ խնդրեց հեռանալ դատական նիստերի դահլիճից, քանի որ նրանք ծիծաղել էին վկաների ցուցմունքների վրա: Ոչ մի նախազգուշացում չէր տրվել:[364]

Երբ ամբաստանյալ Ա.-ն 2008թ. հոկտեմբերի 16-ին զգացմունքային հայտարարություն արեց, ներկաները ծափահարեցին: Դատավորը հրամայեց բոլոր նրանց, ովքեր ծափահարել էին՝ ազատել դահլիճը: Մի կնոջ դատավորը նաև հրամայեց դատարանին հայտնել իր անունը և հասցեն: Դատավորը չհայտարարեց հեռացման իրավական հիմքերը, սանկցիայի ժամկետը, և թե նրան ինչու՞ էին անհրաժեշտ կնոջ ինքնությանը վերաբերող տվյալները:

2009թ. ապրիլի 28-ի դատավարության ժամանակ դահլիճում գտնվող մի անձ դիմեց դատավորին՝ խնդրելով ավելի բարձր խոսել, քանի որ հնարավոր չէր լսել դատավորի խոսքերը: Դատավորը հանդիմանեց այդ անձնավորությանը՝ հարցնելով. »Այդ դու՞ք էիք բողոքում ձայնի վերաբերյալ«: Տղամարդը հաստատեց և բացատրեց, որ նա լսողական խնդիրներ ունի, ուստի իր համար դժվար է լսել դատավորին, երբ վերջինս բավականաչափ բարձր չի խոսում: Դատավորը հրամայեց նրան ազատել դատական նիստերի դահլիճը և ավելացրեց. »Թող միայն նրանք մնան այստեղ, ովքեր լսողության հետ խնդիրներ չունեն և կարող են հետևել դատաքննությանն այն ձևով, ինչպիսին որ այն կա«:[365]

Մի շարք դեպքերում անհարգալից վերաբերմունքի համար սանկցիաները կիրառվել են լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ:[366]

## Դ. Եզրահանգումներ

Չնայած ամբաստանյալների և նրանց համախոհների վարքագիծը որոշ դիտարկված դատավարությունների ընթացքում դատավորներին ենթարկել է ճնշման, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նախատեսված սանկցիաների կիրառումն մի շարք մտահոգությունների տեղիք է տալիս: Որոշ դեպքերում, կիրառված սանկցիան չի համապատասխանել պատժվող իրավախախտմանը: Սանկցիայի կիրառման հետևողականությունը և պատշաճ ընթացակարգի պահպանումը ևս որոշ գործերի ժամանակ խնդրահարույց են թվացել: Այս սանկցիաների կիրառումը հանգեցրել է այն իրողությանը, որ որոշ դեպքերում դատական նիստերն անցկացվել են ամբաստանյալի բացակայությամբ, ինչը դժվար թե կարելի է ցանկալի արդյունք համարել արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից: Դատավորները, միշտ չէ, որ սանկցիա կիրառելու իրենց լիազորությունն օգտագործել են պատշաճ

[364] R.N.27-19.06.2008.
[365] R.N.135-22.06.2009.
[366] Ըստ որոշ տեղեկությունների՝ դատավորները նաև դատախազությանը խնդրել են քրեական գործեր հարուցել առանձին լրագրողների նկատմամբ:

չափավորությամբ և սանկցիայի ենթարկվող անհատի իրավունքների նկատմամբ պատշաճ հարգանքի ցուցաբերմամբ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կշահեր, եթե դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նախատեսված դատական սանկցիան հստակ տարանջատվեր դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նախատեսված քրեական պատասխանատվությունից: Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար նախատեսված քրեական պատասխանատվությունը պետք է վերապահվի այն իրավախախտումների համար, որոնք անհատապես ուղղված են դատավարության առանձին մասնակիցների դեմ և նպատակ ունեն խաթարելու արդարադատության բնականոն ընթացքը: Դատական սանկցիաները պետք է վերաբերեն դատական կանոնների և ընթացակարգերի խախտումներին: Պետք է նկատի ունենալ, որ պաշտպանների համար վարքագիծը պաշտպանյալների նկատմամբ նրանց ունեցած մասնագիտական պարտականությունների մասն է կազմում: Փաստաբանների կողմից ցուցաբերված ցանկացած ոչ էթիկական վարքագիծ պետք է զեկուցվի և լուծվի կարգապահական վարույթի միջոցով:

Խորհուրդ է տրվում կրճատել դատական նիստերի դահլիճից ժամանակավոր հեռացնելու ժամկետները (1-ից 12 ժամ), որը պետք է համաչափ լինի խախտման ծանրությանը, և թույլատրել որոշման նկատմամբ կանոնավոր պարբերականությամբ վերահսկողության իրականացումը: Առաջարկվում է նաև թույլատրել բոլոր դատական սանկցիաների նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը: Դատավորների համար օգտակար կլիներ սույն հարցերի վերաբերյալ վերապատրաստումների անցկացումը՝ որպես շարունակական մասնագիտական կրթության մի մաս:

## Գլուխ 9. Դատավորների անկողմնակալությունը և մասնագիտական վարքագիծը

Դիտորդները գնահատել են, որ գործերի մեծամասնության դեպքում, գործը քննելիս դատավորները պահպանել են անկողմնակալությունը: Այդուհանդերձ, զգալի թվով զեկույցներ բացահայտել են մտահոգություններ՝ կապված դատավորների անկողմնակալության և մասնագիտական վարքագծի հետ: Սույն գլխում ուսումնասիրվել են մեղադրանքի կողմի նկատմամբ հակվածության դրսևորումները և անվայելուչ արտահայտությունները, որոնք կարող են վնասել դատարանների, որպես անկողմնակալ և արժանավայել հաստատությունների վերաբերյալ հանրային ընկալումը:

### Ա. Ներպետական օրենսդրություն

Դատավորների անկողմնակալության սկզբունքը սերտորեն միահյուսված է իշխանությունների տարանջատման և դատական իշխանության անկախության գաղափարների հետ, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ:[367] ՔԴՕ-ն հատուկ նախատեսում է, որ դատարանները պետք է արդար և անկողմնակալ լինեն:[368]

Դատարանի անկողմնակալությանն ու դատավորների մասնագիտական վարքագծին առնչվող խնդիրներն արծարծվում են Դատական օրենսգրքում, որը ինկորպորացնում է այն նորմերի ամբողջությունը, որոնք կազմում են Դատավորի վարքագծի կանոնները: Դատական օրենսգիրքը ներառում է ընդհանուր պահանջ, համաձայն որի՝ դատավորը »*պետք է ձգտի ապահովել դատարանի անկախություն ու անկողմնակալությունը*«,[369] ինչպես նաև մասնավորեցնում է անկողմնակալության բաղկացուցիչ մասերը: Մասնավորապես՝ Դատավորի վարքագծի կանոնները պարտավորեցնում են դատավորին թույլ չտալ որևէ արտաքին ազդեցություն կամ որ նման տպավորություն ստեղծվի, ինչպես նաև չօգտագործել իր պաշտոնը՝ հանուն սեփական կամ երրորդ անձանց շահի:[370] Երբ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի նկատմամբ, կամ շահագրգիռ է գործի ելքով, ապա օրենքի համաձայն պարտավոր է ինքնաբացարկ հայտնել:[371]

Դատավորի վարքագծի կանոնները մի շարք պահանջներ են ներառում՝ դատավորի վերաբերմունքի և մասնագիտական վարքագծի վերաբերյալ: Մասնավորապես, դատավորները պարտավոր են՝ »*համբերատար, արժանապատիվ և կիրթ վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե*«, և երաշխավորել, որ դատարանի աշխատակազմը դրսևորի նմանատիպ վերաբերմունք: [372] Ի լրումն անկողմնակալության ընդհանուր պահանջի՝ Դատավորի վարքագծի կանոնները ներառում են խոսքով կամ վարքով կողմնակալություն կամ խտրական վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև նման տպավորություն ստեղծելու արգելք:[373]

Այն դատավորները, որոնք խախտում են Դատավորի վարքագծի կանոնները, Արդարադատության խորհրդի կողմից կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության,[374] իսկ պատասխանատվության համար հիմք ծառայած վարքագծի համար կարող են նշանակվել տարբեր տույժեր՝ զգուշացումից մինչև Հայաստանի Հանրապետության Նախագահին ուղղված միջնորդություն՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ: [375] Եթե Նախագահը մերժում է այդ միջնորդությունը, ապա կիրառվում է խիստ նկատողություն տույժը:[376]

## Բ. Միջազգային չափանիշներ

[367] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 5 և հոդված 94:
[368] ՔԴՕ, հոդված 23(4):
[369] Դատական օրենսգիրք, հոդված 88:
[370] *Նույն տեղում,* հոդված 89 :
[371] *Նույն տեղում,* հոդված 91:
[372] *Նույն տեղում,* հոդված 90(3) :
[373] *Նույն տեղում*:
[374] *Նույն տեղում,* հոդված 97:
[375] *Նույն տեղում,* հոդված 157:
[376] *Նույն տեղում,* հոդված 166:

Մարդու իրավունքների արդյունավետ իրականացումը կախված է արդարադատության պատշաճ իրականացումից, որն իր հերթին կախված է իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի առկայության հանգամանքից: Դատարանի՝ անկողմնակալ լինելու պահանջը բխում է անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդար և հրապարակային դատաքննության իրավունքից:[377]

Դատարանների անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի Հիմնարար սկզբունքներն ուղղակիորեն հաստատում են դատական անկողմնակալության սկզբունքը,[378] իսկ Բանգալորի՝ Դատական վարքագծի սկզբունքները մասնավորեցնում են սկզբունքի բաղկացուցիչ մասերը, ներառյալ՝ դատական պարտականություններն անաչառ և առանց կանխակալ մոտեցումների իրականացնելու պահանջը, այնպիսի հայտարարություններ անելու արգելքը, որոնք կարող են ազդեցություն ունենալ գործի ելքի վրա, և դատավորի ինքնաբացարկի պահանջը: Բանգալորի Սկզբունքների համաձայն, ի թիվս այլոց, »*Դատավորը պետք է իրականացնի իր պարտականություններն առանց չահի, կողմնապահության և կանխակալ վերաբերմունքի: Դատավորը պետք է երաշխավորի, որ իր վարքագիծը՝ թե դատարանում, թե դրանից դուրս, պահպանում է և ամրապնդում դատավորի և դատական իշխանության նկատմամբ՝ հասարակության, իրավաբանների հանրության և կողմերի վստահությունը*«:[379]

Միջազգային չափանիշները շեշտադրում են, որ արդարադատությունը պետք է առկա լինի թե որպես փաստ, թե որպես ողջամիտ ընկալում: Դատական վարքագծի վերաբերյալ Բանգալորյան սկզբունքներն ուղղակիորեն նախատեսում են, որ արդարադատությունը »*պետք է ոչ միայն իրականացվի, այլ նաև պետք է տպավորություն ստեղծվի, որ այն իրականացվում է*«:[380] ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը պաշտպանում և վերահաստատում է դատական անկողմնակալության չափանիշները, ներառյալ այն պահանջը, որ անկախ դիտորդի մոտ ողջամիտ տպավորություն ստեղծվի, որ դատարանն անկողմնակալ է: Կողմնակալության տպավորությունը կարող է դժգոհության և անարդարության զգացում առաջացնել՝ վտանգելով հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ:[381]

## Գ. Հետևություններ և վերլուծություն

[377] ՄԻՀՀ, հոդված 10,. ՔՔԻՄԴ, հոդված 14(1), ՄԻԵԿ, հոդված 6(1):
[378] Դատարանի անկախության վերաբերյալ ՄԱԿ-ի Հիմնարար սկզբունքներ (1985թ.), Սկզբունք 2: Տե՛ս նաև՝ Դատավորի համընդհանուր կանոնադրություն (1990թ.), հոդված 5:
[379] Դատական վարքագծի վերաբերյալ Բանգալորյան սկզբունքներ (2002թ.), Արժեք 2 (անկողմնակալություն):
[380] Դատական վարքագծի մասին Բանգալորյան սկզբունքներ (2002), Արժեք 3 (ազնվություն), տե՛ս նաև՝ Եվրոպայի դատավորների կանոնադրություն (1997), Դատավորների եվրոպական ընկերակցություն, Սկզբունք 3:
[381] *Thorgeirson v. Iceland,* ՄԻԵԴ վճիռ, 25 հունիսի 1992թ., պարագրաֆ 51, *Fey v. Austria*, ՄԻԵԴ վճիռ, 24 փետրվարի 1993թ., պարագրաֆ 30:

Դիտորդները պետք է նաև պատասխանեին, թե արդյոք, իրենց կարծիքով, դատական նիստի ընթացքում դատավորը պահպանում էր անկողմնակալությունը: Դիտարկված նիստերի 56%-ը դրական են գնահատվել այս առումով, մինչդեռ 42% դեպքերում դիտորդները գտել են, որ դատավորն անկողմնակալ չի եղել: Դիտարկված գործերից 2 տոկոսի վերաբերյալ տեղեկություն չի ստացվել:

Դիտարկված գործերում գլխավոր խնդիրը՝ մեղադրող կողմի նկատմամբ դատավորի հակվածության դրսևորումն էր: Նման կանխակալ վարքագիծը հակասում է անմեղության կանխավարկածին և կողմերի հավասարությանը (տե՛ս 3-րդ և 4-րդ գլուխները վերևում): Դա նաև հարվածում է դատավորների անկողմնակալությանը և դատական իշխանությանն ընդհանրապես, երբ արմատավորվում է այն ընկալումը, որ դատավորներն քայլում են դատախազների հետ »ձեռք ձեռքի տված«:

| |
|---|
| Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանում Գ.-ի ողջ նիստի ընթացքում դատավորը ժպտում էր, երբ ամբաստանյալը կամ նրա պաշտպանը հայտարարություններ էին հնչեցնում կամ վկաներին հարցաքննում: Դատավորը նաև աչքերով կապ էր պահպանում մեղադրողի հետ, և նրանք ժպտում էին միմյանց: Ամեն անգամ, երբ պաշտպանության կողմը միջնորդություն էր ներկայացնում, դատավորը պտտեցնում էր աչքերը՝ նայելով մեղադրողին: Երբեմն, երբ պաշտպանը միջնորդություն էր ներկայացնում, դատավորը մեղադրողին հարցնում էր. »Ի՞նչ անենք«:[382] |

Դիտորդները նաև արձանագրել են դատավորների կողմից ոչ էթիկական վարքագիծ դրսևորելու այլ դեպքեր: Դիտարկված 43 գործերով դիտորդներն արձանագրել են դատարանի կողմից անվայելուչ հայտարարություններ կամ գործողություններ թույլ տալու դեպքեր: Դրանք ներառել են անտարբեր, անտակտ կամ բացահայտ կոպիտ դիտողություններ՝ ուղղված դատաքննության մասնակիցներին կամ հասարակության անդամներին, կամ պարզապես նիստերի դահլիճում գտնվող անձանց չեն վերաբերվել հարգալից: 48 գործերով դիտորդներն արձանագրել են, որ նիստերի դահլիճում դատավորներն ինչ որ մեկի վրա բարձրացրել են իրենց ձայնը:

Հատկանշական է, որ ժամանակ առ ժամանակ, դատավորները ներկաների կողմից արժանացել են թշնամական վերաբերմունքի և ամբաստանյալները չեն ենթարկվել նրանց կարգադրություններին՝ դրանց իսկ իրենց բողոքն արտահայտելով վարույթների վերաբերյալ: Այսպիսի բարդ հանգամանքները կարևորում են դատավորների կողմից անկողմնակալ և պրոֆեսիոնալ վարքագծի դրսևորման անհրաժեշտությունը: Դատական իշխանության նկատմամբ հասարակական հարգանքն ու վստահությունը հնարավոր է պահպանել մասնագիտական վարքագծի ամենաբարձր չափանիշներին հետևելու միջոցով:

[382] R.N.108-25.11.2008.

44 գործերով պաշտպանները դատավորների ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդություններ են ներկայացրել: Այդ միջնորդություններից մեկը բավարարվել է և դատավորը հայտնել է ինքնաբացարկ:[383]

2008թ. օգոստոսի 5-ին ամբաստանյալ Կ.-ն փորձեց հայտարարություն անել: Դատավորը, օգտագործելով »դու« ոչ պատշաճ դերանունը՝ բարկացած ասաց. »Ես չեմ ուզում լսել քեզ: Հերիքա խոսես: Ես քեզ չեմ լսում«: Երբ ամբաստանյալն առարկեց նման վերաբերմունքի արժանանալու դեմ, դատավորը դատական սանկցիա կիրառեց և տուգանք նշանակեց նրա նկատմամբ:[384]

2008թ. հունիսի 27-ին, երբ ամբաստանյալ Ա.-ն ավարտեց ցուցմունք տալը, դատավորը (դիմելով նրան ոչ պատշաճ »դու« դերանունով) ասաց. »Դու այնքան դատարկ ես: Ես կարծում եմ, որ բարձրագույն կրթություն ունեցող անձինք պետք է ավելի լավ կարողանան վերլուծել, բայց դա ակնհայտորեն քեզ չի վերաբերվում«:[385]

Երբ վկա Մ.-ն սկսեց ցուցմունք տալ, դատավորը հարցրեց, թե արդյոք նա թշնամական հարաբերություններ ունի ամբաստանյալի Ա.-ի հանդեպ: Վկան մի փոքր զարմացավ և ցածրաձայն պատասխանեց. »Ոչ, ինչու՞«: Դատավորը հեգնանքով նշեց. »Սովորաբար, հրեաներն են պատասխանի փոխարեն հարցեր տալիս, բայց ակնհայտ է, որ մենք հայերս ավելի լավը չենք«:[386]

Երբ 2008թ. հուլիսի 30-ին պաշտպանը փորձում էր պատասխանել մեղադրողի կողմից իր միջնորդության դեմ հնչեցված առարկությանը, նախագահող դատավորը ընդհատեց նրան և ասաց. »Սա ձեր համար Օպերայի հրապարակը չէ: Սա Վերաքննիչ դատարանն է«:[387]

Երբ Երևանի քրեական դատարանում նիստին ներկա գտնվող անդամները սկսեցին ծափահարել և քաջալերել ամբաստանյալ Մ.-ին, դատարանը, դիմելով ներկաներին, ասաց. »Ես նույնիսկ չեմ ուզում իջնեմ ձեր մակարդակին: Բարեկիրթ վերաբերմունքը ձեր նման մարդկանց համար չէ«: Մեկ այլ առիթով նա բղավեց ներկաների վրա. »Ո՞վ էք դուք: Ո՞վ է ընդհանրապես Ձեզ վրա ուշադրություն դարձնում: Այս նիստը կողմերի համար է, և դուք որևէ իրավունքներ չունեք այստեղ: Եթե դուք այսպես շարունակեք, ես ձեզ այստեղից դուրս կհանեմ և որոշում կկայացնեմ գործը դռնփակ նիստում քննելու վերաբերյալ«: [388]

2008թ. օգոստոսի 20-ի նիստի ընդմիջման ժամանակ դատավորը դիտորդների ներկայությամբ սկսեց քննարկել գործը մեղադրողի հետ: Նա ասաց. »Դա ինձ մոտ պարզապես ծիծաղ է առաջացնում: Ամբաստանյալը անիմաստ բաներ է խոսում և կարծում է, թե ես պատրաստվում եմ հավատալ իրեն… Իսկ նրա մայրը

[383] R.N.130-29.04.2009.
[384] R.N.112-02.12.2008.
[385] R.N.44-11.07.2008.
[386] *Նույն տեղում:*
[387] R.N.64-05.08.2008. Օպերայի հրապարակը մարտի 1-ի ցույցերի վայրն էր:
[388] R.N.83-18.09.2008.

շարունակաբար խոսում է իր տեղից, մի հիմար կին: Ես նույնիսկ չեմ ցանկանում ինձ իջեցնել նրա նման մարդկանց մակարդակին«:"[389]

Լ.-ի նիստի ընթացքում դատավորը մի քանի անգամ բարձրացրեց իր ձայնը պաշտպանի վրա՝ ասելով, որ նստի և լուռ մնա: Երբ դատավորը ճնշում էր գործադրում վկայի վրա, որպեսզի նա պատասխաներ հարցին, պաշտպանն առարկեց: Դատավորը պատասխանեց. »Դուք առարկու՞մ էք: Շարունակեք, դա ձեր խնդիրն է: Առարկեք ամբողջ սրտով«: Այնուհետև նա բղավեց. »Նստիր տեղդ և մի միջամտիր«: Պաշտպանը հրաժարվեց, իսկ դատավորն ասաց. »Մի նստեք, եթե չեք ուզում, ինձ համար միևնույնն է«:[390]

## Դ. Եզրահանգումներ

Դիտարկումները ցույց տվեցին, որ մի շարք դեպքերում դատավորներն այնպես էին վարում դատական նիստերը, որը նրանց անկողմնակալությունը կասկած էր հարուցում: Եղել են նաև իրավիճակներ, երբ դատավորները դատավարության մասնակիցներին և հասարակության ներկայացուցիչներին չեն վերաբերվել պատշաճ հարգանքով: Այս դիտարկումները վերահաստատում են դատավորների համար լրացուցիչ ուսուցում կազմակերպելու, ինչպես նաև նրանց պատասխանատվությունն ապահովող կարգապահական մեխանիզմների խստագույն կիրառման անհրաժեշտությունը: Դատավորների դեմ ներկայացված բողոքները պետք է պատշաճ քննության ենթարկվեն, իսկ այն դատավորները, որոնց վարքագիծն անհամատեղելի է իրենց մասնագիտական էթիկայի կանոնների հետ, պետք է ենթարկվեն կարգապահական պատասխանատվության:[391]

---

[389] *Նույն տեղում:*

[390] R.N.99-09.10.2008.

[391] Այս հարցի առնչությամբ Դատական դեպարտամենտը ներկայացրել է հետևյալ մեկնաբանությունը. *»Գործող օրենսդրության համաձայն՝ դատավորների վարքագծի խախտումների վերաբերյալ հարցերը քննարկման առարկա են դառնում Դատարանների նախագահների խորհրդի Էթիկայի հանձնաժողովում: 2008 թ. Էթիկայի հանձնաժողովում քննարկվել է 7, իսկ 2009 թ. 3 դատավորների վարքագծի վերաբերյալ հարց: Ընդ որում, այդ ընթացքում 2008 թ. մարտի 1-2 դեպքերի հետ կապված քրեական գործերով Էթիկայի հանձնաժողովում որևէ դատավորի հարց չի քննարկվել*«:

# Կոնսոլիդացված առաջարկություններ

## *Օրենսդիրներին և քաղաքականություն մշակողներին*

*Հայաստանի Հանրապետությունում անձնական <u>ազատության իրավունքի</u> և դրան առնչվող այլ երաշխիքների նկատմամբ հարգանքն ամրապնդելու նպատակով՝ օրենսդիրներին և քաղաքականություն իրականացնողներին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

1. Քննարկել ՔԴՕ-ով սահմանված կալանավորման նկատմամբ դատական վերահսկողության և խափանման միջոցի ընտրության ընթացակարգի վերանայման հարցը: Երբ ձերբակալված անձն առաջին անգամ կանգնում է իրավասու դատավորի առջև, դատարանը նախ և առաջ պետք է ստուգի ձերբակալության համար ողջամիտ հիմքերի առկայության և ձերբակալության իրավաչափության հարցը, և այնուհետև միայն որոշի, թե արդյո՞ք մինչև դատաքննությունն սկսելը առկա է խափանման միջոց կիրառելու անհրաժեշտություն: Վերոհիշյալ դատական քննության առնչվող դրույթները ՔԴՕ-ում պետք է ամրագրվեն հետևյալ առաջարկների հիման վրա.

ա. Դատավորները պետք է կիրառեն ողջամիտ կասկածի չափանիշը և գնահատեն ապացույցների առկայությունը, որն օբյեկտիվ դիտորդին կհամոզեր, որ հանցանքը կարող էր կատարած լինել տվյալ անձը:

բ. Դատախազը պարտավոր է բացահայտել այն ապացույցները, որոնք հիմք են հանդիսացել ձերբակալության/կալանք կիրառելու միջնորդության ներկայացման համար:

գ. Նիստի ընթացքում պետք է առաջնորդվել կողմերի հավասարության սկզբունքով, ինչպես նաև ստեղծել մրցակցային միջավայր:

դ. Նիստերը պետք է լինեն դռնբաց՝ ենթարկվելով այն նույն, նեղ սահմանված բացառություններին, որոնք կիրառելի են դատական քննության ժամանակ:

ե. Դատական նիստը պետք է արձանագրվի (բառացի արձանագրում) այնպես, ինչպես դա իրականացվում է դատական քննության ժամանակ:

զ. Ոստիկանության կողմից թույլ տրված հակաիրավական վարքագծի վերաբերյալ ցանկացած հայտարարություն պետք է անմիջապես փոխանցվի իրավասու մարմիններին, այն է՝ դատախազությանը և/կամ ներքին կարգապահական մեխանիզմներին: Նաև ուսումնասիրության պետք է ենթարկվի հատուկ անկախ քննչական մարմնի ստեղծման հարցը (տես գլուխ 5-ի »Եզրահանգումները«):

2. Քննարկել դատական պրակտիկայի վերանայման հարցը և նախաձեռնել համակողմանի քննարկումներ ուղղված առկա այլընտրանքային խափանման միջոցների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև նոր այլընտրանքային միջոցների հնարավոր ներմուծմանը: Այս առումով, ուսումնասիրել ԵԱՀԿ այլ մասնակից պետությունների լավագույն փորձերը:

3. Ուսումնասիրել *habeas corpus* միջնորդությունների պրակտիկայի ներդրման հարցը, ինչը պաշտպանական կողմին իրավունք կընձեռի ցանկացած պահի ուղղակիորեն վիճարկել կալանքը, եթե միջնորդությամբ ներկայացվում է անօրինական կալանավորման վերաբերյալ առերևույթ դեպք: Դատաքննության ընթացքում դատավորը պետք է անհապաղ քննի և ներկայացված *habeas corpus* միջնորդությունների վերաբերյալ որոշում կայացնի:

*<u>Կողմերի հավասարության</u> (գլուխ 4) սկզբունքի նկատմամբ հարգանքն ամրապնդելու նպատակով՝ օրենսդիրներին և քաղաքականություն մշակողներին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

4. Ուսումնասիրել դեպոզիտային ընթացակարգի ներդրման հնարավորությունը՝ վկայի ցուցմունքը մինչև դատաքննությունն սկսելն արձանագրելու համար: Այս ընթացակարգը պետք է կողմերին մրցակցային միջավայրում և մասնագիտացված դատավորի ներկայությամբ հանդիպելու վկային և նրան խաչաձև հարցաքննության ենթարկելու հնարավորություն ընձեռի: Դեպոզիտային ընթացակարգը պետք է հավասարապես մատչելի լինի մեղադրող և պաշտպանական կողմերի համար:

5. Պաշտպանական կողմին պետք է հնարավորություն տրվի գործը քննող դատավորին ուղարկվող դատական գործի նյութերում ընդգրկել իր այն վկաների ցուցակը, որոնք պետք է հարցաքննվեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև գործին կցել իր վկաների գրավոր ցուցմունքները, որոնք հաստատվել են հատուկ դատավորի կողմից՝ դեպոզիտային ընթացակարգի միջոցով:

6. Վկաների և փորձագետների գրավոր ցուցմունքները, որոնք դեպոզիտային ընթացակարգի միջոցով չեն ստացվել, չեն կարող ընթերցվել դատարանում և հիմք ընդունվել դատարանի կողմից, եթե այդ վկաները ցուցմունք չեն տալիս գործի դատական քննության ժամանակ:

7. Հարկավոր է փոփոխություններ կատարել ՔԴՕ-ում բացառելու համար այն անձի գրավոր ցուցմունքների հիման վրա դատավճիռ կայացնելու հնարավորությունը, ով հարցաքննվել է պաշտպանի բացակայությամբ, եթե անգամ այդ անձը հրաժարվել է պաշտպանից, եթե վերջինս դատաքննության ժամանակ չհաստատի իր ցուցմունքների իսկությունը: Եթե ամբաստանյալը դատաքննության ժամանակ հրաժարվում է գրավոր ցուցմունքից, ապա այն պետք է հանվի ապացույցների շարքից:

*<u>Ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքի</u>* (գլուխ 5) *նկատմամբ հարգանքն ամրապնդելու նպատակով՝ օրենսդիրներին և քաղաքականություն մշակողներին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

8. ՔԴՕ-ն պետք է պարունակի հստակ պահանջ, ըստ որի՝ դատավորները պարտավոր են արձագանքել խոշտանգումների և ոչ պատշաճ վերաբերմունքի վերաբերյալ կատարված բոլոր հայտարարություններին, ինչպես նաև փոխանցել այդ տեղեկությունը իրավասու մարմիններին (կամ հատուկ անկախ քննչական մարմնին)՝ արդյունավետ քննություն կատարելու նպատակով:

9. ՔԴՕ-ում ապացույցների անթույլատրելիության վերաբերյալ կանոնները պետք է հստակորեն սահմանեն ապացուցման այն չափանիշները, որոնք անհրաժեշտ են »արատավորված« ապացույցները բացառելու համար: Ամբաստանյալը չպետք է հայտնվի այնպիսի իրավիճակում, երբ խոշտանգման կիրառումը ողջամիտ կասկածից վեր ապացուցելու պարտականությունը դրվի վերջինիս վրա: »Արատավորված« ապացույցի օրինականության նկատմամբ դատավորի ողջամիտ կասկածը պետք է բավական լինի այն բացառելու համար: Հարկավոր է փոփոխություններ կատարել ՔԴՕ-ում, որպեսզի հստակորեն սահմանվի, որ մեղադրողն է կրում ապացույցների ձեռքբերման օրինականությունն ապացուցելու պարտականությունը[392]:

10. Ուսումնասիրել նոր օրենք ընդունելու հնարավորությունը, որը թույլ կտա անկախ մոնիտորինգային մեխանիզմ(ներ)ի միջոցով կանոնավոր ստուգումներ իրականացնել կալանավորվածներին պահելու բոլոր վայրերում: Նման մեխանիզմների ներկայացուցիչները պետք է բոլոր կալանավորներին անարգել և գաղտնի պայմաններում այցելելու հնարավորություն ունենան: Նրանց այցելությունները պետք է լինեն կանոնավոր, և այցելությունների վերաբերյալ նրանք պետք է կանոնավոր հրապարակային զեկույցներ ներկայացնեն:

*Դատական քննության արագացված կարգի միջոցով* (գլուխ 7) *արդարադատության արդյունավետությունը բարձրացնելու և արդար դատաքննության իրավունքը չվտանգելու նպատակով՝ օրենսդիրներին և քաղաքականություն մշակողներին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

11. Քննարկել դատաքննության վաղ փուլում ամբաստանյալի կողմից մեղքը ընդունելու վերաբերյալ կողմերի միջև բանակցություններ վարելու բաղադրիչի ներդրման հնարավորությունը, ինչը իրապես կկրճատի քրեական վարույթը և նախնական կալանքի ժամկետը: Այս նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել ԵԱՀԿ մյուս մասնակից երկրների պրակտիկան՝ ապահովելու համար մեղադրյալի և տուժողների իրավունքները:

[392] Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված իր մեկնաբանություններում, Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ ՔԴՕ նոր նախագծի համաձայն՝ ապացույցների թույլատրելիության ապացուցման բեռն ընկած է վարույթն իրականացնող մարմնի վրա:

*Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի* (գլուխ 8) *կարգավորումը և դրա համար սանկցիայի կիրառումը միջազգային չափանիշներին առավել համապատասխանեցնելու նպատակով՝ օրենսդիրներին և քաղաքականություն մշակողներին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

12. Փոփոխություններ կատարել ՔԴՕ-ում և Քրեական օրենսգրքում, որպեսզի հստակորեն տարանջատվեն դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար նախատեսված սանկցիաների կիրառման հիմքերը:

ա. Խորհուրդ է տրվում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու դեպքերում քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ դատական միջնորդությունները թույլատրել միայն այն լուրջ հանցանքների ժամանակ, որոնք անձնապես ուղղված են դատաքննության առանձին մասնակիցների դեմ և նպատակ ունեն խաթարելու արդարադատության ընթացքը:

բ. Դատական սանկցիաները պետք է կիրառվեն դատական նիստերի կարգի և ընթացակարգերի խախտման դեպքերի համար:

գ. Դատական նիստերի դահլիճից ժամանակավոր հեռացումը պետք է սահմանափակվի շատ կարճ ժամկետներով (1-12 ժամ), և համաչափ լինի կատարված խախտման ծանրությանը: Որոշումը պետք է կանոնավոր պարբերականությամբ վերանայվի:

դ. Առաջարկվում է թույլատրել բոլոր դատական սանկցիաների կիրառման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողություն[393]:

ե. Մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում իրականացված գործողությունների հետ կապված խնդիրները պետք է լուծվեն միայն համապատասխան կարգապահական վարույթներին դիմելու միջոցով:

***Դատական իշխանություններին***

*Հայաստանի Հանրապետությունում անձնական ազատության իրավունքը և դրան առնչվող այլ երաշխիքները ուժեղացնելու նպատակով՝ դատավորներին և դատական իշխանության ներկայացուցիչներին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

[393] Զեկույցի աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված իր մեկնաբանություններում Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ ՔԴՕ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը նախատեսում է դատական նիստերից հեռացնելու մասին որոշման դեմ բողոք բերելու իրավունքը, որը կարող է իրագործվել որոշման հրապարակումից 3 օրվա ընթացքում:

13. Կալանավորման հարցի վերաբերյալ ցանկացած բողոք կալանավորված անձի ներկայությամբ պետք է անհապաղ քննության առնվի:

14. Դատաքննության ընթացքում կալանավորման հարցերի հետ կապված միջնորդությունների վերաբերյալ նախագահող դատավորը պետք է որոշում կայացնի առանց անպատեհ ձգձգումների:

15. Կալանքի վերաբերյալ ցանկացած դատական որոշում պետք է լինի հիմնավորված և պարունակի հետևյալը.

ա. համապատասխան գործի ապացույցները և անհատական փաստական հանգամանքները, որոնք հանգեցրել են այն եզրահանգմանը, որ առկա է մինչ դատական քննության սկիզբը կալանավորում կիրառելու որոշման անհրաժեշտություն,

բ. բացատրություն, թե ինչու՞ խափանման այլ միջոցներ չեն կարող կիրառվել տվյալ անհատական հանգամանքներում,

գ. պաշտպանության կողմի փաստարկների ուսումնասիրություն,

դ. անօրինական վերաբերմունքի կամ խոշտանգման վերաբերյալ ցանկացած հայտարարության կապակցությամբ ձեռնարկված գործողությունները,

ե. ամբաստանյալի նկատմամբ շարունակվող ողջամիտ կասկածի առկայության ուսումնասիրություն բոլոր այն դեպքերում, երբ որոշում է ընդունվում կալանավորումը երկարացնելու վերաբերյալ: Կալանքի ժամկետների երկարաձգումը չի կարող տեղի ունենալ միայն այն նույն փաստարկների հիման վրա, որոնք օգտագործվել էին կալանքի նախորդ ժամկետը սահմանելու համար:

16. Խափանման միջոց ընտրելու Հայաստանի Հանրապետության դատարանների պրակտիկան պետք է արտացոլի Վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ-ի նախադեպերը: Դատավորները պետք է կիրառեն կալանավորման այլընտրանքային խափանման միջոցները:

*<u>Հրապարակային դատաքննության իրավունքի</u> (գլուխ 2) նկատմամբ հարգանքն ամրապնդելու նպատակով՝ դատական իշխանության ներկայացուցիչներին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

17. Վճռաբեկ դատարանը և Դատարանների նախագահների խորհուրդը պետք է ուսումնասիրեն դատարանների անվտանգության ստանդարտացված կանոններ ընդունելու հարցը: Այդ կանոնները պետք է հստակորեն սահմանեն դատարաններում տարբեր մակարդակների անվտանգության միջոցներ ներդնելու ընթացակարգերը և դրանց համար պատասխանատու մարմիններին, ինչպես նաև

անվտանգության տարբեր մակարդակների կիրառման հետևանքները, ներառյալ՝ կարգադրիչների ծառայության համապատասխան պարտականությունները: Կոնկրետ դատավարությունների անվտանգության մակարդակի վերաբերյալ հանրությունը պետք է իրազեկվի: Դատարանի շենքում անվտանգության ուժեղացնելու նպատակով ոստիկանության ուժերը պետք է օգտագործվեն միայն այդ կանոններով նախատեսված բացառիկ հանգամանքներում:

18. Դատարանների՝ որպես ծառայություն մատուցող կառույցների կառավարումը կատարելագործելու նպատակով դատական նիստերի ժամանակացույցի և դատավարությունների կազմակերպման հետ կապված այլ խնդիրների մասին տեղեկությունների հաղորդման իրավասությունը հարկավոր է հանձնել դատարանի գրասենյակում հատուկ նշանակված աշխատակցին: Վերջինս պետք է անարգել կերպով մատչելի լինի հանրության համար:

19. Նշանակված դատական քննությունների մասին տեղեկությունները պետք է հասանելի լինեն հանրությանը: Հարկավոր է լրացուցիչ ջանքեր գործադրել այդ տեղեկությունների ճշգրտությունը, այդ թվում՝ ինտերնետում և դատարանների գրասենյակներում առկա տեղեկությունների համապատասխանեցումն ապահովելու համար:

20. Դատարանները պարտավոր են հաշվի առնել նախատեսված դատական նիստերի նկատմամբ հասարակական հնարավոր հետաքրքրությունը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել այդ հետաքրքրությունը բավարարելու համար, ներառյալ՝ համապատասխան դատական նիստերի դահլիճի հատկացումը և անհրաժեշտ տեխնիկական միջոցների օգտագործումը:

21. Դատական նիստերի ձայնագրումը պետք է իրականացվի ամբողջությամբ: Դատական նիստերի ձայնագրումն ընտրողաբար՝ ընդունելի գործելաոճ չէ: Դատավորները չպետք է կառավարեն ձայնագրման համակարգերն իրենց նստատեղերից: Այս տեխնիկական գործառույթները պետք է հանձնվեն համապատասխան տեխնիկական անձնակազմին: Դատարաններին պետք է հստակ ուղեցույցներ տրվեն՝ ձայնագրման կանոնների և ձայնագրությունների մատչելիության վերաբերյալ:

22. Ձայնագրման սարքավորումներից բացի, դատական նիստերի դահլիճները, անհրաժեշտության դեպքում, պետք է հագեցված լինեն ձայնի ուժեղացման համակարգերով: Վերջիններս պետք է պատշաճ ձևով պահպանվեն:

*<u>Անմեղության կանխավարկածի</u> (գլուխ 3) սկզբունքի նկատմամբ հարգանքն ամրապնդելու նպատակով՝ դատական իշխանության ներկայացուցիչներինն ներկայացվում հետևյալ առաջարկները.*

23. Դատավորները պետք է ձեռնպահ մնան այնպիսի մեկնաբանություններ կատարելուց, որոնք կարտահայտեն իրենց անձնական դիրքորոշումն ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ: Մինչև ըստ էության դատավճռի

կայացումը, դատարանի կողմից ընդունված ընթացակարգային որոշումները չպետք է պարունակեն ամբաստանյալների մեղավորությունն ակնարկող դրույթներ:

24. Ամբաստանյալների նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցները յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնված լինեն վտանգի անհատականացված գնահատումների վրա: Այդ միջոցները պետք է նրաշխավորեն անմեղության կանխավարկածը. բացի այդ, հարկ է գործադրել բոլոր ջանքերը՝ նվաստացուցիչ կամ վարկաբեկող վերաբերմունքը բացառելու համար: Դատական նիստերի կարգը պահպանելու նպատակով կիրառվող անվտանգության ընդհանուր միջոցները չպետք է ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ տպավորություն թողնեն:

25. Դատարանում անվտանգության միջոցների կիրառման նկատմամբ վերահսկողությունը պետք է իրականացնի դատավորը: Երբ ամբաստանյալը ներկայանում է դատարան, պաշտպանության կողմը պետք է հնարավորություն ունենա ուղղակիորեն միջնորդություն ներկայացնել դատավորին՝ անվտանգության անհատական միջոցների խնդրի վերաբերյալ: Դատավորը նույն դատական նիստի ընթացքում պարտավոր է որոշում կայացնել այդ միջնորդության վերաբերյալ:

*<u>Կողմերի հավասարության</u> (գլուխ 4) սկզբունքի նկատմամբ հարգանքն ամրապնդելու նպատակով՝ դատական իշխանություններին ներկայացվում են հետևյալ առաջարկությունները.*

26. Դատավորները քրեական գործի երկու կողմերի հանդեպ պետք է ցուցաբերեն հավասար վերաբերմունք: Այս կանոնի խախտումը պետք է հիմք կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսանա:

27. Պաշտպանության կողմին պետք է հնարավորություն տրվի դատական նիստը նախագահող դատավորի կողմից ստացված դատական գործում ընդգրկել իր վկաների ցուցակը, որոնք պետք է հարցաքննվեն դատաքննության ընթացքում: Դատարանը պետք է դատակոչի մեղադրական և պաշտպանական կողմերի ցուցակներում ընդգրկված բոլոր վկաներին: Լրացուցիչ վկաներ դատակոչելու վերաբերյալ կողմերի ներկայացրած ցանկացած միջնորդություն դատավորի կողմից պետք է քննվի անհատական հիմունքներով, իսկ մերժումը պետք է լինի հիմնավորված: Լրացուցիչ ապացույցներ ուսումնասիրելու վերաբերյալ կողմերի ներկայացրած միջնորդությունները պետք է քննվեն նույն դատական նիստի ընթացքում:

28. Այն դեպքերում, երբ ցուցմունք տվող վկաները միայն ոստիկանության աշխատակիցներ են, և նրանց ցուցմունքներն իրենց բնույթով վճռորոշ են, ապա պաշտպանական կողմին հարկավոր է բավարար հնարավորություններ ընձեռել՝ ոստիկան վկաներին դատարանում հարցաքննելու համար: Նման հարցաքննության բացակայության դեպքում, դատարանը չի կարող հիմք ընդունել նրանց գրավոր ցուցմունքները:

*Ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքի (գլուխ 5) նկատմամբ հարգանքն ամրապնդելու նպատակով՝ դատավորներին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները:*

29. Դատավորները պետք է բացառեն ցանկացած ապացույց, որն արտավորված է խոշտանգման և ոչ պատշաճ վերաբերմունքի առնչությամբ կատարված հայտարարություններով, եթե մեղադրանքի կողմին չի հաջողվում փարատել ապացույցի թույլատրելիության վերաբերյալ եղած կասկածները:

*Կողմերի հավասարության (գլուխ 4) և պաշտպանության իրավունքների (գլուխ 6), ինչպես նաև դատավորների անկողմնակալություն և մասնագիտական վարքագիծն (գլուխ 9) ամրապնդելու նպատակով՝ դատավորներին են ներկայացվում հետևյալ առաջարկները.*

30. Դատավորները պետք է հավատարիմ մնան կողմերի հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքներին:

31. Դատավորների դեմ բերված բողոքները պետք է ենթարկվեն պատշաճ քննության, իսկ այն դատավորների նկատմամբ, ում վարքագիծն անհամատեղելի է Դատական օրենսգրքի հետ, պետք է կիրառվեն կարգապահական տույժի միջոցներ:

*Դատական քննության արագացված կարգի* (գլուխ 7) *միջոցով արդարադատության արդյունավետությունը բարձրացնելու և արդար դատաքննության իրավունքը չվտանգելու նպատակով՝ դատավորներին են ներկայացվում հետևյալ առաջարկները.*

32. Դատավորները պետք է ապահովեն, որ գոյություն ունեցող երաշխիքները գործադրվում են անշեղորեն՝ երաշխավորելու համար, որ ամբաստանյալներն իրենց մեղքն ընդունում և դատավարության արագացված կարգի կիրառմանը համաձայնում են գիտակցաբար և ինքնակամ:

***Դատական դասընթացներ և վերապատրաստումներ իրականացնողներին***

33. Ձերբակալման և կալանքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատավորներին հարկավոր է հաճախակի և կանոնավոր կերպով դասընթացներ տրամադրել հետևյալ թեմաների վերաբերյալ.

ա. Կալանքի նկատմամբ դատական վերահսկողության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) համապատասխան նախադեպային իրավունքը:

բ. ԵԱՀԿ այլ մասնակից երկրների լավագույն պրակտիկան, ներառյալ՝ այն երկրների, որտեղ գոյություն ունեն մասնագիտացված դատավորներ, ովքեր զբաղվում են մինչդատական քննության փուլում հիմնարար իրավունքների սահմանափակումը լիազորելու հարցերով, մասնավորապես՝ որոշումներ են կայացնում ձերբակալման և կալանքի երկարաձգման վերաբերյալ:

34. Դատավորներին լրացուցիչ դասընթացներ պետք է տրամադրվեն կողմերի հավասարության սկզբունքի, պաշտպանության իրավունքի, ինչպես նաև անկողմնակալության՝ այդ թվում անկողմնակալության տեսանելիության անհրաժեշտության սկզբունքի գործնական նշանակության վերաբերյալ:

*Արդարադատության նախարարությանը*

35. ՔԴՕ-ում փոփոխություններ պատրաստելիս, վերոհիշյալ առաջարկները պետք է լուրջ ուշադրության արժանանան:

*<u>Հրապարակային դատավարության իրավունքի</u> (գլուխ 2) նկատմամբ հարգանքն ամրապնդելու նպատակով՝ Արդարադատության նախարարությանն են ներկայացվում հետևյալ առաջարկները.*

36. Որպես կանոն, դատարանի շենքում և դատարանի տարածքում անվտանգությունը պետք է ապահովվի կարգադրիչների ծառայության կողմից: Դատական կարգադրիչները նաև պետք է աջակցեն հանրությանը՝ հրապարակային դատաքննություններին մասնակցելու իր իրավունքից օգտվելիս: Այդ նպատակով,

ա. Արդարադատության նախարարությունը, Դատարանների նախագահների խորհրդի հետ համատեղ, պետք է հրապարակի կարգադրիչների ծառայության Վարքագծի կանոնակարգ, որը հստակորեն կամրագրի կարգադրիչների՝ դատավորի, դատարանի անձնակազմի, դատաքննության մասնակիցների և հանրության նկատմամբ իրավունքները և մասնագիտական պարտականությունները[394]:

բ. Կարգադրիչների ծառայությունը պետք է տեխնիկապես զինված լինի և հմտացած լինի անվտանգության ժամանակից միջոցների կիրառման գործում՝ դատարանի շենքում ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար:

գ. Դատական կարգադրիչները պետք է օժտված լինեն սահմանափակ և հստակորեն սահմանված ոստիկանական լիազորություններով, որը

[394] Զեկույց աշխատանքային տարբերակի վերաբերյալ ներկայացված իր մեկնաբանություններում Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ ներկայումս մշակվում են դատական կարգադրիչների վարքագծի կանոնները:

կարող է օգտագործվել միայն այն դեպքերում, երբ անվտանգության կանոնների խախտման փորձ է ձեռնարկվում: Վարչական և դատական վերահսկողությունը հնարավոր դարձնելու նպատակով՝ յուրաքանչյուր նման դեպք հարկավոր է պատշաճ արձանագրել:

37. Ինքնությունը հաստատող փաստաթղթի բացակայությունն ինքնին չպետք է հիմք հանդիսանա հրապարակային դատաքննությանը ներկա գտնվելու իրավունքի սահմանափակման համար:

### *Իրավապահ մարմիններին*

*Հայաստանում անձնական __ազատության իրավունքը__ (գլուխ 1) և դրան առնչվող այլ երաշխիքներն ամրապնդելու նպատակով՝ իրավապահ մարմիններին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

38. Պաշտպաններին պետք է անմիջապես հնարավորություն տրվի ծանոթանալու ոստիկանության կողմից կազմված իրենց պաշտպանյալների ձերբակալության ժամանակի և հանգամանքների վերաբերյալ բոլոր արձանագրություններին:

*__Ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքի__ (գլուխ 5) երաշխիքներն ամրապնդելու նպատակով՝ իրավապահ մարմիններին են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

39. Իրավապահ մարմինների ներկայացուցիչները, ինչպես նաև բժշկական անձնակազմը և ձերբակալված անձանց պահելու համար պատասխանատու ծառայողները պետք է համապատասխան ցուցումներ և գիտելիքներ ստանան խոշտանգումների կիրառման անթույլատրելիությունից բխող իրենց պարտականությունների մասին:

### *Փաստաբանների պալատին/Փաստաբանների միությանը*

*__Ինքնուրույն կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու__ (գլուխ 6) իրավունքի մատչելիությունը բարելավելու նպատակով՝ Փաստաբանների պալատին/Փաստաբանների միությանն են ներկայացվում հետևյալ առաջարկությունները.*

40. Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայությունները պետք է բարելավվեն դասընթացների կազմակերպման և այլ միջոցներով՝ ըստ անհրաժեշտության:

41. Փաստաբանների պալատը, Արդարադատության նախարարության և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ, պետք է ուսումնասիրեն Իրավական օգնության խորհրդի ստեղծման հարցը, որը կսահմանի իրավական օգնություն տրամադրելու քաղաքականությունը: